

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

* * * — Ազգը քեզի՛ հետ է Լիբանանի հայութիւն 353

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ 357

ԸՆԿԵՐԱԲԱՐՈՅԱԿԱՆ

ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ — Պատերազմի բարոյականը..... 364

ՊԱՏՄԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐԷՆ ԶՅՆՅ. ՊԵՐԹԻՉԼԵԱՆ — Աղօթաբոյր եւ հոգեխօս մատեանը..... 372

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ — Գրագետ Բենիամին Նուրիկեանէն
յամեցող տաքուկ շունչ մը 378

ԱՐԽԻՒԱՅԻՆ

ԽԱՉԱՏՈՐ ՏՈՒՄԱՆԵԱՆ — 1915-ի Մեծ Եղեռնի ականատես՝
Խաչատուր Տումանեանի յուշերը 386

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ 393

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 396

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ 397

ՏՕՆԱԿԱՆ 415

ԹՈՐԳՈՍ ԵՊՍ. ՏՕՆՈՅԵԱՆ — Աստուածամայրը՝ Լիբանանին... 418

90-ԱՄԵԱԿ ԴՊՐԵՎԱՆՔԻ 423

ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԹԻՆՔՃԵԱՆ — Տեսողական Հաղորդութիւն..... 424


ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎՐԴ. ՍԱՂՏԸՃԵԱՆ — Կաթողիկոսութեան
բաբախուն սիրտը..... 427

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԵՐՆԷՉԵԱՆ — Մեր հոգեւոր ծննդավայրին՝
Դպրեվանքին..... 429

ՄԻՋ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ 432

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ 433

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ 441



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՄՍԱԳՐԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆ ԿՐԿԿԻՈՅ

ՁԹ. ՏԱՐԻ 2020

ՕԳՈՍՏՈՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 9-10

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱԶԳԸ ՔԵԶԻ՝ ՀԵՏ Է ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ՝

«Փա՛նժ քեզ, Աստուած, փա՛նժ քեզ. յաղաքս ամենայնի, Տէր, փա՛նժ քեզ»: Մեր ժողովուրդի գաւակները կը հրաւիրեմ մեր եկեղեցւոյ աղօթփին այս պարզ սակայն խորիմաստ բառերով գոհութիւն ու փառք տալու մեր բոլորին Արարիչ Երկնաւոր Հօր: Միայն մեր դժուարութեան ու նեղութեան մէջ չդառնանք Աստուծոյ, այլ՝ միշտ: Փառք տանք Աստուծոյ մեր կեանքին, մեր ունեցած շնորհներուն, մեր կարելիութիւններուն ու յաջողութեան համար: Առանց Աստուծոյ պայծառակերպիչ ներկայութեան մեր կեանքը կը կորսնցնէ իր գոյութեան իմաստն ու նպատակը:

Այսօր, կ'ուզեմ երեք հաստատումներ կատարել, եւ ապա, հակիրճ կերպով անդրադառնալ իւրաքանչիւրին մասին:

Առաջին. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ, ՄԵՐ ՈՂՋ ԱԶԳԸ ՔԵԶԻ՝ ՀԵՏ Է: Արդ, մի՛ յուսահատիր, այլ՝ հաւատա՛ ու մնացիր վնասկամ եւ վերականգնումի յոյսով ու կամֆով քալէ առաջ:

Իր պատմութեան ամենէն դաժան պայմանները կ'ապրի այսօր Լիբանանի հայութիւնը: Ո՛չ միայն ականջալուր եղանք պայթումին յառաջացու-

* Սոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի պատգամին՝ խօսուած Կիրակի, 9 Օգոստոսին:

ցած մահերուն, վիրաւորներուն ու քանդումներուն մասին, այլ նաեւ՝ ակնհաստես վկան: Ինչ որ տեսայ, վստահ եմ որ եղածը շատ աւելին է. ինչ որ լսեցի, տակաւին շատ աւելին կայ ըսելիք ու լսելիք: Փաստօրէն պատահածը սովորական պայթում մը չէր, այլ՝ օտարներուն վկայութեամբ Հերոշիմայէն յետոյ այլապէս Հերոշիմա մը: Որպէս Լիբանանի նախկին առաջնորդ, 17 տարիներ ապրած եմ քաղաքացիական պատերազմի ամենէն ծանր օրերը: Ծառայած եմ մեր ժողովուրդին յանախ հրթիռներու տակ ու ակններու մէջէն փախելով, նոյնիսկ այն անգամ փամփուշտ մը ստացած եմ: Այդ օրերուն նաեւ ակնհաստես եղած եմ ումբակոծումներու պատճառած վնասներուն: Սակայն, ինչ որ պատահեցաւ մի քանի օրեր առաջ աննախընթաց էր՝ իր տարողութեամբ, ծաւալով եւ պատճառած գոհերով ու քանդումներով: Արդարեւ, Պէյրութէն դէպի հիւսիս, արեւելք եւ հարաւ տարածուող շրջաններուն ու նաեւ Պէյրութի, Էշրէֆիէի, Մար-Միսայէի, Հայաշէնի, Պուրն Համուտի, Հանընի, Տորայի եւ մինչեւ «Թըռչնոց բոյն» երկարող շրջաններու հայահոծ թաղերուն մէջ մահ ու սարսափ, քանդում ու աներ տիրեց մի քանի վայրկեանի ընթացքին:

Այս դառն կացութեան դիմաց կարելի չէ չցաւիլ, չյուզուիլ եւ չպոռկալ, թէ ինչո՞ւ նման ոճրային արարքներ տեղի կ'ունենան մարդ արածներու կողմէ, գիտակցաբար կամ անգիտակցաբար: Ես ալ մեր ժողովուրդի գաւակներուն հետ ցաւեցայ եւ յուզուեցայ: Թող Աստուած իր երկնքի արքայութեան մէջ ընդունի մեր համայնքի եւ Լիբանանի բոլոր նահատակներու հոգիները: Թող Աստուած շուտափոյթ ապաքինում պարգևէ բոլոր վիրաւորներուն:

Ժամանակը հասած է, որ այս դժուար օրերը շրջանցենք եւ սկսինք վերականգնումի գործընթացքին: Կը վստահեցնեմ ձեզի որ մեր ազգը ձեզի հետ՝ գորակից, աջակից ու գործակից ձեզի: Վերականգնումը, սիրելի Լիբանանի հայութիւն, մեր կեանքին առջեւ բացուած միակ նամբան է, ուրկէ մենք պիտի փախնք միասնաբար, ձեռք-ձեռքի, սիրտ-սիրտի, խոր հաւատով, ամուր վնասկամութեամբ ու վառ տեսիլքով: Կը վստահեցնեմ ձեզի, որ մեր եկեղեցին, մեր միաբանութիւնը եւ ես անձնապէս պիտի փախնք ձեզի հետ միասին ու պիտի կատարենք ինչ որ կարելի է, որպէսզի շուտով Լիբանանի հայութիւնը դարմանէ իր վերքերը, ամոքէ իր ցաւը եւ վերահաստատէ իր առանցքային տեղն ու դերը մեր ազգի կեանքէն ներս:

Երկրորդ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԶՕՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒ ՍՓԻԻՌԻՆ ՀԶՕՐԱՑՈՒՄՆ Է: Սա լոգունգ չէ, զգացական արտայայտութիւն չէ, տեսական յղացք չէ, այլ՝ փաստացի իրականութիւն: Լիբանանի հայութիւնը անցնող տասնամեակներուն, մեր ազգի կեանքի բոլոր բնագաւառներէն ներս վնասադրոշմ դեր ունեցած է. իսկ Հայաստանի վերանկախացումէն յետոյ, թէ՛ Ղարաբաղի ազատագրական պայքարին եւ թէ՛ Հայաստանի հայրենաշինութեան մէջ իր նշանակալից

ներդրումն է կատարած: Ահա թե ինչու, Լիբանանի հայութեան վերականգնումը համահայկական տազնապ, ծրագիր ու յանձնառութիւն պէտք է դառնայ:

Այս սպասումէն մեկնած եւ այս տեսլականով, Հայրապետական Մեր կոչին մէջ հրաւիրեցինք մեր ազգի բոլոր զաւակները ու բոլոր կառոյցները մասնակից դառնալու Լիբանանի հայութեան վերականգնումի հաւաքական աշխատանքներուն: Լիբանանի հայութիւնը տեսական թելադրանքներու կամ զգացական արտայայտութիւններու կարիքը չունի, այլ՝ հրամայական ու անմիջական անհրաժեշտութիւնը ունի նիւթական աջակցութեան: Կարիքները բազմազան են ու այլազան: Լիբանանի հայութեան վերականգնումի աշխատանքը պիտի ըլլայ հաւաքաբար, միասնաբար եւ ծրագրուած ու հետեւողական կերպով՝ մասնակցութեամբ ու օժանդակութեամբ Հայաստանի ու Արցախի պետութեան եւ մեր ազգի բոլոր կազմակերպութիւններուն ու զաւակներուն: Այս լրջութեամբ ու յանձնառութեամբ անհրաժեշտ է լծուիլ աշխատանքի:

Լիբանանէն ներս վերականգնումի աշխատանքը պիտի կատարուի երեք համայնքներու, կուսակցութիւններու ու բարեսիրական միութիւններու միասնական նիւթով: Աշխատանքները պէտք է կատարուին ծրագրուած ձեւով, իսկ ստացուած գումարներուն գործածութիւնը՝ թափանցիկ ու պատասխանատու եւ համադրուած ու համարատու կերպով: Այս է իմ սպասումս: Մենք միշտ այսպէս գործած ենք որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն եւ այս մօտեցումով պիտի հետեւինք կատարելիք աշխատանքներուն:

Այս առիթով իմ խոր գոհունակութիւնս կ'ուզեմ յայտնել, որ Հայաստանի ու Սփիւռքի մեր պետական ու հոգեւոր բարձրաստիճան պատասխանատուները, մեր կազմակերպութիւններու ներկայացուցիչները ու նաեւ օտարներ իրենց զօրակցութիւնը յայտնեցին Լիբանանի հայութեան, ինչպէս նաեւ իրենց պատրաստակամութիւնը օժանդակութեան: Անհրաժեշտ է, որ թէ՛ կատարուելիք նուիրատուութիւնները եւ թէ՛ Լիբանանի մէջ կատարուելիք աշխատանքները պարագայական չըլլան, այլ՝ ծրագրուած ու հետեւողական:

Երրորդ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ Է, ԱՅՈ՛Ւ, ՍԱԿԱՅՆ ԴԷՄ Է՛ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՕՆՆԵՐԸ ԶԱՐԱՇԱՀՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ: Վերջին շուրջ վեց ամիսներու ընթացքին, յաջորդական երեք տազնապներ դիմագրաւեց Լիբանանը՝ Պսակաճեւ Ժահրի տարածում, տնտեսական տազնապի ստեղծում եւ այս վերջին պայթումը: Յստակօրէն կ'ուզեմ ընդգծել, թէ վերջին երկու տազնապներու պատասխանատուները պետական պաշտօններ գրաւած անձերուն՝ իրենց պաշտօնին նկատմամբ ունեցած անպատասխանատու ու անպարկեշտ վերաբերումին, համարատուութեան պակասին եւ փտածութեան հետեւանք են:

Հարց կու տանք, ո՞ր է ժողովուրդին գումարը որ վստահուած է

դրամատուներուն. ինչպէ՞ս եւ ի՞նչ նպատակներու այդ գումարները գործածուեցան: Այսօր, ժողովուրդը գործնապէս իր գումարին սեփականատէրը չէ: Ամիսներ կ'անցնին, սակայն ժողովուրդին դեմ գործուած մեղքին խոստովանութիւնը չի կատարուիր, ժողովուրդին դրամը շահագործած կամ անփոյթ կերպով գործածած անձերը կամ կառոյցները պատասխանատուութեան չեն կանչուիր: Ժողովուրդը հաշիւ կը պահանջէ:

Ինչ կը վերաբերի նաւահանգիստին մէջ պատահած ռերային արարքին, հարց կու տանք, բոլո՛րս, ինչպէ՞ս տարիներ շարունակ մեծ քանակութեան պայթուցիկ ու թունալից նիւթեր կը պահուին առանց նախզգուշական միջոցներու, քաջ գիտնալով անոնց վտանգալից ըլլալը: Սա ի՞նչ անբարոյ ու անխիղճ վերաբերում է իրենց պատասխանատուութեան նկատմամբ: Այս ահաւոր ռիսիկն ետին կեցող անձերը ի՞նչ խիղճով կը դիտեն իրենց պատճառած մահերը, վիրաւորները, քանդումները...: Ժողովուրդը հաշիւ կը պահանջէ եւ շուտո՛վ:

Միշտ ըսած ենք ու կը կրկնենք, եկեղեցին ժողովուրդին հետ է, իսկ եկեղեցականը, առաքեալին բնորոշումով, Քրիստոսի դեսպանն է (Բ.Կր 5.20): Ես չեմ կրնար լուր մնալ ժողովուրդը կեղեքող, ժողովուրդին տնտեսական կեանքը քանդող ու ապահովութիւնը վտանգող այս ռիսկներուն դիմաց: Մի քանի օրեր առաջ Լիբանանի նախագահը յայտարարեց, թէ Լիբանանի դատարանները բաց պիտի ըլլան բոլորին առջեւ: Կը յուսանք ու կը սպասենք: Սակայն, վստահ եղէ՛ք որ Լիբանանի դատարանները բաւարար տեղ պիտի չունենան դատեալները ընդունելու...:

Լիբանանի ժողովուրդը ոտքի ելաւ, սակայն տակաւին ազնիւ կը գտնուի: Զգո՛յ՛, երբ ժողովուրդը վճռական կերպով փողոց իջնէ, փտածութեան մէջ խրած պատասխանատուներու աթոռները կը սկսին շարժիլ: Դիտեցէ՛ք ազգերու անցեալի ու ներկայի պատմութիւնը: Ժողովուրդը ենթակայ չէ պետական մարդոց, այլ՝ պետական մարդիկը իրենք ենթակայ են ու համարատու գիրենք ընտրող ժողովուրդին եւ բոլորս ենթակայ ենք երկրին օրէնքներուն: Հետեւաբար, Մենք կը պահանջենք, որ Լիբանանի տնտեսական վատտողը կացութիւնը շուտով իր լուծման ընթացքը գտնէ, ինչպէս նաեւ Պէյրութի պայթումին ետին գտնուող անձերը խստագոյն պատիժը կրեն:

Սիրելի ժողովուրդ հայոց, եկէ՛ք դարձեալ ու միշտ դառնանք Աստուծոյ եւ մեր եկեղեցւոյ աղօթքին բառերով ըսենք. «Տէ՛ր, երես մի՛ դարձրներ մեզմէ: Տէր բարերար, կ'աղաչենք, օգնական եղիր մեզի: կը խնդրենք, որ խաղաղութեան հրեշտակդ դրկես, որպէսզի մեզի պահպանէ փորձութիւններէ: Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի. Ամէն»:

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ *

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Թեքեեան Մշակութային Միութեան 65-ամեակին,
«Զարթօնք» օրաթերթի հրատարակութեան 75-ամեակին եւ
Վահան Թեքեեան Վարժարանի 60-ամեակին առթիւ)

Հոգեկան խոր գոհունակութեամբ իմացանք Թեքեեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմնին Մեզի ուղղած նամակէն, որ յառաջիկայ Նոյեմբերի 23-ին պիտի նշուի Թեքեեան Մշակութային Միութեան հաստատման 65-ամեակը, "Զարթօնք" օրաթերթի լոյս ընծայման 75-ամեակը եւ Վահան Թեքեեան Վարժարանի հիմնադրութեան 60-ամեակը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք յիշեալ երեք ամեակները, ինչպէս նաեւ այն բոլոր ազգայինները, որոնք իրենց ծառայութեամբ ու նուիրումով իրագործեցին ու արժեւորեցին այս ամեակները մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Սփիւռքի տարածքին հայ ժողովուրդը կրցաւ իր ինքնութիւնը պահել ու գոյատեւել շնորհիւ հայ կեանքի խարիսխը կազմող գօրեղ սիւներուն, որոնց մէջ հիմնական տեղ կը գրաւեն եկեղեցին, դպրոցը եւ մշակոյթը իր բոլոր բնագաւառներով՝ մամուլէն սկսեալ մինչեւ մշակութային միութիւններն ու հաստատութիւնները:

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԲ.*:

Յետադարձ ակնարկ մը Լիբանանի մէջ գործող Թեքէեան Մշակութային Միութեան գործունէութեան, "Զարթօնք"ի առաքելութեան եւ Վահան Թեքէեան Վարժարանի կազմաւորած մարդուժին, մեր սրտերը կը լեցնէ արդար ուրախութեամբ ու կը վերանորոգէ մեր հաւատքը շարունակելու մեր հաւաքական երթը դէպի պայծառ ապագայ:

Արդարեւ, Թեքէեան Մշակութային Միութիւն "Զարթօնք" Վահան Թեքէեան Վարժարան եռեակը *"Յարութեան շունչ"* ով տոգորուած, նոր աւիւն սրկեց մեր ժողովուրդին երակներուն մէջ: Անոր պատրաստած նուիրեալներու հոյլը հասակ առաւ Վահան Թեքէեան Վարժարանի գրասեղաններուն վրայ, ուր նորափոխիք ու պատանի մեր գաւակները հայօրէն կազմաւորուեցան եւ ուսմամբ ու գիտութեամբ զինուեցան: Թեքէեան Մշակութային Միութեան անդաստանին մէջ մեր երիտասարդներն ու երիտասարդուհիները հայ մշակոյթի կենսաբոյր նեկտարը ստացան ու անով առաւել եւս հարստացան ու հարստացուցին մեր ժողովուրդի մշակոյթն ու մշակութային կեանքը: Եւ վերջապէս, մեր մտաւորականներն ու հանրային գործիչները գրիչ ի ձեռին "Զարթօնք"ի ճամբով պայքարեցան ի խնդրի մեր ժողովուրդի վերածնունդին ու անոր արդար իրաւունքներու ձեռքբերման ու պատնէշ բարձրացուցին Սփիւռքի մէջ մեր ժողովուրդին սպառնացող ձուլման, թէ մեր ոսկեղնիկի աղաւաղման վտանգին դիմաց:

Հոգեկան անհուն գոհունակութեամբ կ'ուզենք արձանագրել, որ "Թեքէեան" անունով մկրտուած բանակը իր ազգակերտումի ու հայապահպանման առաքելութիւնը ի գործ դրաւ մեր սուրբ եկեղեցւոյ հովանիին ներքեւ, որովհետեւ հաւատաց, բանաստեղծին բառերով – այն բանաստեղծին, որուն անունը անմահացուց – որ *"Եկեղեցին հայկական բարձր բե'րդն է հաւատքին իմ պայտերու..."*:

Յոբելինական այս ցնծալի առիթներով հարկ է մեր յարգանքի առաջին տուրքը ընծայել մշակութային ու կրթական այս երեք կառոյցներու հիմնադիրներուն, որոնք ի գին մեծ գոհողութիւններու լծուեցան հայակերտումի նուիրական առաքելութեան, որպէս հիմք ունենալով մշակոյթը, մամուլն ու դպրոցը:

Յարգանք բոլոր անոնց, վարչական անդամներ, խմբագիրներ, տնօրէններ, ուսուցիչներ թէ խնամակալ մարմիններ, որոնք իրենց փոխանցուած մշակոյթի ու կրթութեան ջախը վառ պահեցին Լիբանանի հայութեան կեանքէն ներս:

Եւ վերջապէս գնահատանք բոլոր անոնց, որոնք թիկունք կանգնեցան Թեքէեան Մշակութային Միութեան, "Զարթօնք" օրաթերթին եւ Վահան Թեքէեան Վարժարանին, որպէսզի անոնք կարենան յարատեւ ջրտուքով ծաղկուն պահել մեր ժողովուրդի ազգային, կրթական, մշակութային ու ընկերային կեանքի անդաստանը, եւ անոր բարիքները բաշխել համայն մեր ժողովուրդի գաւակներուն:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր հովանիին ներքեւ պահէ Թեքէեան Մշակութային Միութեան անդամները, "Զարթօնք"ի խմբագիրներն ու աշխատակիցները, Վահան Թեքէեան Վարժարանի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը, հոգաբարձութիւնն ու աշակերտութիւնը:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 25-ն Հոկտեմբեր, 2012 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԿԶ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(«Բագին» ամսագրի հիմնադրութեան 50-ամեակին առթիւ)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով կ'ողջունենք ձեզ՝ «Բագին» ամսագրի հիմնադրութեան 50-ամեակին առիթով:

Այսօր տօն է հայ գրականութեան, բայց յատկապէս՝ այս 50-ամեայ հանդէսին աշխարհացրիւ ու հայրենաբնակ մեծ ընտանիքին համար: Բացառիկ եւ իր տեսակին մէջ իւրայատուկ տօն մը, որովհետեւ հինգ տասնամեակներու վրայ երկարող իր հարուստ կենսագրութեամբ, բայց մանաւանդ իր բեղուն գրական վաստակով «Բագին» իրաւամբ եղաւ ոչ միայն սփիւռքահայ, այլեւ՝ հայ նորագոյն գրականութեան կենսայորդ աղբիւրներէն մէկը: Արդարեւ, «Բագին»ը դարձաւ հայ մշակոյթի անդաստանին գուլպա ջուր մատակարարող ամենէն յորդահոս աղբիւրներէն մէկը: Գեղարուեստական գրականութեան ծիրէն ներս ան դարձաւ հաւաքական ճիգերու, ամբողջական խանդավառութեան եւ հետեւողական աշխատանքի վառ հնոց մը: Հայ կեանքէն ներս ան դարձաւ հայ մշակոյթի ու դպրութեան հոգեմտաւոր արժէքներու կենսագործման նուիրուած նորաշունչ ու մշտանորոգ առաքելութիւն մը, որ յաջողեցաւ իր շուրջ համախմբել սփիւռքահայ գրականութեան վաւերական դէմքերէն սկսեալ մինչեւ երիտասարդ խոստմնալից ուժերը:

Մեր նորագոյն պատմութեան մէջ, թիւով քիչ չեն կարճատեւ կամ աւելի երկար իրենց կեանքով մեր համայնական կեանքը շնչաւորած ու զայն հոգեմտաւոր արժէքներով հունաւորած գրական ամսաթերթերն ու հանդէսները: Զօպանեանի «Օտարիկ»էն մինչեւ «Մենք» ու «Անի», «Ակօս» ու «Հայրենիք» ամսագիրներէն մինչեւ «Բագին» երկարող "Հայ տիպ ու տառ"ի ոսկեշրթային վրայ վերջին հինգ տասնամեակներուն բարդուած օղակներուն մէջ, անկասկած, այս 50-ամեայ գրական հաւաքական լուրջ աշխատանքը եղաւ ու կը մնայ

հայ արդի գրականության կալուածէն ներս իւրայատուկ ներկայութիւն մը, Հայաստան-Սփիւռք գործակցութեան զօրեղ կամուրջ մը եւ արժանաւոր ջահակիրներէն մէկը սերունդէ-սերունդ փոխանցուած հայ դպրութեան անմար ջահին:

«*Բազին*»ը չսահմանափակուեցաւ միայն սփիւռքահայ գրականութեան նոր թափ ու թոխչք տալու իր առաքելութեամբ: Ան բացուեցաւ հայրենի գրականութեան եւ աննախապաշար դատողութեամբ ու հայ գրողին ու մամուլին վայել պարկէշտ խստապահանջութեամբ արձագանգեց նորագոյն նուաճումներուն, քաջութիւնը ունենալով միաժամանակ որոմը անջատել ատոք հասկերէն, խորթը՝ հարազատէն եւ կեղծը՝ իրաւէն: Ան կրցաւ քայլ պահել ժամանակին հետ՝ համաշխարհային գրականութեան նորագոյն շարժումները, ուղղութիւններն ու նուաճումները դարձնելով սեփականութիւնը հայ ընթերցողին: «*Բազին*»ը դարձաւ նաեւ դպրոց, յատուկ կարեւորութեամբ ու տեսլապաշտ ոգեւորութեամբ ան գուրգուրաց երիտասարդ գրողներու վրայ, որոնք աճեցան ու թրծուեցան «*Բազին*»ի քուրային մէջ:

Գոյատեւման ու առաւել ծաղկումի «*Բազին*»ի նպատակասլաց յաղթերթին մէջ մեծ ու անփոխարինելի եղաւ ամսագրի հիմնադիր ու հովանաւոր կազմակերպութեան՝ Համազգային Կրթական եւ Մշակութային Միութեան նիւթաբարոյական դերը: Ժամանակի փոթորիկներն ու մարտահրաւերները յաղթահարած «*Բազին*»ը վերանորոգ հաւատքով ու վճռականութեամբ կը շարունակէ իր առաքելութիւնը՝ հաւատարիմ իր հիմնադիրներուն նուիրական ուղիին:

«*Բազին*»ի հիմնադրութեան 50-ամեակին առիթով, բարձր կը գնահատենք «*Բազին*»ի հիմնադիրներուն վաստակը ու հետագայ սերունդներուն գրական ներդրումը եւ յաջողութիւն կը մաղթենք ամսագրի աշխատակիցներուն ու աջակիցներուն:

Մեր մաղթանքն է, որ «*Բազին*»ը իր անմար կրակով լոյս ու ջերմութիւն բաշխէ մեր ժողովուրդին՝ ի Հայաստանի եւ ի սփիւռս աշխարհի:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Հայրապետական Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 4-ն Դեկտեմբերի 2012 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիկին Սատա Չարիքեանին ծննդեան 90 ամեակին առիթով)

Միրելի՛ Տիկին Չարիքեան,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական սիրով կ'ողջունենք Ձեզ: Արդարեւ, խոր գոհունակութեամբ իմացանք Գերաշնորհ Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի Մեզի ուղղած նամակէն, որ այս տարի կը բոլորէք Ձեր ծննդեան 90-ամեակը:

Առաջին հերթին, բարի տարեդարձ կը մաղթենք Ձեզի: Կը հայցենք Ամենաբարին Աստուծմէ, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ եւ երկար տարիներ միշտ շրջապատուած Ձեր սիրելի զաւակներով, հարազատներով ու բարեկամներով: Այս առիթով, ուրախութեամբ կը յիշենք Մեր այցելութիւնը Վենեզուելայի մեր սիրելի գաղութին, որու ընթացքին հոգեկան գոհունակութիւնը ունեցանք անձնապէս ծանօթանալու Ձեզի, եւ վայելելու Ձեր եւ Ձեր զաւակներուն յարգանքն ու ջերմ ընդունելութիւնը:

Արդարեւ, քաջատեղեակ ենք, որ մեր ազգին ու եկեղեցւոյ նկատմամբ Ձեր ունեցած սերն ու նախանձախնդրութիւնը դուք ժառանգած էք Ձեր ազգանուէր ծնողներէն: Վենեզուելայի մեր զաւակները ականատեսի վկայութեամբ կը հաստատեն, որ դուք կրցաք այդ սերն ու նախանձախնդրութիւնը միշտ արծարծ պահել եւ հետագային Ձեր ամուսնոյն, հանգուցեալ Ստեփան Չարիքեանին հետ միասին զանոնք ի սպաս դնել Վենեզուելայի մեր սիրելի գաղութի կազմակերպման, զարգացման ու բարգաւաճման:

Դուք Ձեր ծառայութեամբ եւ ազգին ու եկեղեցւոյ օգտակար ըլլալու նախանձախնդրութեամբ դարձաք սիրելի մեր գաղութին համար: Դուք նաեւ դարձաք նուիրեալ մայր՝ Ձեր զաւակները դաստիարակելով ազգային ոգիով ու անոնց փոխանցելով մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներն ու ասանդութիւնները:

Թող Աստուած վարձահատոյց ըլլայ Ձեզի Ձեր երկար տարիներու գոհողութիւններուն համար եւ Իր օրհնութեան ու հովանիին ներքեւ պահէ Ձեզ եւ Ձեր սիրելի զաւակները՝ Չարեհը, Սրբուհին եւ Մարթօն ու իրենց ընտանիքները:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*5 Դեկտեմբեր 2012
Անթիլիաս, Լիբանան*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Սարգիս Քհնյ. Ազթագուղեանին ծաղկեայ սեւ փիլոն կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդ՝ Գե-
րաշնորհ Տ. Օշական Արք. Չոլոյեանի խնդրանքին այսու Հայրապետական
Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԾԱՂԿԵԱՅ ՍԵՒ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողու-
թեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդի-
սանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝
հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօ-
րացնէ Ձեզ՝ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 15-ն Յունուարի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅՃԷ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Նիկոլ Մուսախանեանին, «Ասպետ»ի կարգի
շքանշան ստանալու առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջու-
նենք Ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավան-
քէն:

Հոգեկան խոր գոհունակութեամբ կարդացինք Թեհրանի Հայոց Թեմի
Առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի վկայութիւնը՝ երկար տարի-

ներ շարունակ թեմէն ներս Ձեր ունեցած նուիրեալ ու հետեւողական գործունէութեան մասին: Արդարեւ, Ձեր ողջ կեանքի ընթացքին, անձնական աշխատանքներու կողքին, կարելոր տեղ տուած էք մանաւանդ ազգային-եկեղեցական, ընկերային-հասարակական եւ կրթական-մշակութային ծառայութեան Աղաջարէն մինչեւ Թեհրան, ինչպէս նաեւ Ձեր գործօն մասնակցութեամբ կարելոր ներդրում ունեցած թէ՛ Ազգ. Առաջնորդարանի եւ թէ՛ Ձեր անդամակցած միութիւններու ու մարմիններու ազգաշէն գործունէութեան մէջ:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանի խնդրանքին, եւ անոր միացնելով Մեր բարձր գնահատանքը, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր ընտանիքի անդամներուն պարզեւէ քաջատող կեանք, գործոց առատ յաջողութիւն ու անսպառ երջանկութիւն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 8-ն Մարտի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅՃԸ.*



ԸՆԿԵՐԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՆԸ*

Ներկայ աշխարհի ընկերությունը յուզող հրատապ հարցերու շարքին առանցքային տեղ կը գրաւեն, այսպէս կոչուած բարոյագիտական ու ընկերային խնդիրները, տագնապներն ու չարիքները: Առաւել կամ նուազ չափով բոլոր կրօններուն, մշակոյթներուն ու ընկերութիւններուն պատկանող այս երեւոյթներուն նկատմամբ տարբեր մօտեցումներ, արժեզափեր ու արժեւորումներ կը տրուին: Այսպէս, եթէ սեռային հարցերուն առնչուած խնդիրները տարօրինակ, անբնական եւ անընդունելի կը թուին որոշ ընկերութիւններու ու միջավայրերու, ուրիշներու համար՝ բնական: Եթէ որոշ պետութիւններ այս հարցերուն նկատմամբ խիստ միջոցներու կը դիմեն, այլ պետութիւններ զանոնք օրինականացուցած են: Եւ այսպէս, կարելի է թուել այն հակադիր մօտեցումները, որոնք առկայ են զանազան ընկերութիւններու ու կրօններու կեանքէն ներս: Ինչ կը վերաբերի բարոյագիտական ու ընկերային կոչուող հարցերուն, անոնք առնչուած են սեռային յարաբերութենէն սկսեալ մինչեւ կենցաղային այլ խնդիրներու, ինչպէս նաեւ տուեալ եկեղեցիներու հաւատքին, հաւատալիքներուն եւ աւանդութիւններուն, որոնք խոտոր կը համեմատին աւանդաբար անցեալէն ժամանգուած տեսակէտներուն, մօտեցումներուն ու գործելակերպերուն:

Եկեղեցիներ տեսակէտներ ունին յիշեալ հարցերուն գծով, որոնք հիմնաւորուած են եկեղեցիներու դաւանական, աստուածաբանական ու ծիսական ուսուցումներուն եւ աւանդութիւններուն վրայ: Նոյնիսկ նոյն եկեղեցւոյ մէջ տեսակէտներու ու մօտեցումներու տարբերութիւն գոյութիւն ունի, ինչ որ յաճախ պատճառ դարձած է ներքին բեւեռացումներու ու նոյնիսկ բաժանումներու: Այս կացութեան դիմաց կարգ մը եկեղեցիներ զգուշացած են խիստ կեցուածք որդեգրել (օրինակ Անկլիքան եւ Լուտերական եկեղեցիները)՝ խուսափելու համար ներքին բաժանումներէ:

Ո՞ր է հայ եկեղեցին ներկայ ընկերութիւնը յուզող ընկերային ու բարոյական հարցերու նկատմամբ: Փաստօրէն հայ եկեղեցին այսօր ներկայութիւն է աշխարհի բոլոր կողմերը եւ մեր ժողովուրդի զաւակները կ'ապրին զանազան ընկերութիւններու մէջ եւ անմիջականօրէն ենթակայ են նաեւ մեր մատնանշած երեւոյթներուն: Համաշխարհայնացած ներկայ

* Sean Mcdowel, Ethix, Being Bold In A Whatever World, USA, 2006.

ընկերության մեջ, ուր փաստորէն սահմաններ ու սահմանագծեր գոյութիւն չունին, այլեւս դժուար է ըսել՝ «այս կամ այդ հարցը մեր հարցը չէ»: Մեր կեանքէն ներս եւս կը տեսնենք յիշեալ երեսոյթներու այս կամ այն կերպ ներկայութիւնը, յատկապէս արեւմտեան գաղութներէն ներս: Այս կացութեան դիմաց մեր եկեղեցին չի կրնար լուռ մնալ, ինչպէս Վեհափառ Հայրապետը յաճախակի կերպով թէ՛ իր պատգամներուն եւ թէ՛ գրութիւններուն մէջ շեշտած է: «Հասկ»ի էջերուն վրայ յաճախ պիտի անդրադառնանք յիշեալ խնդիրներուն: Գոհ կը մնանք, որ այս խնդիրներուն ծանօթ անձեր եւս գրեն մեզի: Կ'ուզենք կարեւորութեամբ յիշեցնել, որ այս գծով արտայայտուած տեսակէտները չեն ներկայացներ ոչ մեր եկեղեցւոյ եւ ոչ ալ «Հասկ»ի պաշտօնական տեսակէտը:

ՆՊԱՏԱԿԸ

Հասկնալ պատերազմի մասին Աստուածաշնչական հիմունքները եւ սորվիլ, թէ ի՛նչպէս պէտք է կիրառել Սուրբ գրային սկզբունքները զինուորական յատուկ ընդհարումի ժամանակ:

ՄԵՐ ՍՈՐՎ ԵՒ ԻՔ ԴԱՍԸ

1) *Համեմատել եւ հակադրել պատերազմի մասին քրիստոնէական երեք գլխաւոր տեսութիւնները:*

2) *Ի՛նչպէս օգտագործել հաստատուած չափանիշ մը, որոշելու համար թէ տուեալ պատերազմը արդար է:*

3) *Աստուածաշնչական հեռանկարով ի՛նչպէս կարելի է գնահատել ահաբեկիչներու դէմ մղուած պատերազմը:*

Նիւ եորքի զոյգ աշտարակներու փլուզումէն հազիւ 18 ամիսներ ետք, Ամերիկեան Պետութիւնը Իրաքի դէմ լուրջ յարձակում մը սկսաւ:

Պատերազմը սկսելէ 11 օրեր ետք, օրուան նախագահ՝ Ճորճ Պուշ «Իրաքը ազատագրելու գործողութեան» մասին իր խօսքին մէջ հետեւեալը կը տեղեկացնէր ժողովուրդին, ըսելով. «Մեր պետութիւնը 11 Սեպտեմբեր 2001-ին յարձակումի ենթարկուելէ ետք, որոշում կայացուց որ պիտի չարտօնէ ահաբեկիչներուն եւ ահաբեկիչ պետութիւններուն, որ դաւադրութիւններ ծրագրեն, աճին ու զօրանան, մինչ մենք ձեռնաձայ կը մնանք...: Ամէն պարագայի, այսօր իսկ գործի անցնելով՝ ապագայի հաշտոյն անհաշիւ կեանքեր կը փրկենք»:

Այս պատերազմին մէջ Ամերիկայի ներգրաւուելը զինք պաշտպանողներուն կողմէ արդարացուեցաւ, որպէս բռնատէր Մատամ Հոսէյնը կասեցընելու բարոյական պարտաւորութիւն, որ իր կարգին դաշնակից էր ահաբեկչական իմբակցութիւններու, ինչպէս նաեւ անձամբ արտադրող մըն էր զանգուածային կործանարար զէնքերու (որպէս թէ):

Բայց շատեր չհամոզուելով, որ Մատամ Հոսէյնը վերահաս սպառնալիք

մըն է, անդրադարձան որ այդ յարձակումը ինքնին շեղում մըն էր Ամերիկայի Միացեալ Նահանգներու ահաբեկիչներու վրայ ծաւալած պատերազմէն:

Պահ մը երեւակայեցէք, թէ դասարանային բանավէճ մը կ'ունենաք Իրաքի մէջ տեղի ունեցող պատերազմի բարոյականին շուրջ: Որպէս քրիստոնեայ ի՞նչպէս պիտի գնահատես Ամերիկայի ներկայութիւնը այս ընդհարումին մէջ: Անցեալին, Մատամի գանգուածային կործանարար գէնքերու օգտագործումը, անոր Ամերիկայի դէմ ունեցած ատելավառ արտայայտութիւններն ու Իսրայէլի մէջ ինքնասպանական գործողութիւններուն նիւթապէս օժանդակելը արդեօք կ'արդարացնէ՞ Ամերիկայի դէպի Իրաք ներխուժումը, թէ ասիկա պարզապէս զինուորական ամբարտաւանութեան օրինակ մըն է:

Ի՞նչ է մեր ըրածը. արդեօք աշխարհին համար ոստիկանութիւն կ'ընենք եւ վտանգի՞ կը մատնենք մեր (ամերիկացի) զինուորներուն կեանքը, հոն՝ ուր Ամերիկային չի պատկանիր:

Քրիստոնեայ աշակերտը ի՞նչ պէտք է ընէ.–

ա) Արդեօք պէ՞տք է պաշտպանէ իր պետութիւնը, թէ՞, պէտք է բողոքէ:

բ) Ի՞նչ հիման վրայ բարոյական դատաստան մը պէտք է կատարես:

գ) Ի՞նչպէս պիտի համաձայնեցնես աստուածաշնչական սկզբունքները այդ քննարկումին մէջ:

դ) Եւ իբրեւ քրիստոնեայ ի՞նչպէս պէտք է մտածես պատերազմի մասին:

Մինչ կը պատրաստուիս բանավէճդ ներկայացնելու, ուրիշ երեք քրիստոնեայ աշակերտներ ալ կը պատրաստուին դասարանին մէջ ներկայացնել իրենց դիրքն ու կեցուածքը այդ նիւթին առնչութեամբ: Եւ աշակերտներէն մէկուն երէց եղբայրը ներկայիս (Ամերիկեան) բանակին մէջ կը ծառայէ:

Քրիստոնեան, որուն եղբայրը բանակին մէջ կը ծառայէ.

«Ես կը հաւատամ, որ մեր սերունդը կը զարգանայ աշխարհի մը մէջ, որ մեծապէս կը տարբերի նախորդ սերունդներէն: Աշխարհը շատ վտանգաւոր վայր մըն է եւ բազմաթիւ օտար ազգերու առաջնորդներ ոչինչով կանգ պիտի առնեն կործանելու համար մեր ազատութիւնն ու կեանքի ձեւը: Պատերազմը կարեւոր է մենք մեզ բռնապետերէ պաշտպանելու համար, ինչպէս նաեւ՝ սրբագրելու բազմաթիւ անարդարութիւններ, որոնք կիրառուած են ընդդէմ ժողովրդական զանգուածներու, ամբողջ աշխարհին մէջ: Աւելին, հռոմէացիներուն ուղղուած նամակին մէջ յստակ կը նշուի, թէ պետութիւնը ոյժ պէտք է բանեցնէ. եւ այնքան ատեն, որ մենք երկրի մը նոյն պետութեան քաղաքացիներն ենք, պէտք է զօրավիզ կանգնինք ու պաշտպանենք մեր բանակը: Նաեւ համամիտ եմ եւ կը պաշտպանեմ այն համոզումը, որ թշնամին եւ անոր պատճառելիք վնասները կանխարգիլելու նպատակով կատարուած պետական յարձակումները (pre-emptive) անհրաժեշտ են, երբ վերահաս սպառնալիք մը կայ»:

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԱԿԵՐՏԸ

«Զգուշաւոր աստուածաշնչական ընթերցում մը, ցոյց պիտի տայ, որ Յի-

սուս երբեք պիտի չպաշտպանէ պատերազմը: Ան սորվեցուց իր հետեւորդներուն, որ միւս երեսն ալ դարձնեն եւ վրէժխնդրութիւնը ձգեն Աստուծոյ: Յիսուս երբեք ալ վայրագութիւնը հոգեւոր եւ կառավարական միջոցներու օգտագործման համար չվաւերացուց: Իրականութեան մէջ, ան իր լերան քարոզին մէջ, ըսաւ. «Երանի՛ անոնք, որոնք խաղաղութեան հաստատման համար կ'աշխատին» (Մտ 5.9), ինչ որ յստակօրէն կը մերժէ անոնք, որոնք նեցուկ կը կանգնին ու կը պաշտպանեն որեւէ տեսակի զինուորական պատերազմ: Պատերազմը ոչ միայն կը հակասէ աստուածաշնչական ուսուցումներուն, այլեւ կը քայքայէ մարդկային ընկերութիւնն ու կեանքը: Ամէն կեանք սուրբ է եւ երբեք ընդունելի չէ յօտարակամօրէն ուրիշի մը կեանքը խլելը: Եւ ոչ միայն իրաքի վրայ կատարուած պատերազմը արդարացի չէ, այլեւ ամէն տեսակ վայրագութիւն նոյնպէս սխալ է»:

ԵՐՐՈՐԴ ԱՇԱԿԵՐՏԸ

Ես կը հաւատամ, որ միակ արդարացուցիչ պատերազմները ինքնապաշտպանութեան համար մղուածներն են: Տիմոթէոսի ուղղուած նամակը յստակ ցոյց կու տայ, որ մենք պէտք պաշտպանենք մեր ընտանիքները: Նոյնպէս կը հաւատամ, որ իսկական կառավարող պետական իշխանութիւնը բարոյական իրաւունքն ունի պաշտպանելու իր երկրի սահմանները թշնամական նախադրձակութիւններու դէմ: Ասկէ դուրս, որեւէ զինուորական նախադրձակ բռնատիրական ոյժի կիրառումը ո՛չ կրնամ պաշտպանել եւ ոչ ալ՝ արդարացնել, բացի, երբ ատիկա ուրիշ պետութեան մը կողմէ սկսուած ըլլայ:

Ուստի, միակ արդարացուցիչ պատերազմները անոնք են, ինչպէս օրինակ Համաշխարհային երկրորդ պատերազմը, ուր դաշնակից ուժերը խմբուեցան՝ յաղթելու համար Նացիներուն: Այնքան ատեն, որ Իրաքը ուղղակիօրէն չյարձակեցաւ Ամերիկայի վրայ, վիճելի է, եթէ երբեք իրաւունքը ունի ինք ներխուժելու այնտեղ:

Վերոյիշեալ երեք տեսակէտերէն ո՞ր մէկուն աւելի համաձայն կը գտնէք դուք ձեզ: Յստակօրէն այնքան ատեն, որ իրար կը հակասեն, ապա չեն կրնար բոլորը ճիշդ ըլլալ: Բայց ո՞ր մէկը առաւել չափով կը պատշաճի Աստուածաշնչական ընդհանուր պատգամին: Եւ ի՞նչ պէտք է ըլլայ քրիստոնեային կեցուածքը պատերազմի մասին:

Ըստ էութեան պատերազմի կապակցութեամբ երեք յայտնի տեսակէտեր կան, որոնք են՝

- ա) Գործօն քաղաքականութեան ջատագովութիւնը,
- բ) Խաղաղութիւնը (Խաղաղապաշտութիւնը) եւ,
- գ) Արդար պատերազմի տեսութիւնը:

Թէեւ երեք դիրքերը պատերազմի առնչուող հարցին գծով անհամաձայն կը գտնուին քրիստոնեային ունեցած դերակատարութեան շուրջ, բայց բո-

լորն ալ կը համաձայնին, որ եկեղեցին երբեք բռնութիւն պէտք չէ օգտագործէ իր հոգեւոր ծառայութիւնը յառաջ տանելու եւ բարւոքելու համար:

**ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԱԿԱՆ
ԳՈՐԾՕՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ**

Վերոյիշեալ առաջին աշակերտը իր դիրքը հիմնաւորած էր այսպէս կոչուած՝ աստուածաշնչական գործօն քաղաքականութեան վրայ:

Աստուածաշնչական գործօն քաղաքականութեան ջատագովները կը կառչին այն հասկացողութեան, թէ քրիստոնեաներ պէտք է մասնակցին ամէն պատերազմի, որ պետութեան կողմէ կ'երաշխաւորուի: Որովհետեւ, պետութիւնը կամ կառավարութիւնը Աստուծոյ կողմէ հաստատուած է: Այս տեսակէտին պաշտպանները յաճախ Աստուածաշունչէն կը մէջբերեն այն օրինակները, ուր յստակօրէն կը մատնանշուի կառավարութիւններու կամ պետութիւններու Աստուծոյ կողմէ հաստատուելը:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Աստուածաշունչի առաջին գրքին մէջ իսկ Աստուծոյ խօսքը կը յայտարարէ, որ մարդը աճի, բազմանայ, երկիրը լեցնէ ու անոր տիրէ (Ծնն 1.28): Մարդը ամբողջ երկրին պիտի տիրէր: Ադամին ամբողջ աշխարհին տիրելու թագը տրուեցաւ, իսկ Նոյին ալ տրուեցաւ օրէնքը գործի դնելու իշխանութիւնը: Ժամանակներու սկիզբէն պետական իշխանութիւնը Աստուծոյ կողմէ հաստատուեցաւ, որպէսզի աշխարհին մէջ կարգ ու կանոն ստեղծէ եւ անկարգութիւնները հակակշռէ:

Նոյնիսկ Դանիէլ մարգարէն կը յայտարարէ՝ ըսելով. «Մարդոց թագաւորութիւններուն վրայ Բարձրեալը կը տիրէ ու զանիկա իր ուզածին կու տայ» (Դն 4.25): Եւ ամբողջ գիրքը յստակ ցոյց կու տայ, որ Աստուած ինքն է Բարբելոնի, Պարսկաստանի, Յունաստանի եւ Հռոմի հզօր թագաւորութիւնները հաւասարակշռի տակ պահողը: Յստակ է, որ Աստուած ինք կը հաստատէ պետական իշխանութիւնները, ուր որ ալ ըլլան կամ գտնուին:

Ուստի, գործօն քաղաքականութեան ջատագովները կը վիճին՝ ըսելով չհնազանդիլ պետութեան, կը նշանակէ անհնազանդ գտնուիլ Աստուծոյ դէմ: Հետեւաբար, քրիստոնեան Աստուծոյ հնազանդելու սիրոյն պէտք է երթայ պատերազմի, եթէ պետական իշխանութիւնն է ատիկա հրահանգողը:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Նոր Կտակարանը կը պաշտպանէ Հին Կտակարանի պատգամը, այն՝ որ Աստուած ինքն է պետական իշխանութիւնը հաստատողը: Առիթով մը Յիսուս հետեւեալը կ'ըսէ. «Ինչ որ կայսրին կը պատկանի կայսրին տուէք, եւ ինչ որ Աստուծոյ՝ Աստուծոյ տուէք» (Մտ 22.21): Պիղատոսի առջեւ իր դատավարութեան ընթացքին, Յիսուս աւելիով կը ճանչնայ ու կ'ընդունի Աս-

տուժոյ դերը պետութեան հաստատումին մէջ, ըսելով. «Ի՞մ վրաս ոչ մէկ իշխանութիւն պիտի ունենայիր, եթէ քեզի վերէն՝ Աստուծոյ տրուած չըլլար» (ՅՏ 19.11): Տիտոսի նամակին մէջ, Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Յիշեցո՛ւր բոլորին, որ հնազանդին ու հպատակին պետական իշխանութեան, եւ պատրաստ ըլլան՝ ամէն տեսակի բարի ծառայութիւն մատուցելու» (Տիտ 3.1): Իսկ Պետրոս առաքեալ կը զգուշացնէ քրիստոնեայ հաւատացեալները՝ ըսելով. «Տիրոջ սիրոյն հնազանդեցէք բոլոր մարդկային իշխանութիւններուն, ըլլա՛յ թագաւորին, որ վերագոյնն է, ըլլա՛յ կառավարիչներուն, որոնք իր կողմէ նշանակուած են չարագործները պատժելու եւ բարեգործները գովելու համար» (Ա. Պտ 2.13-14):

Հռոմէացիներու նամակին 13-րդ գլուխը ամենաընդարձակ քննարկումը կը կատարէ, այն՝ ինչ կը վերաբերի քրիստոնեային եւ պետական իշխանութեան միջեւ յարաբերութեան: Այնտեղ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծոյ կարգուած են: Ուստի ով որ իշխանութեան կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ հակառակած կ'ըլլայ, եւ հակառակողները իրենք զիրենք դատապարտութեան տակ կը դնեն» (Հռ 13.1-2):

Աստուածաշնչական գործօն քաղաքականութեան ջատագովները այս հաստուածին վրայ հիմնուելով՝ կ'եզրակացնեն, թէ քրիստոնեաներ կոչուած են նեցուկ կանգնելու եւ պաշտպանելու այն պատերազմները, որոնք սկսուած ու երաշխաւորուած են պետական իշխանութեան կողմէ, որովհետեւ Աստուած է, որ իշխանութիւն տուած է պետութեան ու կառավարութեան:

**ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՕՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՁԱՏԱԳՈՎՈՒԹԵԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ**

Անկասկած, որ որոշ պատերազմները արդարացի են, եւ քրիստոնեաներ պէտք են մասնակցին անոնց: Բայց արդեօք աստուածաշնչական հեղինակները իրապէ՞ս ըսել կ'ուզեն, որ ողջ աշխարհի պատմութեան ընթացքին բոլոր պետական իշխանութիւնները արդար են իրենց գործողութիւններուն մէջ: Արդեօք Քրիստոնեան առանց քննադատելու պէտք է քաջալերէ ու զօրավիգ ըլլայ մարդկային պետական իշխանութեան բոլոր գործողութիւններուն:

Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ կայ ժամանակ, երբ արդար է չհնազանդիլ պետական իշխանութեան, յատկապէս՝ երբ անոր հրահանգները կը հակասեն աւելի բարձր Աստուծոյ բարոյական օրէնքներուն: Օրինակի համար, Սեդրակ, Միսաք եւ Աբեղնազովը յտակօրէն մերժեցին հնազանդիլ պետական իշխանութիւններուն, երբ անոնք մերժեցին երկրպագել ձեռակերտ կուռքին (տե՛ս Դն 3): Դանիէլ մերժեց հնազանդիլ այն օրէնքին, որ կ'արգիլէր իրեն աղօթել իր Աստուծոյն (տե՛ս Դն 6): Ելից գիրքին մէջ կը կարդանք, թէ ինչպէս փարաւոն ստնտուներուն հրահանգեց սպաննել իսրա-

յէլացիներուն նորածին մանուկները, բայց անոնք մերժեցին հնազանդիլ տրուած հրահանգին եւ Աստուծոյ օրհնութեան արժանացան (տե՛ս Ելք 1): Նոյնիսկ Յիսուսի ծնողները մերժեցին մանուկ Յիսուսը յանձնել Հերովդէսի զինուորներուն, որոնք հրահանգ ստացած էին սպաննել նորածին մանուկները մինչեւ երկու տարեկան (տե՛ս Մտ 2):

Թէեւ պետական իշխանութիւնները Աստուծոյ հաստատուած են, բայց պէտք է մերժել հնազանդիլ այն իշխանութեան, երբ անոր հրահանգները կ'ընդհարին Աստուծոյ բարձրագոյն օրէնքներուն, այս պարագային՝ անմեղ մարդոց կեանքը պաշտպանելուն:

Թէեւ Աստուածաշնչական գործօն քաղաքական ջատագովութիւնը որոշ կարեւոր մատնանշումներ կը կատարէ, բայց ատոնք հաշիւի չեն կրնար առնուիլ աստուածաշնչական ընդհանուր պատերազմի տուեալներու հասկացողութեան գծով:

Քրիստոնեաներ յստակօրէն ճշմարտութեան եւ արդարութեան ի խնդիր ոտքի կանգնելու կոչուած են, նոյնիսկ, եթէ ատիկա կը նշանակէ պետական իշխանութեան հակառակ կեցուածք ճշդել:

Տակաւին, Աստուածաշնչական գործօն քաղաքականութեան առնչուած Աստուածաշունչէն դուրս այլ հարցեր ու խնդիրներ ալ կան: Ինչպէս օրինակ, եթէ նկատի ունենանք հետեւեալ համոզումն ու հաւատալիքը, թէ «might makes rights»: Ուրիշ խօսքով, ոյժն է, որ կը ճշդէ արդարութիւնը կամ կ'ընէ արդարութիւն, այսինքն՝ ով որ իր ձեռքն ունի ոյժը, զօրութիւնը, իշխանութիւնը, ապա իրաւունքը կ'ունենայ արդարութեան եւ ճշմարտութեան մասին օրէնքներ կարգելու եւ ճշդելու: Ուստի, սա կը նշանակէ թէ ինչ որ պետութիւնը կ'ընէ՝ ճիշդ է, այնքան ատեն որ գերուժը իր ձեռքն ունի:

Սակայն պատմութիւնը շուտով պիտի յայտնէ ու վկայէ, թէ պատերազմը մեծապէս կրնայ ապականած, գազանային ու վայրագ ըլլալ:

Եթէ ոյժն է, որ արդարութիւնը կը ճշդէ, այլ խօսքով՝ զօրաւորը, ապա կը նշանակէ, որ մենք պէտք է համաձայն գտնուինք այն տասնեակ միլիոնաւոր սպանութիւններուն, որոնք 20-րդ դարու ընթացքին ի գործ դրուեցան քոմիւնիստ պետական իշխանութիւններու կողմէ, որովհետեւ ատոնք պետական իշխանութեան ոյժի ճամբով կատարուեցան: Պետութիւնը յստակօրէն կրնայ սխալիլ, որովհետեւ շատ աւելի բարձր ճիշդի ու սխալի արժեքափ մը կայ, որ մարդկային ստեղծագործութենէն աւելի վեր ու անդին է:

ԽԱՂԱՂԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ օրինակներուն մէջ, երկրորդ աշակերտին բռնած կեցուածքը ծանօթ է, որպէս խաղաղապաշտութիւն: Խաղաղապաշտները կը կառչին այն հասկացողութեան, որ քրիստոնեաներու համար պատերազմներու մասնակցիլը երբեք ալ արդարացի չէ: Այս տեսակէտը պաշտպանելու գաղափար-

ները կը գտնուին զոյգ Կտակարաններուն մէջ: Ամենակարեւոր հատուածներէն մէկը կը գտնուի 6-րդ պատուիրանին մէջ, որ կը հրահանգէ՝ «Մի՛ սպաներ»: Խաղաղապաշտութեան կորիզը կը կազմէ այն յանձնառութիւնը, թէ մտադրուած կամ դիտումնաւոր կերպով անմեղ մարդու մը կեանքը խլելը միշտ ալ սխալ է:

Սոյն աստուածաշնչական արգելքը տարածուելով՝ կը ներառէ նաեւ պատերազմը, երբ պատերազմը կը ներգրաւէ ստուար թիւով մարդոց մահը. ներառեալ՝ բազմաթիւ անմեղ կեանքեր: Խաղաղապաշտը կը հաւատայ, այնքան ատեն որ Քրիստոս վերահաստատեց Հին Կտակարանեան պատուիրանը, ըսելով. «Մի՛րեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն» (Մտ 5.44), ապա քրիստոնէական չէ ներգրաւուիլ որեւէ պատերազմի մէջ, որ անմեղ մարդոց կեանքը կը խլէ:

Որոշ խաղաղապաշտներ կը հաւատան, որ Քրիստոսի «Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին» ուսուցումը, երկուստեք կը վերաբերի թէ՛ անհատին եւ թէ՛ պետական իշխանութեան: Անոնք կը պնդեն ըսելով, որ սէրը երբեք պիտի չվնասէ ուրիշին: Նոյնիսկ, եթէ հայրենիքը պատերազմի մէջ է, խաղաղապաշտները կը վիճին, թէ մենք պէտք է մեր միւս երեսն ալ դարձնենք, առանց նկատի առնելու, թէ ուրիշը ի՛նչ կ'ընէ:

Եսայիի մարգարէութեան համաձայն, Յիսուս խաղաղութեան իշխանն է (Ես 9.6): Պիղատոսին ուղղած իր խօսքին մէջ, ան ըսաւ. «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ: Եթէ՛ իմ թագաւորութիւնս այս աշխարհէն ըլլար, անշուշտ հետեւորդներս պիտի կռուէին, որպէսզի հրեաներուն ձեռքը չիյնամ: Բայց ո՛չ, իմ թագաւորութիւնս այստեղէն չէ» (ՅՎ 18.36): Պօղոս առաքեալ կը յիշեցնէ, որ պատերազմի զէնքերը աշխարհային չեն (Բ.Կր 10.4): Յիսուսի հետեւորդները պէտք է սիրեն իրենց թշնամիները (Մտ 5.44), բարիով պէտք է յղթեն չարին (Հռ 12.21) եւ պէտք է աղօթեն իրենց հալածողներուն համար (Մտ 5.44): Մարդուն կեանքը խլելու իրաւունքը միայն Աստուծոյ կը պատկանի, որովհետեւ ինքն է կեանքի հեղինակը (Յբ 1.21): Մարդ արարած պարզապէս իրաւունք չունի սպաննելու:

Վերոյիշեալ աստուածաշնչական պատուիրաններուն լոյսին տակ, խաղաղապաշտները զօրեղապէս կը յայտարարեն, որ պատերազմի մասնակցիլը անհամեմատելի է Քրիստոսին հաւատացող ըլլալուն հետ: Ուստի, անոնք կ'եզրակացնեն՝ ըսելով, որ աշխարհի մէջ չարին յառաջխաղացքը կասեցնելու յարմարագոյն արժեքափերն են՝ Աստուծոյ վստահիլն ու երկրի վրայ անվայրագ միջոցներ օգտագործելը:

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂՕԹ-ԱԲՈՅՐ ԵՒ ՀՈԳԵԽՕՍ ՄԱՏԵԱՆԸ

Ս. Գրիգոր Նարեկացի...: Հաւատքի ախոյեան, հմուտ աստուածաբան, հոգեխօս աղօթասաց, հոգեւոր մշակոյթի անշարժ կոթող, սրտբաց խոստովանող, «ի խորոց սրտի» Տիրոջ հետ խօսող, «Հոգենորոգ գուարթուլթեամբ» զԱստուած գոհաբանող, սրբանուէր ճիգով բարիին ձգտող, երկիւղած պաշտամունք մատուցող, Յիսուսասէր մղովմով գրող, ճոխ բառամթերքով շարահիւսող, խորագգաց ապրումները բիւրեղ հայերէնով արտայայտող, բեղուն գրիչով աղօթական կեանքը նկարագրող, պայծառ մտահորիզոնով խաչին խորհուրդը յայտնող, խոհական իմաստութեամբ Սուրբ Գիրքը մեկնող, աննուաճ կամքով կոչումը արժեւորող, հաստատ քայլերով Քրիստոսի յաղթական երթին մասնակցող, սրբադրոշմ կնիքով «Մատեան Ողբերգութեան» գանձարանը կտակող, խորիմաստ բառերով լուսեղէն գաղափարներ գրի առնող, անսպառ եռանդով Տիրոջ հետ հաղորդակցող, եւ հաւատարիմ ընթացքով մեղքին դէմ պայքարող: Ս. Նարեկացիի մասին կարելի է գովքերու գիրքեր հրատարակել, մեծարանքի յօդուածաշարքեր պատրաստել, տպաւորութիւններու եւ վկայութիւններու ծաւալուն հատորներ լոյս աշխարհ ընծայել: Այս երանելի սուրբին շնորհիւ կարելի է արդարութեան արմաւենիին քաղցրութիւնը ճաշակել, աղօթաբոյր Թաբօր լերան սքանչելիքը վայելել, Զիթենեաց լերան խորհրդաւորութեան մանրապատկերը տեսնել, լուսածարաւ հոգիներուն արքայութիւն աւետարանել, արժէքներու փնտռութեամբ ապրողներուն փրկութեան կանչը լսելի դարձնել, հայ տունները սրբութեան մշտափառ կանթեղով լուսաւորել, հայ երիտասարդը հոգեկրթել եւ հրեշտականման վարքին վայելչութիւնը լուսարձակի տակ առնել:

Տակաւին մեծ սուրբին հետքերով ընթանալով կարելի է անկողոպտելի զարդերով գեղեցկանալ, օրհնաբեր հպումով երջանկանալ, աղօթքին ներգործող զօրութիւնը զգալ, մեղքի հոսանքներէն եւ աշխարհիկ հոգերէն հեռու մնալ, խաբէական պատրանքներէն զգուշանալ եւ Տիրոջ դառնալու ջերմ փափաքը ընդմիշտ ունենալ: Սրբատուփ է Գրիգոր Նարեկացին, որուն մէջ ամփոփուած են երկնաէջ հացահատիկները փրկարար:

Խորհրդատուն է Գրիգոր Նարեկացին, որուն մէջ տեղադրուած է երկնահոս շնորհքին սկիհը սրբարար: Աստուածախօս վկայութիւն է Ս. Նարեկացին, որ ցոյց կու տայ «երկինք տանող գաղտնի ճամբան»: Հաւատքի հրաշակերտ դպրոց մըն է Ս. Նարեկացին, որուն ուսուցողական մեթոտներով եւ հոգեպարար խօսքերով կը դառնանք՝ «Աշակերտք Քրիստոսի»:

Աստուածասէր ուխտապահ մըն է Ս. Նարեկացին, անոր խօսուն հաւատքին ընդմէջէն մեր աչքերուն առջեւ կը պարզուի ուղին անմահութեան: Ոչ ժամանակին թաւալումը, ոչ պայմաններուն փոփոխութիւնը, ոչ ընկերային ըմբռնումներուն տարբերութիւնը, ոչ հին դարերու պատմական հոլովոյթը, եւ ոչ ալ նոր ժամանակներուն հանելուկային վիճակը կրցան Ս. Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» հրաշալի արտադրութեան տարածումը սահմանափակել, հոգեգրաւ ուժականութիւնը սպառել, հեղինակաւոր դիրքէն մագաչափ մը տեղաշարժել, ժողովրդականութենէն «աքսորել», բռնագրօսիկ ձեւերով խուլ անկիւն մը ձգել, եւ եկեղեցւոյ արարողական կեանքէն զանց ընել: Նմանօրինակ փորձեր ինքնին սրբապղծութիւն կը համարուին, միաժամանակ համազգային հարստահարութիւն եւ բարոյական յանցագործութիւն: Եթէ Սուրբին մատեանը միայն գրական արժէք ըլլար, հաւանաբար միայն մտաւորականներուն համար գնահատուած ըլլար: Եթէ զուտ քարոզ-գիրք ըլլար, թերեւս միայն եկեղեցական խաւին եւ եկեղեցասէրներուն մատչելի ըլլար: Եթէ միայն բարոյական որոշ նիւթեր քննարկող գիրք՝ հաւանաբար մանկավարժները կամ ընկերաբանները հետաքրքրող աշխատասիրութիւն նկատուէր: Եթէ միայն իմաստուն խօսքերու ճոխ հաւաքածոյ՝ հաւանաբար գրողներու եւ գրասէրներու ուշադրութեան առարկան համարուէր: Եթէ հաւատալիքներու վերաբերեալ ուսումնասիրութիւն՝ ենթադրաբար աստուածաբաններուն սերտողութեան նիւթը սեպուէր: Եթէ գլխաւորաբար դաւանաբանական նիւթերու անդրադարձ՝ հաւանաբար միջ-եկեղեցական յարաբերութիւններու ամրապնդման ծառայող ապահով ուղեցոյցի բնոյթ պիտի ունենար: Բայց, «Մատեան Ողբերգութիւն»ը ամէն բանէ առաջ աղօթագիրք է: Ամէնուն համար է, անխտիր: Որոշ մարդոց չէ վերապահուած, որոշ ժամանակահատուածի մէջ ապրող մարդոց չէ ձօնուած: Ան համահայկական բնոյթ ունի, նոյնիսկ՝ համաքրիստոնէական տարողութիւն: Այս իրողութեան պերճախօս թարգմանն է Հռոմի Կաթողիկ եկեղեցւոյ հոգեւոր Պետը՝ Ֆրանչիսկոս Պապը, որ 2015-ի Փետրուարին, Ս. Գրիգոր Նարեկացին հուշակէց իբրեւ «Տիեզերական Վարդապետ»: Եզակի պատուանուն մը, որ պարծանք է Հայ եկեղեցւոյ համար:

«Մատեան Ողբերգութիւն» աղօթագիրքը Ս. Նարեկացիին խոր հաւատքին, վառ յոյսին եւ մշտարժարժ սիրոյ արտայայտութիւններուն գլուխ գործոցն է անվիճելիօրէն: Մատեան մը, որ զղջումին, խոստովանութեան, ինքնաքննադատութեան, մեղքէն հրաժարելու, սթափելու, կանգուն մնալու եւ յարատեւ աղօթելու պտղաբեր անդաստանն է: Մատեան մը, որուն մէջ գոհաբանութիւնը, ներքողական կշռոյթը, փառաբանական մեղեդիները, մեկնողական սեղմ բաժինները միահիւսուած են զարմանալի ներդաշնակութեամբ եւ սքանչելի համաստեղութեամբ: Այդտեղ, ողբը ուրախութեան հասնելու հանգրուան է:

Սրտցաւ պոռթկումը՝ խաղաղութիւն վայելելու բոլուն ցանկութիւն է: Մեղքերը յիշելը Աստուծոյ ողորմութեան ապաւինելուն արդիւնքն է: զԱստուած մեծարելը խոնարհ հոգիին գեղեցկահիւս օրհներգութիւնն է: Սուրբ գրային մէջբերումները աստուածգիտութեան լոյսին սրբաշող ներկայու-

թիւնն է, իսկ կորստաբեր դիտումներուն, վատառողջ դատումներուն, պըղծասէր հակումներուն, ամօթալի կեցուածքներուն եւ աստուածամերժ արարքներուն մասին անդրադարձը՝ անկեալ եւ դատապարտեալ մարդուն ապացոյցն է: Աղօթասաց սուրբը անխախտ յոյսով կը դիմէ Աստուծոյ: Մատեանին մէջ յոյսը տիրական ներկայութիւն է, որով ապաշխարութեան ուխտը նորոգելը անմիջական պահանջք կը նկատէ մեծ սուրբը: Մատեանին մէջ, խիղճը զարթոնցիչ ձայնով զգաստութեան կը հրաւիրէ: Ահա թէ ինչու մեղքով ծանրաբեռնուած եւ ստուգապէս յոգնաբեկ վիճակի մատնուած սուրբը կ'ըսէ. «Հալումաչ եմ եղեր, ոչ թէ քեզ փնտռելու տաժանակիր աշխատութենէս՝ այլ խղճահարութենէս» (Բան Բ.բ): Աղօթական ապրելակերպի արտացոլումն է մատեանը: Աղօթքը Տիրոջ հետ անքակտելի կապուածութեան եւ սերտ հաղորդակցութեան անստուեր պատկերը կը ներկայացնէ:

Ս. Նարեկացին իր մատեանով լիիրաւ կերպով կը ներկայացնէ այս ճըշմարտութեան պայծառ միջնոլորտը, խօսուն օրինակը եւ հոգեչափ ծալքերը: Ս. Նարեկացիի ողբերգութիւնը իր սփոփարար յատկութեամբ եւ բժշկարար ուժականութեամբ մնաց միշտ նշխար օրհնութեան, նախատօնակը դրախտի փափկութեան, յուշարարը ուխտապահութեան, հրաշակերտ արտադրութիւն հոգեւոր ստեղծագործութեան, նաեւ՝ աստուածային խորհուրդներու մարմնացում, յաւիտենական ճշմարտութիւններու ծանուցում եւ փրկութեան աւետիսի հանդիսաւոր հաղորդում: Սաղմոսերգուն կ'ըսէ. «Իմ անձս քեզի կը փափաքի» (Սղ 42.1): Իրականութեան մէջ այս փափաքը զգացական կամ մակերեսային ապրում չէ, այլ՝ վստահութեան ցուցանիշ, որով նեղութեան ժամանակ սաղմոսասացը անդրդուելի մնալով երկնային միջամտութիւն կը սպասէ՝ ելք գտնելու հեռանկարով: Արդարեւ, եթէ յոյսի նշոյլ մը կայ՝ աղօթքի տրամադրութիւն, ջերմեռանդութիւն եւ հաստատակամութիւն կ'ունենայ մարդը: Հետեւաբար, զղջումով կը ցաւինք, յոյսով բուժուելու կը պատրաստուինք, խոստովանութեամբ կը հրապարակենք մեր ափսոսանքը, յոյսով կը ստանանք աստուածային սփոփանքը: Դառնութեամբ կ'ընդունինք մեր ձախաւեր ընթացքը եւ յոյսով կը յայտնենք նոր էջ բանալու մեր փափաքը: Այս բոլորը աղօթքի ճամբով կ'ունենան՝ օրհնաբեր ազդեցութիւն, դրական նշանակութիւն եւ խաղաղարար ներգործութիւն:

Ս. Նարեկացին յոյսով կը գրէ, մշտապէս յանձնուելով Տիրոջ սիրալիր խնամքին, բարերար կամքին եւ փրկարար ձեռքին: Ահաւասիկ անոր սրբութեամբ օծուն եւ հաւատքով խօսուն աղօթաբոյր արտայայտութիւնը «Տէր, գթութեանց Տէր եւ ողորմութեան Աստուած, մեծ անուն... բարերարութեան եւ ամենողորմ քաղցրութեան յուսադրութիւն» (Բան ՂԱ.ա): Յուսադրիչ այս խօսքերը կասկածը փարատող, երկմտանքը վանող եւ Աստուծոյ նայող մարդուն բարեխիղճ ակնարկութեան ու բարի ակնկալութեան դրսեւորումն է: Առաքեալը կ'ըսէ. «Յիսուսի նայինք» (Եբր 12.1): Ս. Նարեկացին Յիսուսի նայեցաւ եւ Անոր մէջ տեսաւ անխարդախ սէր, անփոփոխ բարութիւն, ճշմարիտ ազատութիւն եւ ուղիղ ճանապարհը փրկութեան: «Մատեան Ողբերգութիւն»ը փնտռուած աղօթագիրք է, որ մեղքով կորսուածին կ'աւետէ կանգնելու կարելիութիւնը:

Ա.Ի.ԵՏԱԶԱՅՆ ԵՒ ՀՈԳԵՇԱՀ ՄԱՏԵԱՆԸ

Ս. Գրիգոր Նարեկացիի մասին բազմաթիվ մտաւորականներ գրիչ շարժած են՝ յաւերժախօս եւ հրաշագործ աղօթամատեանը հանրութեան սեփականութիւնը դարձնելու մտադրութեամբ:

Նարեկացին ոչ միայն եկեղեցականներուն խոր յարգանքը վայելած է, այլեւ՝ աշխարհականներուն համակրանքն ու պատկառանքը: Ահա թէ ինչու բանաստեղծներ, բանասէրներ եւ ուսումնասէրներ խօսած են այս աղօթքի մարդուն մասին: Անոնք լուսարձակի տակ առած են անոր գեղարուեստական ինքնուրոյն գիծերը, լեզուամտածողութիւնը, աշխարհահայեացքը, գրական յատկանշական տուեալները, այժմէական խորհուրդները եւ հանճարը: Ս. Նարեկացին եզակի դէմք է, որ արժանացաւ Հայ եկեղեցւոյ գուրգուրալից վերաբերմունքին, հայ դպրոցին յիշատակումին, հայոց պատմութեան գնահատանքին եւ հայ մշակութային կեդրոններուն երախտագիտութեան: Տակաւին մեծանուն սուրբը եղաւ սիրտերուն մէջ խորան կառուցող հրեշտակ, աղօթքի հանդէպ սէր սերմանող մշակ, խիղճերուն մէջ Տիրոջ երկիւղը դրոշմող պատգամաբեր, Աւետարանի ուսուցումները փոխանցող առաքեալ, տագնապահար եւ վշտահար հոգիներուն յոյս ներշնչող եւ փրկութիւն աւետող վաւերական սուրբ: Մատեան Ողբերգութեան գրաբար բնագիրը բիւրեղ է եւ հիւթեղ, աշխարհաբար օրինակը սփոփարար եւ բժշկարար, ծածուկ կարգացուածը՝ աղօթաբոյր, եղանակով վերարտադրելը՝ երկնահաս, գիշերը ընթերցելը՝ խաղաղարար իւրայատկութիւն, իսկ օրուայ ընթացքին՝ առողջարար միջամտութիւն: Կարծէք երկնային համանուագի մը վեհ արուեստն է ծայրէ ի ծայր: Թարմութեամբ այժմէական, քաղցրութեամբ հաղորդական եւ խորհրդաւորութեամբ յուզական: Աստուածային հիասքանչ հեղինակութիւնը անջնջելիօրէն դրոշմուած է աղօթագիրքին մէջ: Եթէ Ս. Նարեկացին հաւատքի մղումով, ջերմեռանդ հոգիով, մշտարթուն մտքով, բեղուն գրիչով, անամպ հորիզոնով, Քրիստոսասէր մղումով, աղօթախօս բարբառով եւ լուսածարաւ կանչով գրի առած չըլլար աղօթամատեանը, մենք պիտի գրկուէինք հրաշալիքէ մը, որ հրաշքներու գումարում է իր խորութեամբ: Անուանի բանաստեղծ Պարոյր Սեւակ «Նարեկ» ի վերաբերեալ հետեւեալ վկայութիւնը կու տայ. «Դարեր շարունակ նրա գիրքը համարվել է հրաշալիք, եւ դարերն ապացուցեցին, որ իսկապէս էլ հրաշալիք է դա»:

Ամփոփ կենսագրական յիշատակութիւններ ալ արձանագրուած են Ս. Նարեկացիին մասին: Այս առնչութեամբ Լ. Ազարեան շահեկան ուսումնասիրութեան մէջ կը պարզէ թէ 12-րդ դարուն Ս. Նարեկացի «Մատեան»ի մասին գրուած են յատուկ մեկնութիւններ, իսկ հեղինակին մասին՝ կենսագրականներ (Ներսէս Լամբրոնացի եւ Գրիգոր Սկեւռացի). Ազարեան Սկեւռան կը նկարագրէ իբրեւ Կիլիկիոյ Հայաստանի մանրանկարչական արուեստի նշանաւոր կեդրոններէն, որ իւրայատուկ նշանակութիւն կ'ունենայ Ներսէս Լամբրոնացիի օրերուն (1153-1198): Լամբրոնացիի պատուէրով 1173-ին, Սկեւռայի մէջ կ'ընդօրինակուի եւ կը պատկերագրուի «Մատեան Ողբերգութեան»ը: Այս ինքնատիպ ու արժէքաւոր օրինակը «Նարեկներուն» մէջ

հնազոյնն է: Գրուած եւ ծաղկազարդուած է Գրիգոր Մլիճեցիի ձեռքով:

10-րդ դարուն վասպուրական նահանգի Ռշտունիք գաւառին մէջ հիմնուած է Նարեկի վանքը, որ գրականութեան, երաժշտութեան եւ Աստուածաշունչի ուսման կարեւոր կեդրոն կը համարուէր: Հիմնադիրն էր Անանիա Վրդ. Նարեկացի: Իսկ վարդապետանոցին տաղանդաւոր սաներէն հանդիսացաւ անմահանուն Ս. Գրիգոր Նարեկացին: Աղօթաշունչ կրօնաւորը, որուն ստացած հոգեւոր դաստիարակութիւնը լաւագոյն կերպով դրսեւորուեցաւ իր Մատենին ճամբով: Անոր աստուածաշնչական ծանօթութեան հմտութիւնը ի յայտ եկաւ երկարաշունչ աղօթագիրքին ընդմէջէն: Ինքնանպատակ չեղաւ Սուրբին կեանքը: Ան եսի նեղ պարունակէն դուրս, ժամանակի շրջագիծէն անդին, եւ վաղանցուկ փառքի հրապոյրէն հեռու մնաց: Կամաւոր ճգնութեամբ, ջանասիրութեամբ, հաւատարմութեամբ եւ աստուածսիրութեամբ ընթացաւ: «Ինքզինք աստուածաշտուութեամբ մարգելու», «Աստուծոյ աչքին ընտիր ըլլալու» եւ պայծառատեսութեամբ ապրելու համար ջերմեռանդ աղօթեց:

Տէրունական պատուիրան է աղօթելը: Քրիստոնէական ապրելակերպի ցայտուն վարքագիծն է աղօթական կեանքը: Առանց աղօթքի մակերեսային է հաւատքը, ձեւական է դաւանանքը, իմաստազուրկ է աստուածամերձ ձրգտումը, անպտուղ է բարեպաշտութիւնը եւ հեթանոսական է դիտաւորութիւնը: Աղօթքը ճառագայթող եւ ազդու դերակատարութեամբ մարդը Աստուծոյ մօտեցնելու կը նպաստէ անուրանալիօրէն: Աղօթքը հաւատքի արտայայտութիւն է եւ հոգեւոր պաշտամունքի յայտարար: Այսպէս կ'ուսուցանէ Ս. Նարեկացին իւրաքանչիւր քայլափոխին: Ինչպէս որ պարարտ հողը իր առատ պտուղը կու տայ, նոյնպէս ալ Ս. Գրիգոր Նարեկացին իր հոգեւոր անդաստանէն բերքահաւաք կը կատարէ: Ան սրբութեան ձիթենիէն, արդարութեան արմաւենիէն, առատութեան որթատունկէն եւ օրհնութեան հասկերէն կը հիւրասիրէ եւ առաքինութեան պարտէզէն ծաղկաքաղ կ'ընծայէ աղօթասէրներուն: Ուրեմն, չկայ դատարկաձեռն արձակուիլ, երբ աղօթակից ենք սուրբ Նարեկին: Շնորհքի լիառատ սեղանէն մաս եւ բաժին կ'ունենանք, երբ իրեն կը դիմենք եւ իր հետ Տիրոջ ողորմութեան դուռը կը թակենք:

Մեղապարտ եւ մահապարտ մարդը անյետաձգելի պահանջքը ունի խոստովանութեան, որպէս նախադուռ խաղաղութեան եւ հաշտութեան: Խոստովանութեան դիմելով Ս. Նարեկացին կը խոնարհի Աստուծոյ հօր ձեռքին տակ: Ան երբեք չի համարձակիր գոռոզանալ, ինքնահաւան ըլլալ, անձնական արժանիքներով հպարտանալ եւ արժանաւոր կրօնաւորութեամբ ընտրեալ զգալ: Հոգեխռով պոռթկումով, զղումի ցասումով, խորագգաց յուզումով, ամօթահար վիճակով, արդարադատ կողմնորոշումով եւ խիղճի խայթով մեծ սուրբը մեղքին դառնութիւնը ճաշակելով կը սգայ ողբաձայն աղաղակով, ներում կը հայցէ ակնածանքով, սխալները կը յիշէ փոսոսալով եւ ետ կանգնիլ կը վճռէ աղօթքի դիմելով: Ուստի, դարձի ճանապարհն է որ մեռելութենէն դուրս գալ կը թելադրէ եւ Աստուծոյ սէրը ճանաչելի կը դարձնէ: Ինքնարդարացման որեւէ ճիգ՝ աստուածամերձ կեցուածք է: Քմահաճ մօտեցում մը, որուն խաբկանքով կը տարուի մարդը, մոռնալով թէ միայն Աստու-

ծոյ շնորհիւ կարելի է արդարանալ մեղքերէ, մաքրուիլ անօրէնութիւններէ եւ ազատիլ կապանքներէ: Ս. Նարեկացին հոգեւոր ողջոյնով կ'ընդունի Աստուծոյ սէրը իր կեանքին մէջ, եւ փրկութեան ակնկալութեամբ կը վերառաքէ աղերսանք եւ խնդրանք: Ահա այդ փրկութեան ծարաւ հոգիին կանչն է, որ մեղեդիաբարբառ ելեւէջներով, հրեշտակային առողանութեամբ եւ երկնասլաց երգակցութեամբ՝ խնկաբոյր զոհի նման ընդունելի, բանաւոր պատարագի պէս հաճելի եւ այրի կնոջ օրինակով գովելի կ'ըլլայ: Աղօթաբոյր բառերու աշխարհ մըն է «Մատեան Ողբերգութեան»ը:

Սուրբ բառակազմութեան ճիրքով օժտուած է ի վերուստ: Աստուածապարգեւ ունակութիւնով ան մեր մեծաաքանչ լեզուն կը մեծարէ: Կարծէք անտիպ ձեռնարկ է մեր ոսկեղնիկին ձօնուած:

Մատեանին մէջ Թարգմանչաց սերունդն է ներկայ, որ կը տողանցէ փառահեղ շքերթով: Հոն Ս. Մեսրոպի ուսուցչապետական հանգամանքը կը շեշտուի՝ իր իսկ վեհաշուք հովանիով:

Հոն ոսկեղարի փառքը կ'արտացոլայ զմայլելի հմայքով: Հոն մեր սրբաշէն վանքերուն ոգեղէն ներկայութիւնն է տիրական՝ իր հայադրոշմ կերպարով: Եւ վերջապէս հոն մեր հայրերուն հաւատքին վկայութիւնն է լսելի՝ իր ուղղափառ իմաստով: Ս. Նարեկացիով ակնթարթային տեւողութեամբ նիւթական աշխարհէն հոգեւոր ներաշխարհ փոխադրութիւնը իրագործելի է: Զեւով մը, մատեանով փորձառաբար կ'ապրինք ճանապարհորդութիւն անզուգական, ուղեւորութիւն յատկանշական, ուխտազնացութիւն սրբազան, ընկերակցութիւն Բարի Սամարացիական, խաչի թափօր յուսադրական, շրջագայութիւն մխիթարական, ներշնչում անտխրական, զօրակցութիւն բարեխօսական, աջակցութիւն խրախուսական, հոգեխօսութիւն բարեպաշտական, կարեկցութիւն հոգեգրաւչական, ցաւակցութիւն հայրական, վշտակցութիւն յորդորական, խնկարկութիւն քահանայական, հաղորդութիւն մարգարէական, դաստիարակութիւն կրօնական: Մատեանը այլեւս գիրի սահմանափակումէն դուրս կու գայ՝ դառնալով ուրախարար ուղեկից ուխտապահութեան, հոգեպարար աղօթակից խոստովանութեան, հոգեշահ հաւատակից առաքելական եւ համարձակախօս քարոզ ապաշխարութեան: Աշխարհէն ներաշխարհ տանող, երկրաւորէն երկնայինին հաղորդ դարձնող, վաղանցուկէն մնայունին հասցնող հրեշտականման էակ է Ս. Նարեկացին: Անոր ոտքերը երկրին վրայ էր, իսկ սիրտը երկինքի մէջ: Ան աղօթքի սիրտ ունեցող էր, հոգիին թռիչքը՝ ազատութիւնը, սրտաբուխ փափաքը՝ արքայութիւնը, իսկ գրելուն շարժառիթը՝ «Հոգեսէր» ու «Ողորմած» Աստուծոյ փառք վերագրել եւ իր գովքը հիւսել երկրաւոր կեանքի պանդխտութեան տարիներուն:

ԽՈՐԷՆ ՔՀՆՅ. ՊԵՐԹԻՉԼԵԱՆ

(Շար. 1)

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

**ԳՐԱԳԷՏ ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆԷՆ
ՅԱՄԵՑՈՂ ՏԱՔՈՒԿ ՇՈՒՆՉ ՄԸ...**

Սա պահուն հարցում մը կը չարչարէ իմ միտքը.– առաջին անգամ ե՞րբ էր՝ որ հանդիպեր էի Բենիամին Նուրիկեանի անունին: Բան մը կարդացե՞ր էի իրմէ դպրոցական իմ տարիներուն:

Ինձի կը թուի թէ իբրեւ խարբերոցի գիւղագիր՝ Համաստե՛ղն էր միայն, որ աւանդուեր էր մեզի, մէկէ աւելի կարգերու մէջ: Անոր «Չալօն», «Միջօն» ու «Երնէ՛կ այն օրերուն»-ը կարդացեր էինք դասարանին մէջ, մեր դասագիրքերէն, ուսուցիչներուն կողմէ տրուած մեկնաբանութիւններով հանդերձ:

Իսկ Նուրիկեա՞նը...:

Կրնամ հաստատապէս յիշել, որ միջնակարգի Ը. կարգի հայերէնի մեր դասագիրքին մէջ կա՛ր Բ. Նուրիկեանը՝ իր կենսագրութեամբ, դիմանկարով եւ իր գործէն ընտրեալ նմոյշով մը: Սակայն Հայաստան տպուած մեր այդ դասագիրքը («Հայ գրականութիւն», 1969, յատուկ՝ Սփիւռքի դպրոցներուն համար, արեւմտահայերէնով եւ դասական ուղղագրութեամբ) շա՛տ ծաւալուն էր՝ հայերէնի մեր սահմանափակ դասապահերուն համար: Հոն տեղ գտած էին ՅԻՍՈՒՆ հեղինակներ: Մինչդեռ, կրթական լման տարեշրջանի մը ընթացքին՝ մենք հազիւ կրնայինք ծանօթանալ 10-12 հեղինակի: Ուստի, մեր ուսուցչուհին ստիպողաբար ընտրութիւններ կը կատարէր դասագիրքէն՝ ըստ իր հայեցողութեան, ակամայ դուրս թողլով բազմաթիւ գրողներ: Նուրիկեանն ալ մէկն էր այդ անբախտներէն...:

Ես սակայն, որ բնաւ չէի ուզեր սահմանափակուիլ ուսուցչուհիին աւանդածներով, շարունակ կը պրպտէի նարնջագոյն խաւաքարտէ կողքով մեր այդ դասագիրքին բոլո՛ր էջերը: Կանգ կ՛առնէի ծանօթ-անծանօթ հեղինակներուն դիմանկարներուն առջեւ, կը ստուգէի անոնց ծննդեան ու մահուան թուականները, հոսկէ-հոնկէ ընթերցումներ կը կատարէի:

Իմ այդ թերթատումներուն ընթացքին է որ, օր մը, աչք-աչքի եկայ Բենիամին Նուրիկեանին հետ: Նուրբ դիմագիծերով անձ մը: Զարմանքով ու քիչ մըն ալ ապշահար՝ կարդացի անոր կենսագրութեան կից գետեղուած կարճ պատմուածքը, որ կը կրէր շատ տարօրինակ վերնագիր մը՝ «Կովին գլուխը»...:

Տարիներ յետոյ, պիտի անդրադառնայի որ Յ. Օշական եւս, Երուսաղէմ տպուած իր «Հայ գրականութիւն» հաստատիր դասագրքին մէջ հիւրընկալներ էր Նուրիկեանը՝ նոյն այդ «Կովին գլուխը» պատմուածքով:

Միայն թէ հարց մը կար, որ առաջին ընթացքէն գրաւեր էր իմ ուշադրութիւնը.— ինչո՞ւ Նուրիկեան նախընտրեր էր գործածել «կովին» հոլովածէն՝ փոխան «կովուն»-ի: Չէ՞ որ դպրոցի գրասեղաններուն վրայ կանուխէն սորվեցուցեր էին մեզի, թէ «կով» գոյականին սեռական-տրական հոլովը կը կազմուի «կովուն» ձեւով: Ուրե՞մն: Արդեօ՞ք բարբառային խօսելիքէն էր ատկա:

Տարիներ անց, հիմա, գրադարանէս վար կ'առնեմ ահա նարնջագոյն կողքով դպրոցական մեր այդ երբեմնի դասագիրքը: Հին օրերուն պէս՝ կը դարձնեմ էջերը, կարօտով կը նայիմ գրողներու լուսանկարներուն: Հո'ն է Բենիամին Նուրիկեանը, հո'ն է նաեւ... «Կովին գլուխը»:

Դասագիրքս, շեշտելէ ետք՝ թէ Նուրիկեան կը նկատուի կարճ պատմուածքի ու նորավէպի վարպետներէն մէկը, կը շարունակէ սա'պէս. «Ան կը գրէ սեղմ, խտացած ոճով, չի ճապաղիր, խորթ են իրեն երկարաբանութիւնն ու ճոռոմ լեզուն: Կրելով ամերիկեան նորավէպի մեծագոյն վարպետ Օ. Հենրիի բարերար ազդեցութիւնը, ան հայ գրականութեան տուած է գեղեցիկ նորավէպերու շարք մը, որ պատիւ կը բերէ իրեն: Նուրիկեան խորապէս կը ճանչնայ խարբերոցի շինականը, ծանօթ է անոր մտայնութեան ու հոգեբանութեան, անոր նիստ ու կացին, ստեղծած գրոյցներուն եւ աւանդութեանց, ու այդ հանգամանքը մեծապէս նպաստած է որ ան հայ գրականութեան տայ հիանալի պատմուածքներ ու նորավէպեր, որոնցմէ շատերը չենք կրնար առանց արցունքի եւ փստսանքի կարդալ»:

Արժեւորումը գերազանց է: «Արժան եւ իրաւ»:

Միջանկեալ դիտել տամ, թէ «նորավէպ» բառը, որ արեւմտահայ իրապաշտներու շրջանին (1880-1900) կը գործածուէր առատօրէն, ուրիշ բան չի նշանակեր՝ եթէ ոչ խտացեալ պատմուածք մը, ուր գործողութիւնը կը թաւալի ու կը զարգանայ շատ արագ թափով, նիւթին բոլոր թելերը կեդրոնացընելով մէ'կ կէտի վրայ:

Եթէ ի մի բերենք Բենիամին Նուրիկեանի գրական ամբողջ վաստակը՝ իր երեք հատորներով, հոն պիտի նկատենք երկճիւղ ուղղութիւն մը:

Առաջին ուղղութիւնը գիւղագրութիւնն է, իրեն տարեկից գրչեղբօր՝ Համաստեղի հետեւողութեամբ:

Կարգացէ՛ք Նուրիկեանի «Այգեկութեան»-ը, որպէսզի ձեր դիմաց բացուի

կանաչ-կապոյտ հորիզոնը Ծոփաց Աշխարհին՝ գիւղական իր տոհմիկ բարձր-րով, կրօնական ականդապաշտութեամբ, վարուցանով, այգեկութքով, թոնիրով, քահանայէն մինչե՛ւ մուրացիկ՝ շինական բարի տիպարներով, եւ այս վերջիններն ալ՝ իրենց մանր կամ մեծ հոգերով, բարբառով եւ մասամբք նորին: Մէկ խօսքով՝ ձեր դիմաց ուրուագծուի արեւմտահայ կորսուած գիւղը՝ իր անաղարտ նախնականութեամբ եւ գունագեղ բնութեամբ: Կարդացէ՛ք, որպէսզի իւրաքանչիւր տողի վրայ զգաք գաւառի հողին ու արեւին բուր-մունքը: Հեղինակը գրականութեան բերած է վերջի՛ն փշուրները ժողովուրդի մը խաղաղ կեանքին, որ դիւային ծրագրով մը դատապարտուեցաւ անհայ-ցումի 1915-ին: Տեսակ մը «յետադարձ գրականութիւն»:

Նուրիկեան, եւ իրեն նման՝ Համաստեղ, Վահէ Հայկ կամ Սուրէն Ման-ուէլեան կրնայի՞ն պանդուխտ գրողի իրենց սրտին ու հոգիին մէջ ամրափակ պահել, թաքցնել հայրենի գիւղին մխացող կարօտը: Անոնք իրենց կեանքին ամէնէն թարմ եւ առոյգ շրջանը (մանկութիւն ու պատանեկութիւն) ապրած էին իրենց հայրենի կտուրին տակ: Ծննդավայրին հողը, ջուրն ու մթնոլոր-տը իրենց ծովին ու արիւնին մէջ էր: Ուստի, պայթեցուցի՛ն իրենց հոգեյա-տակը նստած այդ կարօտը ու զայն վերածեցին ԳԻՐԻ: Գաւառական գրակա-նութիւնը այդպէ՛ս ստեղծուեցաւ Ամերիկայի մէջ:

Գաւառական գրականութեան հետեւողական մշակումով՝ Բ. Նուրիկեան ի մտի ունէր, հաւանաբար, այլ պարագայ մը եւս: Ան կը միտէր Ամերիկայի մեքենայացած կեանքին ու ապականած բարձրուն հակադրել իր գիւղին մաքուր մթնոլորտը եւ իր պարզունակ տիպարներուն մարդկայնութիւնը: Ուրեմն՝ իր գրականութիւնը ձգտումնաւոր էր նաեւ. իր մէջ կը պարփակէր ընկերադաստիարակչական խորք մը: Աւանդապաշտ գրագէտի մը տագնա-պա՛նք էր ատիկա:

Երկրորդ ուղղութիւնը ամերիկահայ կամ ամերիկեան կեանքի սեւե-ռումն է:

Գաւառի տոհմիկ նիւթերը օր մը պիտի սպառէին անշուշտ: Գիտենք բո-լորս ալ, որ սահող-գացող տարիներու բնական թաւալումով՝ հին կարօտնե-րը կոշկոռ կը կապեն, սրտերը կը թեթեւնան քիչ մը...:

Նուրիկեանի պարագային ալ այդպէս պատահեցաւ: Գիւղէն ու գաւառէն վերցուած համով նիւթերու կողքին՝ ան տպաւորիչ պատկերներ սկսաւ գծել ամերիկահայ ժամանակակից բազմազոյն կեանքէն, լուսարձակ բանալով թէ՛ ազգային եւ թէ՛ ընկերային մտահոգութիւններու վրայ: Վեր առաւ իր հե-րոսներուն նիստ ու կացը, վիշտը, կարօտն ու երազանքները: Իր տիպարները ընդհանրապէս նո՛յն բարի ու միամիտ մարդիկն էին, որոնք պարզապէս միջավայր փոխեր էին, – ճակատագրի բերումով՝ գաւառի խուլ անկիւններէն եկեր-հասեր էին Ամերիկա, իրենց բնորոշումով՝ «անուշ երկիր ազատու-թեան»...:

Ամերիկայի երկնքին տակ ի՞նչ պիտի ընէին այս հայ մարդիկը՝ պան-դուխտ գեղջուկները: Բանուո՛ր պիտի ըլլային: Իրենց երիտասարդութիւնը

պիտի սպառնաին գործարաններու ծուխին ու մուրին մէջ: Իրենց պարկեշտ նկարագիրը յաճախ պիտի բախէր դրամատիրութեան ու անկէ բխող տմարդի քաղաքակրթութեան մը կարծր իրականութիւններուն:

Նուրիկեան պիտի նկարագրէր այս բոլորը մի'շտ կարեկից զգացումնէրով եւ մարդկայնութեամբ թաթաւուն մերձեցումով:

Չէ՞ք յիշեր իր «Մաշած աւել» պատմուածքը:

Նուրիկեանի ամէնէ՛ն բախտաւոր գրութիւնն է ասիկա թերեւս, որովհետեւ վերածուած է դասական կտորի ու տեղ գտած՝ հայերէնի դասագիրքերու կամ գրողներու կենսագրութեանց նուիրուած հաւաքածոներու մէջ:

Նուրիկեան այստեղ կը խօսի Արեւմտահայաստանի մէկ գիւղէն Ամերիկա ինկած հայ մարդու մը մասին՝ Ակոբ աղբար, որ իբրեւ աւելածու կ'աշխատի հսկայ գործատան մը մէջ: Պարտաճանաչ բանուոր մըն է ան: Աշխատանքի բոլոր ժամերուն, իր կլոր ձեռնասայլը առջեւ ձգած, անդադար կը չըջի երկյարկանի գործատան սրահներուն մէջ, կ'երթեւեկէ արտադրիչ մեքենաներուն միջեւ, կ'աւելն ու կը մաքրէ գետիները: Վկայ՝ իր մաշեցուցած աւելներուն խուրձերը...:

Բայց դժգոհ է ան իր կեանքէն երկու պատճառով. նախ, «Ամերիկայի մալ (ապրանք) եղանք գացի՞նք» կը կրկնէ շարունակ ու կ'երագէ իր հայրենի երկիրը, ապա՝ շատ վտիտ է իր շաբաթական աշխատավարձը, միայն ու միայն ինը տոլար ու տասնմէկ սէնթ...: Իր բառով՝ «Ժեր էջի պող, որ ո՛չ կ'երկննայ, ո՛չ ալ կը կարճնայ»:

Տարիներո՛վ Ակոբ աղբար այս գործը կ'ընէ, միեւնոյն աշխատավարձքով: Բենիամին Նուրիկեան նկատել կու տայ որ ան «այնչափ կ'աւելն ու կ'աւելնէ, որ գործարանին տախտակամածն իսկ կը մաշի»:

Սակայն, տարիներու ու տասնամեակներու երկայքին կը մաշի ի՛նք եւս՝ Ակոբ աղբարը: Կը տկարանայ, մագերը կը ճերմկին, ականջը կը ծանրանայ, ուսերը կը ծրին: Մէկ խօսքով՝ կը ծերանայ: Ու տխուր օր մը, գործատան վերակացուն գինք կանչելով կ'ըսէ.

– Վաղուրնէ սկսեալ, շատ կը ցաւիմ ըսելու որ ա՛լ պէտք պիտի չունենանք քու աշխատանքիդ: Երթաս բարով:

Ու Ակոբ աղբար կը հեռանայ աշխատավայրէն գլխահակ, ինքզինք նմանցընելով ՄԱՇԱԾ ԱԻՆԼԻ ՄԸ, որ մէկդի կը նետուի՝ տեղը թարմ հատ մը առնելու համար...:

Ահա՛ մարդուն տմարդութիւնը մարդուն հանդէպ: Տմարդութիւն մը, որ «չահագործում» եւ «անարդարութիւն» անուններով ծանօթ է ընկերային ու տնտեսական աշխարհին մէջ...:



Նուրիկեանի պատմուածքները տեսակ մը մանրապատումներ են կարծես: Խճանկարներ: Այնքան խիտ ու սեղմ են անոնք, որ երբեմն երկու էջէ

անդին չեն անցնիր: Կը զգաք որ հեղինակը կը մերժէ աւելորդ զարդեր ու երկարաբանութիւններ, կը խուսափի մանրամասնութիւններէ եւ ընդլայնումէ:

Իր կարծ ու կտրուկ այս ոճը կը թուի թէ բնածին բան մը եղած է Նուրիկեանի մօտ, նպաստաւորուած՝ պատկերաւոր ու կենդանի լեզուով մը, նուրբ երգիծանքով եւ զուարթախոհութեամբ, ինչպէս նաեւ ճոխ բառամթերքով մը, որ արդէն գլխաւոր գէնքն է որեւէ գրողի: Ուշագրաւ է իր հետեւեալ հաստատումը. «Ինծի համար մեր լեզուն հրաշալի միջոց մըն է գրական ստեղծագործութեան. աւելի՛ հարուստ, քան անգլերէնը եւ Ֆրանսերէնը, որոնց ծանօթացած եմ ուսանողութեանս տարիներուն ու յետոյ ալ՝ երկար տարիներով, մանաւանդ անգլերէնին»:

Խտութեան կողքին, իր գրականութեան միւս երկու յատկանիշերն են պարզութիւնն ու իրապաշտութիւնը: Փոքր չէ թիւը իր այն պատմուածքներուն, ուր հերոսներէն մէկն ալ ի՛նք է՝ «Արմէն» անունին ետին պահուած: Իր ինքնակենսագրական նօթերուն մէջ առիթով մը գրած է. «Իբրեւ գրող երբեք չեմ կրցած ձեռք զարնել շինծու նիւթերու: Կը գրեմ միայն՝ երբ սիրտս եւ ամբողջ էութիւնս լեցուած են նիւթով մը, որ փակուած է սրտիս մէջ, եւ որ կը ճչայ որպէսզի լոյս աշխարհ գայ թուղթին եւ գրչին ճամբով: Այլապէս երբեք պիտի չուզէի, պիտի չկարենայի գրել»:

Գրականագէտ Մ ինաս Թէօլէօլեան իր «Դար մը գրականութիւն» հատորին մէջ սապէ՛ս կը բնորոշէ Նուրիկեանի արուեստը. «Պարզ, անճիգ լեզուով մը եւ իր տիպարները միշտ իրենց հարազատ ապրումներուն ընդմէջէն սեւեռումի տակ առնելու բժախնդրութեամբ՝ յաջողած է կենդանի ու մնալուն վկայութեան վերածել գրական իր վաստակը»:

* * *

Բենիամին Նուրիկեան իր պատկառելի ուսուցիչին՝ Թլկատինցիի նկատմամբ, պահեց միշտ անպարագիծ սէր մը:

Ինչպէս տեսանք արդէն, 20-ական թուականներուն, Գոլումպիա համալսարանը աւարտելէ կարճ ժամանակ անց, ան ձեռնամուխ եղաւ նահատակ գրագէտին հոս-հոն ցրուած այլաբնոյթ գործերուն հաւաքման աշխատանքին, նեցուկ ունենալով այդ օրերուն Ամերիկայի մէջ կազմուած Թլկատինցիի Սաներու Միութեան երախտագէտ անդամները: Հին թերթերէ ու տարեցոյցներէ ժողվեց Թլկատինցիի պատմուածքները, քրոնիկները, թատերգութիւններն ու քերթուածները: Այս աշխատանքին մէջ իրեն մեծապէս օժանդակեց Վենետիկէն Հ. Արսէն Ղազիկեանն ալ: Մէկտեղեց նաեւ լուսանկարներ: Գաւառային դժուարիմաց բռներու համար (որոնցմով կը վիտան Թլկատինցիի գրութիւնները) կազմեց առանձին սիւնակներ ու տուաւ անոնց բացատրութիւնները: Այսպիսով, մէջտեղ եկաւ 700 էջանի հրաշալի մատեան մը, որ թերեւս «ամբողջական» չէր, բայց որ լայն չափով մոռացումէ

կը փրկէր գրողին վաստակը ու կոչուած էր անկորնչելի փառապսակ մը դառնալ *Խարբերդի Թլկատին* (Խուլյու) գիւղի մեծանուն գաւկին համար:

Այս գիրքը տպուեցաւ Նիւ Եորք, 1927-ին, այսինքն՝ *Թլկատինցիի նահատակութենէն ընդամէնը 12 տարի ետք*:

Ողջունելի՛, համբուրելի՛ աշխատանք՝ նախկին սաներու այս նախաձեռնութիւնը:

Այլ առիթով մը, Նուրիկեան իր «*Նոր Գիրք*»-ին մէկ թիւը ամբողջովին նուիրեց *Թլկատինցիին*, հեղինակաւոր գրիչներու աշխատակցութիւնը ապահովելով ատոր 1950, աշուն (ձմեռ):

Ծանօթ է որ *Թլկատինցի Խարբերդի մէջ կրցած էր խմորել գրասէր սերունդ մը, որ յետոյ լայն թեւերով բացուեցաւ մեր գրականութեան ու դրոշմ դրաւ այնտեղ*: Այդ սերունդին մաս կը կազմեն, Նուրիկեանէն զատ, նաեւ Ռուբէն Զարդարեան, Վահէ Հայկ, Վահան Թոթովենց, «*Ամերիկահայ պատկերներ*»-ու հեղինակը՝ Պետրոս Կէօլճիկ, հրապարակագիր Հրաչ Երուանդ եւ այլն:

Թլկատինցի, իրաւամբ, կը նկատուի գաւառի գրականութեան վարպետներէն մէկը, նաեւ՝ գլխաւոր տեսաբանը այդ գաղափարին: Մուշեղ Իշխան իր «Արդի հայ գրականութիւն» դասագրքին մէջ (Բ. հատոր, Պէյրուիթ, 1974) կը հաստատէ. «Գրիչով ու խօսքով պայքարած է, որպէսզի հայ գրողը իր աչքերը դարձնէ դէպի հայ գիւղը եւ մշակէ հայեցի ոգիով նոր գրականութիւն մը, իսկ հայ մարդը չհեռանայ իր պապենական հողէն ու օճախէն: Նախանձախնդիր է տոհմային աւանդութեանց պահպանման եւ այդ պատճառով ալ համակիր չէ անոնց, որոնք հայ հողէն, սովորութիւններէն եւ եկեղեցիէն կը բաժնեն հայր կամ կը քանդեն անոր կրօնական եւ բարոյական ըմբռնումները»:

Մեզի համար շահեկան է իմանալ Նուրիկեանի յուշերն ու տպաւորութիւնները իր ուսուցիչին վերաբերեալ:

Այդ յուշերը կու գան 1910-1913-ի շրջանէն, երբ Բենիամին աշակերտեց *Խարբերդի Ազգ. Կեդրոնական վարժարանին*, ժողովրդային բնորոշումով «*Թլկատինցիի դպրոց*»ին:

Մեր սիրելի գրողը կը պատմէ, որ երբ գիւղին ծխական դպրոցը աւարտեց՝ հայրը որոշեց զինք *Խարբերդը* ղրկել, Ազգ. Կեդրոնական վարժարանը ուսանելու համար: Վերամուտէն շաբաթներ առաջ՝ համագիւղացի հինգ ընկերներով ճամբայ ելան դէպի քաղաք: Երկիւղով մտան Ս. Յակոբ եկեղեցւոյ բակը, ուր կը գտնուէր դպրոցը: Տնօրէն Յովհաննէս էֆէնտին (իմա՝ *Թլկատինցիին*) եւ ուսուցիչներ կէս ժամ բերանացի քննութենէ անցուցին զիրենք. քիչ մը քերականութիւն, քիչ մը պատմութիւն, քիչ մըն ալ կրօն: Արդիւնքները գոհացուցիչ եղան: Ընդունուած էին: Բայց տեսչարանէն դուրս գալէ առաջ, տնօրէն *Թլկատինցի* կատարեց սա՛ հրահանգիչ թելադրանքը. «*Հոս գեղ չէ, տղա՛ք: Մեպտեմբերին, դպրոց գալէ առաջ՝ չմոռնաք մազերնիդ յապաւել...*»:

– Հինգ ընկերներս ալ զարմացած, – կը գրէ Նուրիկեան, – մէկ անգամէն շօշափեցինք մազի առատութիւնը, որ կը դիզուէր մեր գիւղացիի գլուխներուն վրայ: Եւ բոլորս ալ, այդ օր, հայերէնի մեր առաջին դասը առինք թշկատինցիէն՝ սորվելով իմաստը «յապաւել» բառին: Դաս մը, զոր պիտի չմոռնայինք երբեք:

Սեպտեմբերը եկաւ շուտով: Աշակերտները կենդանութիւն բերին դպրոցին: Հնչեց օրուան առաջին պահի զանգը: Կարդա՛նք Նուրիկեանը.

«Նստարանները գրաւուած են բոլորն ալ. տղաքը ցած ձայնով կը խօսին, կը կատակեն իրարու հետ: Դուռը կը բացուի: Զայները կը մարին, դէմքերը կը լրջանան: Կամացուկ մը, կատուի քայլերով՝ ներս կը մտնէ ուսուցիչը, Յովհաննէս էֆէնտին: Ոտքի վրայ են տղաքը, մէկ շարժումով, կարծես միեւնոյն զսպանակէն ազդուած:

– Բարի լո՛յս, տղա՛ք, – կ'ըսէ թշկատինցին, ժպիտը աչքերուն: Եւ ձեռքով նշան կու տայ որ նստին տղաքը: Հայրական բան մը կայ իր շարժումներուն ու իր նայուածքին մէջ. ժպիտին տակ անգամ՝ տրտմութեան ցոլք մը կը պահէ կարծես:

Հասակը միջակ է. միջակէն ալ քչիկ մը վար թերեւս:

– Պաշտօնապէս՝ «Գանձարան»-ն է ձեր դասագիրքը, Անտոնեանի կազմածը, – կ'ըսէ: Կը կարդաք զայն մաս առ մաս, եւ միասին կը խօսինք հոն տրուած կտորներուն եւ հեղինակներուն մասին: Բայց ես գրականութեան դասագիրքի չեմ հաւատար այնքան: Դասագիրքը մե՛նք ենք. ես եւ դուք, եւ կեանքը՝ որ կը յորդի մեր շուրջը, ամէն օր, ամէն վայրկեան»:

Անուանի ուսուցիչը անմիջապէս կը յիշեցնէ իր պատանի սաներուն, թէ ամէն շաբաթ շարադրութեան հերթական նիւթ մը պիտի տայ իրենց: Սակայն կ'ոզէ որ մոռնան «աստղերն ու լուսինը, վարդն ու սոխակը, եւ ոտքերնին դնեն իրական գետնի վրայ, կեանքի՛ գետնին վրայ»:

Քանի մը վայրկեան անց աշակերտները պիտի նկատէին, թէ թշկատինցին պատուհանին մօտենալով՝ իր հայեացքը սեւեռած կը պահէր դուրսի հեռաւոր մէկ տեսարանին վրայ: Ո՞վ կրնար ենթադրել, թէ այդ ընկերներուն ուսուցիչը դուրսի այդ տեսարանէն կը ջանար որսալ շարադրութեան նիւթ մը...: Ու գրատախտակին վրայ անմիջապէս կը գրէր. – «Գաւառացիին տանիքը»:

– Այս վերնագրով, – կը շարունակէ Նուրիկեան, – գաւառի գրականութեան մեր վարպետը քառասունհինգ վայրկեանի մէջ կու տար լման պատկերը դրացի տանիքին, զոր դիտած էր քիչ առաջ. – պլղուրն ու ծեծածը եւ քաղցրեղէնները՝ զորս գաւառացի տանտիկինը պատրաստեր ու արեւին տակ հաներ էր այդ օրերուն. նոյն իսկ ճնճղուկները, որոնք կու գային գողնալ իրենց կերը տանիքին վրայէն:

Թշկատինցի նիւթին ամփոփումը պատը կը գրէր՝ մարգարիտի հատիկներ յիշեցնող կոկիկ ձեռագրով: Տղաքը կ'ընդօրինակէին:

Յաջորդող դասապահներուն, երբ շարադրութեան կարգը կու գար դարձ-

եալ, Թլկատինցի մի՛շտ կը կրկնէր իր թելադրանքը. – նիւթերը քաղել չըջապատէն:

Այսպէս, օր մը կ' ուզէր որ նկարագրեն քաղաքին այգեստանը, այլ օր մը՝ գերաններ շալկող բեռնակիրները, ուրիշ անգամ՝ ջրկիր Յակոբ աղբարը: Գրուածիւնները տուն կը տանէր, կը սրբագրէր, յետոյ կը վերադարձնէր՝ բերանացի կամ գրաւոր թելադրանքներով: Կը զգուշացնէր ածականներու անտեղի ու առատ գործածութենէն: Երբեմն, իր գրած քրոնիկներէն ու թատերակներէն հատուածներ ալ կը կարդար դասարանին մէջ, որոշ մեկնաբանութիւններով: Կը կարդար նաեւ ժամանակակից գրողներէ, ինչպէս՝ Օշականի «Խոնարհներ»-էն:

Այս բոլորով՝ դասարանին մէջ կը ստեղծուէր գրական վարակիչ մթնոլորտ մը: Ինքնավստահ տղաքը կը սկսէին պատրաստել ձեռագիր թերթիկներ, որոնք ձեռքէ-ձեռք կը փոխանցուէին: Այդպիսի թերթիկ մըն ալ խմբագրեր էր ինք՝ Բենիամին Նուրիկեան, «Հասկեր» անունով, բաւական երկար շաբաթներ...: Իսկ Թլկատինցի մասնաւոր հաճոյքով ու հպարտութեամբ կը նայէր այդ թերթիկներուն վրայ, զգալով որ գրական հոնտ մը հետզհետէ կը սկսէր ծաղկիլ իր սաներուն հոգիին մէջ...:

Նուրիկեան դեռ կը պատմէ, որ հոգեր շա՛տ ունէր իրենց ուսուցիչը: Կար ընտանիքին ապրուստի հրամայականը (ունէր ինը զաւակ, կին ու ծերունի մայր մը), կար դպրոցին նիւթական ու բարոյական հոգը (դպրոցը գոյատեւումի լուռ պայքար կը մղէր Խարբերդի միսիոնարական կրթարաններուն դէմ), կար իր գրական աշխատանքներուն մղում տալու ցանկութիւնն ու կիրքը, որոնք յաճախ կը ջլատուէին դպրոցին այլատեսակ հոգերուն տակ: Այս բոլորը՝ «առնուազն երեք մարդու կամքն ու ժամանակը կը պահանջէր»:

Ահա՛ այսպիսի մարդ մըն էր Թլկատինցի: Այսպիսի մեղուանոց մըն էր «Թլկատինցիի դպրոցը»՝ հայութեամբ խայտացող երբեմնի Խարբերդի Ս. Յակոբայ թաղին մէջ...:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

(Շար. 2)

ԱՐԽԻԻԱՅԻՆ

**1915-Ի ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱԿԱՆԱՏԵՄ
ԽԱԶԱՏՈՒՐ ՏՈՒՄԱՆԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ**

ԷՐԷՅԼԻ

Կէսօրին հասած էինք էրէյլիի կայարանը: Ոստիկանները մեզ առաջնորդեցին խան մը ու բանտարկեցին ձիերու եւ զանազան անասուններու ախոռի մը մէջ: Մեր թիւը 557 հոգի էր:

Վակոններուն վրայ բնաւ մարդ չկար: Ոմանք սառած ինկած, իսկ ուրիշներ կամուրջներու տակէն անցած ատեն քարերուն զարնուելով մեռած էին: Վակոններուն եզերքին քարացած արիւնները մեզ այդպէս մտածել կու տար:

Արամը շապիկ մը, անդրավարտիք մը եւ գլխարկ մը (Ֆէս) միայն ունէր, իսկ միւս հագուստները հացի հետ փոխած էր: Ես, 15 փարայ (դրամ) միայն ունէի, անով ալ 750 կրամ հաց գնեցի, որուն կէսը Արամին տուի:

Երեկոյ էր: Արամ, ըսի, երկուքս մէկ վերարկու միայն ունինք քնելու համար, նախ ես կը քնեմ, դուն քիչ մը քալէ որ չպաղիս, յետոյ, կէսգիշերին դուն կը քնես եւ ես շրջան մը կ'ընեմ չպաղելու համար: Կէսգիշեր էր, վերարկուս Արամին տուի եւ ես շրջելու սկսայ: Տեսայ երիտասարդներ, որ ձիերուն աչքերը մատերով կը փորէին եւ աղբերուն մէջէն գտած գարիները կ'ուտէին: Տեսարանէն յուզուած բակ ելայ: Դուրսը զով էր եւ լուսաւոր՝ պայծառ լուսինով մը: Մօրուսաւոր ծերունի մը հրացանին սուին մը անցուցած, պահակ կեցած էր դռան դուրսի կողմը: Ես այդ պահակին կողմը կ'երթայի:

Հրացանը իմ կոմս դարձուց եւ հրամայեց չմօտենալ:

– Քեզի բան մը պիտի հարցնեմ հայրիկ, ըսի:

– Գնա՛ դիմացս, այն քարին վրայ նստէ՛ եւ հարցուր, ըսաւ:

Հրամանը կատարեցի:

– Հայրիկ, մեզ ո՞ւր կը տանին:

– Զաւակս, ըսաւ ծերունին, երբ ձեզ այս վիճակին կը տեսնեմ սրտէս արիւն կ'երթայ: Երկար գիշերներ լացած ու աղօթած եմ ձեզ համար: Դո՛ւք ալ աղօթեցէք, որ Ամենակարող Աստուած ձեզի համար ազատութեան դուռ մը բանայ եւ այս սրիկաներուն ձեռքէն ազատուիք: Ամէն օր երեկոյ եւ առաւօտ Աստուծոյ կ'աղօթեմ, որ ձեզ այս վիճակին հասցնելու պատճառ եղողներ-

րը կուրանան եւ պատառ մը հացի համար դուռէ դուռ մուրան: Վա՛խ գա-
 ւակներս, վա՛խ: Զաւակս, իմ լսածիս համաձայն կառավարութիւնը որոշած
 է ձեզ՝ ազգովին, Արաբիոյ անապատները (չէօլերը) տանիլ եւ ասդին ու ան-
 դին, անօթի եւ ծարաւ պատցնելով մեռցնել, մինչեւ որ ձեզմէ մէկ հոգի ողջ
 չմնայ: Յետոյ լսեցինք, որ քանի մը տեղ ջարդ կազմակերպուած է: Լսեցինք
 նաեւ Ատանայի Պողոզլեան ըստած տեղը տղամարդիկը գատելով՝ բոլորը
 մորթած եւ ձորը լեցուցած են: Ալ ի՛նչ ըսեմ զաւակս: Ընողներուն աչքերը
 քորնան եւ պատճառ եղողները օր ու լոյս չտեսնեն: Ես ամէն օր կ'աղօթեմ
 ձեզի համար, զաւակս, դուք ալ աղօթեցէ՛ք: Աստուած ամէն բանի կարող է:

Վերադարձայ ախոռ եւ երկա՛ր մտածեցի:

17 օրեր նոյն երազը տեսած էի, երբ դպրոցի աշակերտ էի: Երազիս մէջ կը
 տեսնէի, որ նաւ մը նստած եմ, որուն ղեկը կոտրած էր եւ ալիքներէն կը
 քշուէր: Քանի-քանի անգամներ փոթորիկներու հանդիպեցաւ, բայց չընկըղ-
 մեցաւ: Ալիքները նաւը քշելով ծովեզերքի մը մօտեցուցին: Եզերքը ծեր կին
 մը ծառի ճիւղ մը երկարեց, ես այդ ճիւղը բռնելով ծովէն դուրս ելայ:

Ազգային հիւանդանոցի գանձանակը պատցնող Գրիգոր էմմին (Գուշա-
 կողը) ինձ ըսած էր, թէ տասը տարուան ճամբորդութիւն մը ունիմ: Զինք
 ծաղրած էի, որովհետեւ գուշակողներուն չէի հաւատար:

– Հիմա ըսածներս մանրամասնութեամբ գրի առ, ըսաւ, եւ երբ այդ բա-
 ները քեզի պատահին՝ այն ատեն կ'ըսես, թէ Գրիգոր էմմին խենթ մը չէ
 եղեր:

Ստիպեց, որ օրացոյցին տակը գրեմ: Գրեցի՝ ծաղրանքով, ըսածներուն
 մեծ մասը կատարուած էր արդէն ճշդութեամբ:

Ծերունի պահակը ինծի հետ յուզմունքով խօսած էր: Ուրեմն, ըսածնե-
 րուն մէջ ճշմարտութիւններ կային: Ծովն ինկած էինք: Մեր նաւին ղեկը
 կոտրուած էր արդէն: Ալիքներէն կը քշուէինք: Ուրիշ ոեւէ միջոց չունէինք:
 Հոսկ, պէտք էր աղօթել:

Աղօթքը կարօտ հոգիներու ջուրն է: Անծանօթ դժբախտութեանց վախե-
 րը մարդուն աղօթել կը սորվեցնեն: Աղօթքը Աստուծոյ հետ մարդուն ունե-
 ցած հաղորդակցութեան անթել հեռագիրն է: Ես կ'աղօթէի ախոռին չորս
 կողմը շրջան ընելով, մինչեւ լոյս:

Առաւօտեան, լուսաբացին մարդ մը նամակ գրեց տեղույն գայմագամին:
 Խնդրագիր մըն էր: Մեր հաւանութիւնը առնելէն ետք ուղարկեց գայմագա-
 մին: Գայմագամը հազարապետի մը հետ մեր մօտ եկաւ: Ամէնքս դուրս կան-
 չուեցանք եւ ծոնկի վրայ նստանք եկողներուն առջեւ

– Զաւակներս, ըսաւ հազարապետը, մեր բարեխնամ թագաւորը ձեզի
 վայրեր յատկացուցած է: Հետեւաբար, մենք ստիպուած ենք ձեզ ղրկել հոն՝
 ուր որոշուած է: Հրամանը վերէն է:

Գայմագամը մեզմէ իւրաքանչիւրին երկուքական օգա հաց բաժնել տը-
 ւաւ:

Առտուրնէ ի վեր Արամ անօթի էր եւ խորհուրդս կ'առնէր գլխարկը հացի հետ փոխելու համար: Ես կ'ընդդիմանայի, ըսելով՝ գլխարկդ պահէ, Աստուած ողորմած է: Քիչ մը քովէս հեռացաւ: Գլխարկը չորս օգա հացի հետ փոխեց: Այդ հացերէն երկուքը ինծի տուաւ: Տակաւին այդ հացը չկերած գայմագամին չորս օգա հացը ստացանք:

– Հիմա, այսօրուան ճամբու պաշարնիդ ստացաք: Այսուհետեւ ձեզ ամէն տեղ օրուայ ուտելիքներէն պիտի տան: Հիմա ոտքի ելէ՛ք եւ հետեւեցէ՛ք այս ժանտարմաներուն:

Երկու ձիաւոր ժանտարմաներ իրենց ձիերը կը վազեցնէին մեր առջեւէն՝ թելադրելով որ շուտ վազենք ու երկաթուղին չմեկնած հասնինք:

Մենք գայմագամին մարդասիրական խօսքերէն ոգեւորուած կը վազէինք ձիերուն ետեւէն: Այսպէս վազեցինք մէկ ու կէս ժամ եւ հասանք ընդարձակ դաշտ մը, ուր ցրուած հազարաւոր տարագիրներ, այր մարդ, կիներ, ծերեր, տղաներ, նորածին մանուկները գրկած կամ շալկած խուռն բազմութիւն մը կային: Ժանտարմաները մեզ անոնց միացուցին եւ վերադարձան: Մինչեւ այն ատեն գաղթականներ չէինք տեսած: Կը կարծէինք թէ միայն ամուրիներն են որ հաւաքուած են Կ. Պոլիսէն:

– Այսպէս ո՞ւր կ'երթաք, հարցուցի տարիքաւոր մարդու մը:

– Ես ալ չեմ գիտեր, ըսաւ, շաբաթ մըն է որ կը քալենք մեր առջեւէն գացողներուն ետեւէն ու չենք ալ գիտեր թէ ո՞ւր պիտի երթանք:

Յիշեցի ծերունի պահակին ըսածը, թէ՛ «Ազգովին պիտի տարուիք Արաբիոյ անպատեները անօթի, ծարաւ թափառելով՝ մեռնելու համար»: Իմ կարգացած պատմութեանց յուշերուն մէջ, նմանօրինակ անգթութեանց բնաւ չէի հանդիպած եւ ոչ ալ առասպելներուն մէջ նման բան լսած էի: Մենք ալ անոնց միացած կը քալէինք: Մեզմէ ոմանք իրենց ազգականները գտնելով առժամեայ սովէն ազատուած էին:

Ես ժողովուրդին մէջ շրջան կ'ընէի՝ աստ, անդ ծանօթ մը գտնելու յոյսով: Մինչ Արամը ինձ կը հետեւէր՝ հացերը գրկած:

– Օ՛, բարե՛ւ, բարե՛ւ, ըսաւ էրզինկացի Արթին էմմին:

48 տարեկան մարդ մը, որ իմ աշխատած ճաշարանին մէջ ծեծուած սուրճ ծախելու կրպակ մը ունէր, իր փեսային հետ մասին: Ինձմէ շա՛տ առաջ ձերբակալուած էին երկուքն ալ եւ կրպակնին գոց էր:

– Դրամ ունի՞ս, հարցուց:

Ես այնպէս կարծեցի, թէ ինձմէ փոխ դրամ պիտի ուզէր... արդէն բնաւ դրամ չունէի:

– Հօրեղբայր, ըսի, բնաւ դրամ չունիմ:

– Հոգդ մի՛ ընէր, ես տակաւին 17 ոսկի ունիմ, միասին կ'ուտենք:

– Հօրեղբայր, ես մինակ չեմ, ընկեր մը ունիմ հետս եւ առանց անոր չեմ կրնար բան մը ուտել:

– Այդքան շա՛տ կը սիրես ընկերդ:

Քիչ մը մտածեց եւ ըսաւ.

– Է, ան ալ մեր հետը թող ճաշէ:

Միւս օրը հանդիպեցայ Իւսկիւտարի բաղնեպան Արթինին: Ինչպէս ընթերցողը կը յիշէ բանտին մէջ, բանտին մէջ ծանօթացած էի իրեն, որ 13 երիտասարդներ կը կերակրէր:

Երթանք միասին ճաշելու, առաջարկեց Արթին:

– Հօրեղբայր հիմա ես բնաւ դրամ չունիմ:

– Դրամ չունենալը պատճառ մը չէ, որ անօթի մնաս: Ես տակաւին 172 ոսկի ունիմ: Միասին կ'ուտենք մինչեւ որ հատնի: Այնուհետեւ Աստուած ողորմած է:

– Հիմա քանի՞ հոգի ունիս սնուցանելու:

– Տասն եւ եօթը հոգի: Քալէ դուն ալ մեզի հետ:

– Հօրեղբայր հիմա ուրիշ ծանօթ Արթինի մը հետ կը ճաշենք ես եւ ընկերս, որ Կ. Պոլիսէն ծանօթ մըն է:

– Լաւ ուրեմն, եթէ անկէ զատուիք ինծի եկէ՛ք, մի՛ քաշուիք:

– Շատ շնորհակալ եմ:

*

* *

Մեծ վիշտերը կը հաւաքեն մարդիկ եւ տեղի կու տան մարդկային ընկերութեանց զաղափարական հոսանքներուն: Վիշտը մարդկանց հոգին հերկող գործիք մըն է: Ուսումը միտքը կը մշակէ, իսկ վիշտը հոգին:

Վշտակիրի մը տեսարանը մեր սրտին մէջ կը ծնի գթութեան սաղմը, որ հասուննալով կը վերածուի բարութեանց բոյսերու եւ պտուղներու:

Ամէն կողմ ցրուած խուռն բազմութեանց մէջ վշտակիրներ չափազանց շատ էին:

Կային իրենց զաւակը կորսնցնող մայրեր, սիրելիներէն զատուած մարդիկ, կանայք, հիւանդներ, քալելու անկարող մարդիկ, ծերեր ու մանուկներ: Բեռնաւորուած մարդիկ եւ կիներ, որոնք իրենց բեռան տակ կքած հազիւ կարող էին քալել: Այդ բեռները իրենց զաւակներուն կենսական կարիքներուն ծանրութիւններն էին, որոնց մշտական պէտքը ունէին:

Այդ վշտակիրներուն տեսարանները փոքրիկ խումբերու վերածած էր տարագիր ամբօխը: Իրարօգնութեան պարտականութիւնը արթնցած էր ամէնուն մէջ: Շատերը իրենց ունեցածը՝ իրենց հետ քալողներուն համար համահաւասար կը ծախէին:

Մեր խումբը կը բաղկանար, մեր երկուքէն զատ, 17 տարեկից այր մարդոցմէ: Ամէնքն ալ Կ. Պոլիսէն աքսորուած էին:

Առտուան արեւածագին ճամբայ կ'ելլէինք եւ կը քալէինք մինչեւ երեկոյեան մայրամուտը: Կէսօրին, ճամբուն եզերքը քիչ մը հանգստացանք՝ ուտելու համար:

Կը քալէինք աննպատակ, մեր առջեւէն ընթացող խուռներամ բազմութեան հետեւելով: Ոչ ոք գիտէր թէ մինչեւ ո՞ւր պիտի քալէինք: Ճամբան անվերջ էր...:

Ամէն առաւօտ հեծեալ ժանտարմաները կը մտրակէին այն՝ որ արեւածագէն ետք նստած կամ պառկած կը գտնուէր:

Պէտք էր քալել: Կը քալէր ամէն ոք՝ ծեր, մանուկ, հիւանդ թէ անկարող: Չի շարժողը անխղճօրէն կը մտրակուէր հեծեալներուն կողմէ, որոնք ուղղակի գլխուն կը հարուածէին, ոմանց աչքին եւ երեսին:

Դառնութիւնը ռիակալութեան թոյն կ'արտադրէ: Անխղճութենէ դառնացած սրտեր՝ լալով եւ անիծելով կը քալէին՝ իրենց վիշտը չալկած:

Երկրորդ օրուան առաւօտն էր: Խմբովին կը քալէինք: Տեսայ պառաւ կին մը, հարս մը եւ հինգ մանուկներ, ճամբուն եզերքը քաշուած: Պառաւը եւ երիտասարդ կինը կու լային: Մօտեցայ իրենց եւ հարցուցի.

– Ինչո՞ւ կու լաս մայրիկ:

– Զաւակս, ըսաւ պառաւը, այս կինը իմ հարսս է եւ ասոնք ալ թոռներս: Ամուսինս գինուոր տարած են: Մարդ չունինք: Այս փոքրիկներուն մէկը գրկած եւ միւսը շալկած կը տանիմ, հարսս ալ նոյնպէս, իսկ հինգերորդը՝ այս աղջիկը ի՞նչ ընենք, յոգնեցաւ չի կրնար քալել այլեւս:

– Քանի տարեկան է:

– Ութը տարեկան, տասը օրէ ի վեր կը քալենք:

– Աղջնակն ալ ինծի տուէք, ըսի, ես կը շալկեմ: Ամէն երեկոյ ձեզ կը յանձնեմ:

Յոյց տուի մեր խումբը, որոնց հետ ընկերովին պիտի քալէինք:

18 օր այդ փոքրիկը շալկեցի մինչեւ Օսմանիէ: Երբեմն-երբեմն կը քալեցընէի գինք, կազդուրուելու համար:

Պառաւը եւ հարսը միւս չորսին շալկած եւ գրկած մեզի հետեւեցան մինչեւ Օսմանիէ:

Օսմանիէ տարագիրներու խումբ մը նստած էր, վրաններով: 30 օրէ ի վեր հոս ենք, ըսաւ մէկը:

Մենք ալ փոքրիկ վրան մը լարեցինք հոն, քանի մը օր հանգստանալու համար: Փոքրիկ Հռիփսիմէն՝ (այսպէս կը կոչուէր այն աղջիկը, որ շալկած էի) եկաւ ըսելու, թէ մեծ մայրիկը գլիս կը կանչէ: Իրեն ընկերացայ:

– Զաւակս, ըսաւ պառաւը, մենք հոս ազգականներ գտանք եւ հիմա Ատանա պիտի երթանք ու գիւղի մը մէջ պիտի հաստատուինք: Քեզի կանչեցի որ այսօր միասին ճաշենք իբրեւ երախտագիտութեան հատուցում: Եթէ հարուստ ըլլայինք քեզի վճարում մըն ալ կ'ընէինք, բայց չունինք: Վարձքդ Աստուծմէ առնես: Հրամմէ՛ այսօր մեր հետը ճաշէ: Քեզի համար այս ձուածեղները շինեցինք:

– Շնորհակալ եմ մայրիկ, իմ բաժինս ալ այս փոքրիկներուն տուէք եւ ես շատ գոհ կը մնամ, ըսի եւ հեռացայ:

ՆՇԱՆ ԷՄՄԻՆ

Բոլորս այսպէս կը կոչէինք մեր խումբին ընկերացող 65 տարեկան մարդ մը, որ իր քաղցրախօսութեամբը մեր մէջ հոգեկան զուարթութիւն կը ստեղծէր:

Օսմանիէ հասնելու մէկ օր մնացած էր: Լերան մը կողքին հողագոյն լաթեր հագած՝ վեց մարդիկ կ'իջնէին:

– Ասոնք գողեր ըլլալու են, ըսաւ մեզմէ մէկը:

Մարդիկը լեռնէն իջան եւ ճամբուն եզերքը բարձունքի մը վրայ նստան, ուրկէ կ'անցնէին տարագրեալները: Կը տեսնէինք որ ոչ ոքի չէին դպչեր:

Ո՞վ էին արդեօք:

– Ամէն մէկը իր ունեցած դրամը ձեռքին թող բռնէ: Ես ձեզմէ յիսուն մեթր յառաջ երթամ եւ տեսնեմ որոնք են: Երբ ձեզի նշան ընեմ, ձեր ունեցած դրամները թուփերուն մէջ նետեցէ՛ք: Թող կողոպտուինք յետոյ կը վերադառնանք փնտուելու, ըսաւ Նշան Էմմին:

Մենք կը հետեւէինք Էմմին: Տեսանք այդ վեցը վար իջան իրենց տեղերէն եւ ողջագուրուեցան Նշան Էմմին հետ: Նշան Էմմին մեզ կանչեց ձեռքի նշանով: Բոլորս միասին վեց մարդոց նստած վայրը ուղղուեցանք եւ շրջանակաձեւ նստանք բարձունքին վրայ: Խօսակցութենէն հասկցանք որ լեռնէն իջնողները հայ յեղափոխական խումբի մը կը պատկանէին, եւ նշան Էմմին ալ իրենց ընկերներէն էր:

Մէկուկէս ժամ մնացինք հոն: Նշան Էմմին իր բոլոր ընկերներուն մասին տեղեկութիւններ ստացաւ՝ միշտ կեղծ անուններ յիշելով: Ասոնք մեզ տեղեկացուցին կռիւի ճակատներուն դրութեանց մասին: Մեզ յայտնեցին որ իրենց խումբը Զէյթունի լեռներուն ... տեղը կը գտնուին:

Նշան Էմմին ուզեց իրենց հետը երթալ:

– Ո՛չ, ըսին, դուն բաւական ծեր ես, եւ մենք յարատեւ շարժումի մէջ ենք: Այնպէս որ քեզի համար ծանր է: Վաղը կէսօրին Օսմանիէ պիտի հասնիք, ըսին: Մեր ընկերներէն ... (կեղծ անուն մը) Օսմանիէ պիտի գայ՝ քրտական հագուստ հագած եւ ջորիի մը առջեւէն քալելով: Ան քեզի ուրիշ նորութիւններու մասին կը տեղեկացնէ: Օսմանիէի քամբին մէջ շրջան պիտի ընէ՝ մեզի նոր ընկերներ գտնելու համար: Դո՛ւն ալ ուշադիր եղիր, եթէ նոր ընկերներու հանդիպիս իրեն ծանօթացուր:

Վեց ֆետայիները Նշան Էմմին հետ ողջագուրուելէ յետոյ մեզմէ եւս հրաժեշտ առին:

Մենք ճամբայ ելանք եւ միւս կէսօրին հասանք Օսմանիէ:

Օսմանիէի դաշտին մէջ 30,000-է աւելի տարագիրներու վրաններ կային: Ամէն մէկը իր կրցած ձեւով վրանի նմանող ձեւ մը տուած էր իր հանգստարանին՝ արեւէն ու անձրեւէն պաշտպանուելու համար:

Հոն հասնելուս երկրորդ օրն էր: Քիւրտի հագուստով մարդ մը շրջան կ'ընէր վրաններուն մէջ՝ շատ արագ քալուածքով: Վրանի մը դուռը կեցաւ, քիչ մը խօսեցաւ մարդու մը հետ եւ դէպի լեռ ուղղուեցաւ: Մտաբերեցի որ Նշան էմմիին ըսած էին թէ «մեր ընկերներէն մէկը պիտի գայ Օսմանիէ քիւրտի հագուստով»: Հեռուէն հետեւեցայ այդ քիւրտին եւ հարցուցի այն մարդուն թէ ի՞նչ ըսաւ քեզ այդ քիւրտը:

– Քիւրտ մը չէ, հայ մըն է, ըսաւ: Այս երեկոյ այդ լեռան տակը երեւցող ամենաբարձր ծառին տակը հրաւիրեց զիս: Պիտի հոն երթամ մթնելու ատենը, տեսնեմ ի՞նչ պիտի ըսէ:

Ես ալ գացի Արամին հետ ու հոն տեսայ քիւրտի հագուստով երկու հայեր, մէկը բաւական տարիքոտ, իսկ միւսը՝ երիտասարդ, որ ջորիի մը պախուրցը բռնած կը սպասէր եւ չէր խօսեր:

Երիտասարդներու բազմութիւն մը եկած էր հոն:

Տարիքոտ մարդը մեզի հրամայեց, որ կարգի շարուինք, ապա համրեց մեզ: 352 անձ: Յետոյ, մեր մէջէն գատեց 17 երիտասարդ եւ մէկ կողմ կեցուց, որոնց մէջն էր Արամը: Աղաչեցի որ ինձ ալ անոնց մէջը ընդունին:

– Դուն կազմով տկար ես եւ երկար ճամբորդութեան անյարմար:

– Արամը ինձի նայեցաւ: Զէր ուզեր ինձմէ բաժնուիլ:

– Դուն գնա՛, վաղը ես կու գամ քեզ կը գտնեմ, ըսի:

– Հիմա դուք, ըսաւ 17-ին, այս երիտասարդին հետեւեցէք:

Յետոյ երիտասարդին ըսաւ (այն որ քիւրտի հագուստ եւ ջորի ունէր)։

– Այս գիշեր այս մարդիկը կը տանիս ... ձորը: Հոն, լուսաբացին մօտ երեք անգամ չափալի ձայն կը հանես, երբ այդ ձայնը հանես դիմացի սարին վրայ մարդ մը պիտի յայտնուի, իսկ երբ մարդը տեսնես երկու թեւերդ օդը կը հանես, մարզանք ընելու պէս: Տեսած մարդդ ալ նոյնը պիտի ընէ: Այն ատեն այս մարդիկը զրկէ դէպի գառիվար ձորը, եւ դուն ջորին նստած հեռացիր:

– Դուք ալ, ըսաւ մեզի, ձեր տեղը գացէ՛ք, ուրիշ անգամ կրկին կու գամ:

17 անձեր ջորեպանին հետ մեկնեցան եւ մենք վերադարձանք: Նշան էմմիին պատմեցի տեսածներս ու լսածներս: Ան բնաւ չհետաքրքրուեցաւ: Կերեւի ինքը արդէն տեղեակ էր...:

Իսկ ես, բոլոր գիւղերը երթալ ծրագրեցի՝ զիրենք գտնելու համար:

ԽԱԶԱՏՈՒՐ ՏՈՒՄԱՆԵԱՆ

(Շար. 3)

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՐԻԲԵՐՈՐԴԸ...

1966 թուականի Յունուարին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Հասկ» պաշտօնական ամսագիրը «Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ» խորագրին տակ կը ծանուցանէր հետեւեալը.-

«Հիւսիսային Ամերիկայի հայ պատուական ազգայիններէն Տիար Գէորգ Թօփալեան (գրական անունով՝ Գ. Մելիտինեցի) եւ իր կինը՝ ազնուափայլ Տիկին Նարգուհի, հաստատած են գրական մրցանակ մը հետեւեալ տրամադրութիւններով եւ առաջադրութիւններով» (տե՛ս «Հասկ», 1966, էջ 25):

Վերեւի արձանագրութեան կը հետեւի 20 յօդուածներէ բաղկացած կանոնագիր-ծրագիր մը, թէեւ այս բնորոշումը չէ նշուած ո՛չ «Հասկ» յիշատակուած համարին եւ ոչ ալ 1970-ին Անթիլիասի տպարանէն լոյս ընծայուած եւ «Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ» խորագրուած 15 էջանոց հայերէն եւ անգլերէն գրքոյկին մէջ:

Մրցանակին հիմնական նպատակն էր՝ քաջալերել հայ գրողներն ու անոնց մրցանակի արժանացած երկերը ո՛չ միայն հրատարակել, այլեւ նիւթական պարգեւ մըն ալ տալ անոնց հեղինակներուն:

Նոյն այս ամուրը 1973-ին երկրորդ նուիրատուութեամբ մը կը հաստատէր երկրորդ հիմնադրամ մը՝ «Գէորգ Մելիտինեցի Վերահրատարակման Հիմնադրամ» անունով, որ կը նպատակադէր ապահովել «Հայ մշակոյթի համար արժէք ներկայացնող հրատարակուած եւ սպառած գործերու վերահրատարակութիւնը»:

Երկրորդ հիմնադրամի հաստատումէն ետք, կարճ շրջան մը, հրատարակուած հատորները կը կրէին «Հրատարակութիւն Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի եւ Վերահրատարակման Հիմնադրամի Յանձնաժողովի» արձանագրութիւնը: Ապա՝ կրկին՝ «Հրատարակութիւն Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի»:



Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի հիմնադիր բարերարին փափաքով կազմուած առաջին դատակազմի անդամները եղած են՝ Գարեգին Եպս. Սարգիսեան, Ներսէս Մ. Վրդ. Բախտիկեան, Կարօ Սասունի (ատենապետ), Բիւզանդ Եղիայեան (ատենադպիր), Բաբգէն Փափազեան, Հրաչ Տասնապետեան եւ Պօղոս Մնապեան:

Յաջորդող տարիներուն դատակազմի անդամները, զանազան պատճառներով, փոփոխութեան ենթարկուած են, օրուան կաթողիկոսին տնօրինումով, խորհրդակցաբար բարերարին հետ: Ատենապետի պաշտօնը յաջորդաբար վարած են՝ Կարօ Սասունի, Հրաչ Տասնապետեան, Պօղոս Մնապեան, Գէորգ Գանտաշարեան, Պէպօ Սիմոնեան, Ժիրայր Դանիէլեան (այժմու):

1966-ին հիմնուած Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի առաջին հրատարակութիւնը կ'ըլլայ Մուշեղ Իշխանի «Տառապանք» Քերթուածներու հատորը (1968), որուն, նոյն տարին, կը հետեւին երկու այլ հրատարակութիւններ:

1968-էն ի վեր անցած են 52 տարիներ: Այդ տարիներու ընթացքին, հակառակ Լիբանանը հարուածող բազմաթիւ աղէտներուն, անդուլ շարունակեց բանիլ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մամուլը եւ լոյս ընծայել թանկարժէք հրատարակութիւններ:

Նոյն հետեւողականութեամբ շարունակուեցան լոյսին գալ Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակին արժանացած գրական, պատմական, մշակութային գործեր, նաեւ վերահրատարակուիլ «սպառած եւ Հայ մշակոյթի համար արժէք ներկայացնող» հրատարակութիւններ, ինչպէս նշուած է 1973-ին պատրաստուած եւ հրատարակուած «Միացեալ Կանոնագիր»-ին մէջ:

Այսօր, 2020 թուականին, Կաթողիկոսարանի տպարանէն լոյս կը տեսնէ Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի հրատարակութեանց ՀԱՐԻԻՐԵՐՈՐՈՐԴԸ, որ ծանօթ բեմադրիչ եւ թատերագիր Վաչէ Ատրուների «ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ԼԵՌԸ» թատերագութիւններու հատորն է:

Շարքը երկար է այն հեղինակներուն, որոնց գրական ու այլազան գործերը լոյս տեսած են այս մրցանակին կողմէ, իբրեւ վերահրատարակութիւն եւ նոր հեղինակութիւն:

Եթէ բոլոր անուններու յիշատակութիւնը երկար, չա՛տ երկար պիտի ըլլայ, սակայն, պիտի փորձեմ ներկայացնել անոնցմէ ծաղկաքաղ մը:

ա) Վերահրատարակուած հեղինակներ.– Գրիգոր Նարեկացի, Կոստան Զարեան, Յակոբ Օշական, Արամ Հայկազ, Բենիամին Թաշեան, Նիկողոս Սարաֆեան, Վախթանգ Անանեան, Օհան Կարօ, Արշակ Ա. Ալպօյաճեան:

բ) Ծանօթ հեղինակներ.– Մուշեղ Իշխան, Նշան Պէշիկթաշլեան, Մարտիրոս Մինասեան, Պօղոս Մնապեան, Արմէն Դարեան, Վահէ Օշական, Սմբատ Փանոսեան, Եղուարդ Տասնապետեան, Եղուարդ Պօյաճեան, Աբրահամ Ալիքեան, Գրիգոր Պըլտեան, Արսէն Երկաթ, Բաբգէն Փափազեան, Յակոբ Մնձուրի, Նուպար Չարխուտեան եւ ուրիշներ:

գ) Նոր անուններ.- Վարանդ, Վարդան Մատթէոսեան, Փանոս Ճերանեան, Յակոբ Նալպանտ, Մարուշ Երամեան, Յակոբ Միքայէլեան, Գէորգ Եագըճեան, Զօհրապ Գիրէշեան, Արա Արծրունի, Յակոբ Մարգիսեան, Յակոբ Ադամեան, Շուշիկ Տասնապետեան, Յակոբ Պալեան, Զաւէն Մսրրլեան, Խաչիկ Խաչեր, Պերճուհի Աւետեան, Ալեքսան Պէրէճիքլեան, Կարօ Աբրահամեան, Գառնիկ Գալստեան եւ ուրիշներ:

դ) Թարգմանական եւ օտարալեզու գործեր.- Դանիէլ Վարուժան, J.M. Thierry, Apig Zorian, Zaven Messerlian, Arch. Gorun Babian, Իտա Ալէմետտին, Իպրահիմ Ալ-Խալիլ, Քեմալ Եալչըն, Լէօ Թոլսթոյ:

Երբ 1995-ին Արամ Ա. Կաթողիկոս կը դառնայ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին գահակալը, իր այլազան շինարարական ու մշակութային գործունէութեանց առընթեր եւ բազմազբաղ վիճակին, յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ Կաթողիկոսարանի հրատարակչական գործունէութեան: Նորին Սրբութեան գահակալութեան օրերուն կ'աւելնայ թիւը հրատարակչական հիմնադրամներուն, որոնցմէ իւրաքանչիւրը կ'առաջնորդուի յատուկ յանձնախումբով: Վեհափառ Հայրապետը անձնապէս կը նախագահէ գրեթէ բոլոր ժողովներուն եւ իր իմաստուն խորհուրդներով ու թելադրանքներով մեծապէս օգտակար կը հանդիսանայ անոնց աշխատանքներուն:


Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի հարիւրերորդ հատորի լոյս ընծայման առիթով կ'արժէ, որ արձանագրուի հետեւեալ իրողութիւնը:

1968-ին, ինչպէս նախապէս նշուեցաւ, Հիմնադրամի առաջին գիրքը լոյս տեսած է: Մինչեւ 2020, անցնող 52 տարիներու ընթացքին հրատարակուած գիրքերուն թիւը հասած է հարիւրի: Այդ հարիւր գիրքերէն 74-ը, շուրջ երեք չորրորդը, լոյսին եկած է Արամ Ա. Կաթողիկոսի գահակալութեան 25 տարիներու ժամանակաշրջանին: Պատահած է նաեւ, որ մէկ տարեշրջանին՝ 5, 6, 7 եւ 8 գիրքեր լոյս տեսած ըլլան: Մէկ խօսքով՝ Արամ Ա. Կաթողիկոսի գահակալութեան տարիները բերքառատ եղած են հրատարակչական մարզէն ներս նաեւ:

Այսօր Կաթողիկոսարանէն ներս կը գոյատեւեն Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակն ու հրատարակչական Յ-Ա այլ հիմնադրամներ: Պէյրութի մէջ գոյութիւն ունին հրատարակչական ուրիշ հիմնադրամներ եւս: Ուրեմն հայ գրողը դժուարութիւն չունի իր գիրքերուն հրատարակութիւնը ապահովելու: Պայմանաւ որ անոնք հրատարակութեան արժանի գործեր ըլլան:

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



«ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՈՒՂԵԻՈՐԸ՝ ԴՈԿՏ. ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԱԿԻՆԵԱՆ (1883-1963)»

Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակը հրատարակեց իր 101-րդ հատորը՝ «Բանասիրութեան ուղեւորը՝ Դոկտ. Հայր Ներսէս Վրդ. Ակինեան (1883-1963)» վերնագիրով, որուն աշխատասիրութիւնը կը պատկանի Մեսրոպ Հայունիի:

Շուրջ 400 էջնոց դիւանային, պատմաքննական եւ աղբիւրագիտական գործը կը պարունակէ 20 գլուխներ, որոնք կը մանրամասնեն Հայր Ակինեանի կենսագրականն ու վաստակին մասին պատմական իրողութիւններ: Հեղինակը կը նշէ, որ աշխատութեան ելակէտը եղած է Հայր Ակինեանի «Տեղեկագիրը հինգամեայ առաքելութեանս ի Հայս» ինքնագիր անտիպը, իսկ օգտագործած աղբիւրները կը պատկանին առաւելաբար Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մայրավանքի դիւանին:

**«ԱՄԻՏԱՅԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ»
ՏԻԳՐԱՆ ՄԿՈՒՆԴԻ**



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ լոյս ընծայուող Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ յուշամատեններու մատենաշարով ցարդ լոյս տեսած են վերահրատարակուած 14 հատորներ, որոնք կարելի է գտնել առցանց:

Վերահրատարակութիւնները այժմ կը շարունակուին ելեկտրոնային տարբերակով: Շարքին 15-րդ գիրքը կը հանդիսանայ Տիգրան Մկունդի «Ամիտայի Արձագանգներ» աշխատասիրութեան առցանց հրատարակութիւնը, որ կարելի է գտնել Կաթողիկոսարանիս գրատան կայքէջին վրայ՝ www.ciliciabookstore.com

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԿՈՂՔԻՆ**

Երեքշաբթի, 4 Օգոստոսի երեկոյեան, Պէյրուօթի նաւահանգիստին մէջ ուժեղ պայթում մը ցնցեց Լիբանանը՝ մարդկային եւ նիւթական ծանր վնասներ հասցնելով մայրաքաղաքին: Պայթումին հետեւանքով գործուած աւերը իր ժանիքները անցընելով Պէյրուօթի հայաբնակ շրջաններուն՝ ինչպէս Զարանթինա, Ժըմմէյզէ, Մար Սիւայէլ, Յաճըն, Պուրճ Յամուտ, հասաւ մինչեւ Անթիլիաս եւ Պիքֆայա: Անթիլիասի Մայրավանքին մէջ վնասուեցան Մայր Տաճարի, Վեհարանի, հայագիտական ու մանկավարժական կեդրոններու եւ «Կիլիկիա» թանգարանի ջահերը, դռներն ու պատուհանները:



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՊՈՒՐԾ ԶԱՄՈՒՏ

Պայթումի պահուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս կը գտնուէր Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ: Պայթումէն անմիջապէս ետք, միաբան հայրերու ընկերակցութեամբ, Վեհափառ Հայրապետը անմիջապէս ուղղուեցաւ Պուրճ Համուտի վնասուած հայահոծ թաղամասերը եւ Պուրճ Համուտի քաղաքապետին ու պատասխանատու մարմիններու ներկայացուցիչներուն հետ շրջելով, մօտէն ծանօթացաւ տիրող կացութեան, հանդիպում ունեցաւ վիրաւոր հայորդիներու հետ, օրհնեց ու բարի ապաքինում մաղթեց անոնց:



Յայտնեց, որ Նորին Սրբութիւնը Պուրճ Համուտէն մեկնելէ առաջ նիւթական օժանդակութիւն մը տրամադրեց քաղաքապետարանին, որպէսզի մեր ժողովուրդին անմիջական կարիքները հոգացուին:

ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՒՆ

Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան հեռաձայնային կապ հաստատելով Վեհափառ Հայրապետին հետ, իր մտահոգութիւնն ու զօրակցութիւնը յայտնեց Լիբանանի հայ համայնքին:

Նորին Սրբութիւնը յաշորդաբար զօրակցական հեռաձայններ ստացաւ՝ Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք Նախագահ Արմէն Սարգսիսեանէն, Արցախի Հանրապետութեան վսեմաշուք Նախագահ

Արայիկ Յարութիւնեանէն, Հայաստանի Հանրապետութեան Նախկին Նախագահ Սերժ Սարգիսեանէն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսէն, Ն.Ա.Տ. Սահակ Բ. Պոլսոյ Պատրիարքէն, թեմակալ առաջնորդներէն, Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատար Չարեհ Սինանեանէն, Հայաստանի եւ Սփիւռքի պատասխանատու ազգայիններէն, ինչպէս նաեւ օտար հոգեւոր պետերէն ու միջ-եկեղեցական պատասխանատու անձնաւորութիւններէն:

Չօրակցութեան կողքին, անոնք նաեւ յայտնեցին լիբանանահայութեան սատար հանդիսանալու իրենց պատրաստակամութիւնը՝ իրենց կարելիութեանց սահմաններէն ներս:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԻ ՀԱՄԱՉԳԱՅԻՆ ՉՕՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Պայթումին յաջորդ օրը, Չորեքշաբթի, 5 Օգոստոսին, Նորին Սրբութիւնը իր Հայրական կոչը ուղղեց համայն հայութեան: Ան հակիրճ տողերու մէջ ներկայացնելէ ետք Լիբանանահայ գաղութին ներկայ իրավիճակը՝ ընկերատնտեսական, քաղաքական, «Քորոնա» համաճարակի եւ վերջապէս՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին ներքոյ, յայտարարեց լիբանանահայ գաղութին վերականգման համար իր տեսլականը, ինչպէս նաեւ Կաթողիկոսարանին կողմէն հաստատուած նուիրատուութիւններու համար դրամատանային հաշիւը:

Ստորեւ կը ներկայացնենք Վեհափառ Հայրապետին պատգամը. -

Խոր հաւատքով եւ ամուր յանձնառութեամբ կ'ողջունենք մեր ժողովուրդին սիրելի զաւակները:

Լիբանանը կը դիմագրաւէ լուրջ մարտահրաւերներ: Վերջին ամիսներուն «Քորոնա» ժահրի ստեղծած ծանր պայմաններուն յաջորդեց տնտեսական տագնապը: Բնականաբար, Լիբանանը կազմող գլխաւոր համայնքներէն հայ համայնքը եւս, ենթակայ դարձաւ յիշեալ յաջորդական տագնապներու հետեւանքներուն: Հակառակ դժուար կացութեան, Լիբանանի հայութեան տնտեսական, կրթական, ընկերային եւ այլ մարզերէն ներս, մեր կրօնական ու ազգային կառոյցները իրենց կարելին կատարեցին պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ՝ օգտակար ըլլալու մեր համայնքի զաւակներուն: Սակայն, 4 Օգոստոսին, Պէյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած ահաւոր պայթումը աւելի ծանրացուց Լիբանանին, ինչպէս նաեւ մեր համայնքին դիմագրաւած դժուար պայմանները:

Արդարեւ, անմիջապէս որ լսեցինք պատահած պայթումը, ուղղուեցանք հայկական թաղեր ու ականատես դարձանք պարզուած ողբերգական կացութեան.- քանդուած կամ ծանրօրէն վնասուած եկեղեցիներ, համայնքային կեդրոններ, տուներ, խանութներ եւ աւելի ահաւորը՝ մահեր

ու բազմաթիւ վիրաւորներ: Զանդումները Լիբանանի պատմութեան մէջ աննախընթաց էին իրենց տարողութեամբ ու բնոյթով:

4 եւ 5 Օգոստոսին, հանդիպումներ ունեցանք համայնքային պատասխանատուներու հետ՝ աւելի մօտէն տեղեակ դառնալու յառաջացած վնասներուն ու վիրաւորներու առողջական վիճակին: Չօրակցական հեռաձայներ ստացանք մեր պետական, հոգեւոր ու քաղաքական բարձրաստիճան պատասխանատուներէ: Արդ, նկատի ունենալով Լիբանանի հայութեան կեդրոնական տեղը ու առանցքային դերը ընդհանրապէս համահայկական ու յատկապէս սփիւռքեան ծիրէն ներս, այս կարեւոր գաղութին վերականգնումը կը նկատենք անյետաձգելի ու հրամայական:

Զանդուած կամ վնասուած տուներուն վերանորոգումը անյետաձգելի է: «Քորոնա» ժահրի վտանգին ենթակայ մեր համայնքի գաւակներուն առողջութեան օգտակար ըլլալը անհրաժեշտ է: Մեր կրթական կառոյցներուն աջակցութիւնը հրամայական է: Մեր համայնքային, կրօնական, մշակութային, բարեսիրական եւ այլ կառոյցներու օժանդակութիւնը կենսական է: Համապարփակ հայեցակէտով հարկ է դիտել համայնքին վերականգնման աշխատանքները:

Այս գծով կարեւորութեամբ կ'ուզենք շեշտել հետեւեալ կէտերը.-

1) Լիբանանի հայութեան վերականգնումը պէտք է կատարուի համազգային ճիգով՝ մեր հայրենիքին, Սփիւռքի գաղութներուն եւ ընդհանրապէս մեր ժողովուրդի գաւակներուն գործօն մասնակցութեամբ: Տազնապը մեծ է. հետեւաբար, մեր մօտեցումը պէտք է ըլլայ համապատասխան, կազմակերպ ու հետեւողական:

2) Լիբանանի հայութեան կատարուելիք օժանդակութիւնը պիտի ներառէ մեր համայնքին բոլոր գաւակները առանց խտրութեան:

3) Լիբանանի Հայոց թեմին Առաջնորդ Սրբազանին նախագահութեամբ պիտի կազմուի յանձնախումբ մը՝ մասնակցութեամբ երեք համայնքներու, երեք կուսակցութիւններու ու երեք բարեսիրական միութիւններու, որպէսզի կազմակերպէ վերականգնումի աշխատանքները:

4) Առաջնահերթութեան կարգով յանձնախումբը պիտի ճշդէ հետեւեալ երեք բնագաւառներու առնչուած կարիքներուն մասնակցութեան չափն ու ժամանակը.- տուներու ու համայնքային կեդրոններու վերանորոգում, առողջապահական ծրագիրներ եւ կրթական օժանդակութիւն:

5) Լիբանանի հայութեան օժանդակութեան յատուկ հաշիւ մը բացուած է ժընեւի (Չուիցերիա) մէջ: Բոլոր օժանդակութիւնները պէտք է կատարուին այս հասցէին, որպէսզի ստացուած նուիրատուութիւնները Կաթողիկոսարանին ճամբով փոխանցուին Ազգային Առաջնորդարանի հովանաւորութեան տակ գործող վերոյիշեալ յանձնախումբին:

Ինչպէս առաքեալը կ'ըսէ, «Եթէ մարմինն մէկ անդամը ցաւի ամբողջ մարմինը կը ցաւի» (Ա.Կր 12.26): Լիբանանի հայութեան ցաւը ամբողջ

հայութեան ցաւն է: Այսօր մեր ժողովուրդի զաւակները կոչուած են զօրակից դառնալու Լիբանանի հայութեան, որպէսզի ո՛չ միայն անոր ցաւը փարատի, այլ նաեւ կարենայ վերանորոգ կենսունակութեամբ ու նուիրումով շարունակել իր համազգային առաքելութիւնը:

Այս սպասումով եւ Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները եւ կ'աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ իր երկնային բարիքներով ծաղկեցնէ մեր ժողովուրդին կեանքը:

**ՀԱՆԴԻՍԱԲՈՐ Ս. ԵՒ ԱՆՄԱՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝
ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԾ ՊԱՅԹՈՒՄԻՆ ՀԵՏԵԲԱՆՔՈՎ
ՆԱՀԱՏԱԿՈՒԿԸ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

Կիրակի, 9 Օգոստոսին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր Ս. Եւ անմահ Պատարագ:

Պատարագին ներկայ էին Պէյրութի Նաւահանգիստի պայթումէն ետք Լիբանան ժամանած Հայաստանի Հանրապետութիւնը ներկայացնող պատուիրակութիւնը, Լիբանանի Հայկական Երեսփոխանական Պլոքի ներկայացուցիչը եւ երեք քաղաքական կուսակցութեանց վերի մարմիններու ներկայացուցիչները:

Իր Հայրապետական պատգամը առ Աստուած ուղղուած գոհաբանական աղօթքով սկսելէ ետք, Վեհափառ Հայրապետը հետեւեալ երեք հաստատումները կատարեց.-

Առաջին՝ *Լիբանանի հայութիւն, մեր ողջ ազգը քեզի՛ հետ է:*

Երկրորդ՝ *Լիբանանի հայութեան հզօրացումը Հայաստանին ու Սփիւռքին հզօրացումն է:*

Երրորդ՝ *Լիբանանի հայութիւնը պետութեան հետ է, ԱՅՈ՛, սակայն դէմ է՝ պետական իրենց պաշտօնները չարաշահող պատասխանատուներուն:*

Իր պատգամին մէջ, Նորին Սրբութիւնը նաեւ շեշտեց, թէ. «Լիբանանը միշտ կը մնայ Սփիւռքի մէջ իր առանցքային դերակատարութեամբ կարելոր համայնք, համահայկական աշխատանքներուն ու տեսլականներուն կարելոր ներդրում կատարած ու կատարելու կոչուած գաղութ, հետեւաբար, անոր վերականգնումը պետք է ըլլայ միասնական ճիգով»:

Պատարագի աւարտին, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ հոգեհանգիստ՝ Պէյրութի մէջ պատահած պայթումին հետեւանքով նահատակուած հայորդիներու հոգիներուն համար:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻԻՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՊԵՅՐՈՒԹԻ ՊԱՅԹՈՒՄԵՆ ՎՆԱՍՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Երեքշաբթի, 11 Օգոստոսի առաւօտուն, Նորին Սրբութիւնը, ընկերակցութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանի, Ազգային Վարչութեան անդամներուն եւ միաբան հայրերուն, յաջորդաբար այցելեց Պէյրութի եւ շրջակայից եկեղեցիները՝ Ս. Նշան, Ս. Յակոբ, Ս. Գեորգ, Ռըմէյլի Ս. Յարութիւն, Ս. Յովհաննու Կարապետ, Ս. Քառասնից Մանկանց, Ս. Սարգիս, Ս. Աստուածածին եւ Ս. Վարդանանց, ինչպէս նաեւ Ազգային Միացեալ Վարժարան:



Վեհափառ Հայրապետը մօտէն տեղեկացաւ պայթումին հետեւանքով տեղի ունեցած վնասներուն: Նորին Սրբութիւնը իր հայրական քաջալերանքը փոխանցեց առաջնորդ սրբազանին, Լիբանանի Հայոց Թեմին մէջ ծառայողներուն եւ գաղութի գաւակներուն՝ ըսելով. *«Մի՛ յուսահատիք, մենք միասնաբար, հաւաքական հաւատքով ու նուիրումով պիտի վերականգնենք Լիբանանի հայութիւնը՝ վերահաստատելով անոր համասփիւռքեան դերակատարութիւնը»*: Այս առիթով, ան նաեւ յիշեցուց, թէ Հայաստանը, Արցախը, Սփիւռքը եւ ողջ հայութիւնը Լիբանանի հայութեան գործնապէս զօրակից Է:

Այցելութեան աւարտին, Նորին Սրբութիւնը Ազգային Առաջնորդարանին մէջ թեմական պատասխանատուներուն հետ իր ունեցած հանդիպման ընթացքին դարձեալ յիշեցուց, թէ կարելի փութով պետք է

վնասներուն արժեւորումը կատարուի, որպէսզի կարենանք կազմակերպուած կերպով լծուիլ աշխատանքի:

ԿԵԱՆՔԻ ԿՈՉՈՒԵՑԱԲ «ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՄԱՐՄԻՆ»Ը

«Քորոնա» ժահրի ծանր պայմաններուն, տնտեսական տագնապին եւ Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառած հետեւանքները քննարկելու եւ ժողովուրդին կարիքներուն հասնելու նպատակով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին թելադրանքով, Կիրակի, 9 Օգոստոս 2020-ին, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանին եւ մասնակցութեամբ հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական համայնքներու պետերուն, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Հայ Յեղափոխական



Դաշնակցութեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան եւ Լիբանանի Օգնութեան Խաչի ներկայացուցիչներուն, հաստատուեցաւ «Լիբանանահայութեան Վերականգնումի Մարմին»ը:

Մէկ վայրկեան յոտնկայս յարգելէ ետք պայթումի զոհերուն յիշատակը, Առաջնորդ Սրբազանը յայտնեց, որ Հինգշաբթի, 6 Օգոստոսին,

Վեհափառ Հայրապետը մամուլին յանձնեց հայ աշխարհին ուղղուած հայրական կոչ մը, որով աշխարհացրիւ հայութեան կը յիշեցներ, թէ լիբանանահայութեան դիմագրաւած տագնապը մեծ է եւ, հետեւաբար, կը թելադրէր, որ լիբանանահայ գաղութի վերականգնումի գործին մէջ ամէն մարդ ստանձնէ պարտքի եւ պարտաւորութեան բաժին:

Ապա, Շահէ Արք. Փանոսեան ներկայացուց Նորին Սրբութեան կոչը, որուն մէջ շեշտուած էր, թէ քանդուած կամ վնասուած տուներուն վերանորոգումը անյետաձգելի է, «Զորոնա» ժահրի վտանգին ենթակայ մեր համայնքի գաւակներուն առողջութեան օգտակար ըլլալը անհրաժեշտ է, մեր կրթական կառոյցներուն աջակցութիւնը հրամայական է եւ մեր համայնքային, կրօնական, մշակութային, բարեսիրական եւ այլ կառոյցներու օժանդակութիւնը կենսական է: Կոչին մէջ Վեհափառ Հայրապետը կը հաստատէր, որ Լիբանանի հայութեան վերականգնումը պէտք է կատարուի համազգային ճիգով՝ մեր հայրենիքին, Սփիւռքի գաղութներուն եւ ընդհանրապէս մեր ժողովուրդի գաւակներուն գործօն մասնակցութեամբ:

Արդարեւ, սրբազան հայրը շեշտեց, որ մարմինին աշխատանքներուն առանցքը պէտք է կազմէ տուներու, եկեղեցիներու ու համայնքային կեդրոններու վերանորոգումը, առողջապահական ծրագիրները եւ կրթական օժանդակութիւնը: Ան նաեւ ընդգծեց, որ մարմինը պէտք է անմիջապէս դիմէ գործնական քայլերու եւ ճշդէ համապատասխան աշխատելաճ՝ արագ, արդիւնաւետ եւ նպատակայարմար ծրագիրներ իրականացնելու համար: Սրբազանը հաստատեց, որ հարկ է առանց կանխակալ մտածումի, առանց անձնական նախասիրութիւններու եւ կեցուածքներու, դրական միտքով միասին մտածել, միասին կացութիւնը գնահատել, միասին մեր կեանքէն ներս գոյութիւն ունեցող առաջնահերթութիւնները ճշդել, միասին նախաձեռնել եւ միասին պարտականութիւնները բաժնեկցիլ, որպէսզի մեր աշխատանքի որակին մէջէն մեր ժողովուրդն ալ զգայ, թէ տակաւին ունինք ապրելու կամք, կառուցելու եւ կերտելու եռանդ, տոկալու ու յարատեւելու ուժականութիւն:

Ապա, երեք համայնքներու, կուսակցութիւններու եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչները կազմեցին գործադիր մարմին մը, որ անմիջապէս գործի պիտի անցնի: Յետ քննարկումներու, հանդիպումին մասնակիցները շեշտեցին, որ դժուարին պայմաններուն մէջ առաւելագոյն չափով ճիգերը պէտք է կեդրոնացնել, որպէսզի հաւաքաբար յաղթահարենք դժուարութիւնները, հասնինք մեր ժողովուրդի կարիքներուն, ամուր պահենք մեր կառոյցները եւ վերականգնենք լիբանանահայութիւնը:

**ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԻՐ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱՆՔԸ ՅԱՅՏՆԵՑ
ԼԻԲԱՆԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԵՒ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ԿԱՏԱՐՈՒԱԾ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՐ**

Չորեքշաբթի, 12 Օգոստոսին, Վեհափառ Հայրապետը Հայաստանի Հանրապետության վսեմաշուք վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի հետ ունեցած հեռաձայնային զրոյցին ընթացքին, իր բարձր գնահատանքը յայտնեց անցնող օրերուն յաջորդական երեք օդանաւերով Հայաստանէն Լիբանան հասած օժանդակութեանց համար:

Երեկոյեան, Նորին Սրբութեան այցելեց Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան՝ Վահագն Աթաբէկեան: Դեսպանը զեկոյց մը տուաւ Հայրապետին Հայաստանէն ժամանած պատուիրակութեան հայ համայնքի պատասխանատուներուն հետ ունեցած հանդիպումներուն մասին, ինչպէս նաեւ որոշ մանրամասնութիւններ փոխանցեց Հայաստանէն ուղարկուած յիշեալ օժանդակութեանց գծով:

Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց դեսպանին պատուիրակութեան այցելութեանց գծով իր կատարած աշխատանքներուն եւ ցուցաբերած աջակցութեան համար:

**ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՆԻՍՏ
ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻՆ ՄԷՉ**

Հինգշաբթի, 20 Օգոստոսին, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ տեղի ունեցաւ Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներու միացեալ նիստը: Հանդիպումին ներկայ էին յիշեալ երկու ժողովներու Լիբանանի ներկայ անդամները:

Ժողովին սկիզբը, Նորին Սրբութիւնը ամփոփ գիծերով ներկայացուց Պէյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած պայթումէն ետք իր կողմէ կատարուած աշխատանքները.- այցելութիւններ հայկական թաղեր ու եկեղեցիներ, հանգանակութեան կոչ, գնահատանքի ու շնորհակալութեան նամակներ՝ իր կոչին ընդառաջած ազգայիններուն ու ազգային մարմիններուն, եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Իշխանութեան կողմէ կատարուելիք աշխատանքներուն հետապնդում: Ապա, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան մանրամասն զեկոյց մը տուաւ՝ Լիբանանահայութեան Վերականգումի Յանձնախումբին կազմութեան, ենթալանձնախումբերու գործունեութեան, կատարուած վնասներու արժե-



ւորման եւ այլ յարակից հարցերու շուրջ: Սրբազանին զեկոյցէն ետք կատարուեցաւ ընդհանուր քննարկում:

Ամփոփելով կատարուած քննարկումները՝ Նորին Սրբութիւնը հետևեալ կէտերը ընդգծեց.-

1) *Գնահատելի աշխատանք կատարուած է Առաջնորդ Սրբազանին եւ Ազգ. Իշխանութեան կողմէ եւ վստահաբար նոյն ոգիով ու նուիրումով պիտի շարունակուի այս յոյժ կենսական աշխատանքը:*

2) *Ընդառաջելով Նորին Սրբութեան կոչին, լիբանանահայութեան օժանդակութեան գծով պատրաստակամութիւն կայ Հայաստանէն, Արցախէն, թեմերէն ու գաղութներէն ներս, ինչպէս նաեւ կազմակերպութիւններու ու անհատներու մօտ: Ողջունելի այս երեւոյթը պէտք է իր շօշափելի արտայայտութիւնը գտնէ:*

3) *Առաջնորդ Սրբազանին գլխավորութեամբ լիբանանահայութիւնը իր ամբողջութեանը մէջ ներկայացնող յանձնախումբ մը արդէն լծուած է աշխատանքի: Յանձնախումբին մաս կը կազմեն երեք համայնքներ, երեք կուսակցութիւններ եւ երեք բարեսիրական միութիւններ: Հետեւաբար, լիբանանահայութեան վերականգնումի առնչուած բոլոր աշխատանքները պէտք է կատարուին յիշեալ յանձնախումբին նախաձեռնութեամբ կամ անոր կողմէ հովանաւորուած կամ ներդաշնակուած: Այլ խօսքով, կազմա-*

կերպութիւններու կամ անհատներու կողմէ կատարուած օժանդակութիւնները, որոնք գնահատելի են, պէտք է ներդաշնակուին յանձնախումբին հետ, որպէսզի համայնքին վերականգնումի գործընթացքը ըլլայ ակտիվ կազմակերպ ու հեզասահ:

4) Կաթողիկոսարանը լիբանանահայութեան վերականգնումի օժանդակութեան յատուկ հաշուեզույիս մը բացած է ժընեւի (Չուիցերիա) մէջ եւ զանազան առիթներով յիշեալ հաշուեզույիսը յայտարարուած է: Այս հաշուեզույիսուն եկող գումարները ուղղակիօրէն եւ անմիջականօրէն պիտի փոխանցուին Ազգ. Առաջնորդարանի կողմէ Լիբանանի մէջ չորս դրամատուներու մէջ բացուած յատուկ հաշուեզույիսներուն, որպէսզի փոխանցումը ըլլայ կազմակերպ ու արագ: Այս ծիրէն ներս անհրաժեշտ է կարեւորութեամբ յիշեցնել, որ լիբանանահայութեան վերականգնումի համար հաւաքուած բոլոր գումարները, բոլոր կազմակերպութիւններուն, միութիւններուն կամ անհատներուն կողմէ պէտք է փոխանցուին կամ Կաթողիկոսարանին կողմէ բացուած ժընեւի հաշուեզույիսուն եւ կամ նոյն նպատակին համար «Յայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմէ բացուած յատուկ հաշուեզույիսուն: Լիբանանահայութեան վերականգնումի ի նպաստ կատարուող հանգանակութիւնները պէտք է ուղղուած ըլլան Լիբանանահայութիւնը ներկայացնող վերոյիշեալ յանձնախումբին:

5) Յարդ շուրջ 600.000 ամերիկեան տոլարի եկամուտ եղած է լիբանանահայութեան վերականգնումին համար: Յիշեալ գումարները արդէն իսկ ժընեւէն փոխանցուած են Ազգ. Առաջնորդարանի կողմէ բացուած հաշուեզույիսներուն: Հետեւաբար, անհրաժեշտ է շուտով սկսիլ վերաշինութեան աշխատանքներուն եւ այս ծիրէն ներս հարկ է յստակ առաջնահերթութիւն տալ մեր ընտանիքներուն վնասուած տուներուն, ապա միայն եկեղեցիներուն, կրթական օճախներուն եւ համայնքային կեդրոններուն:

6) Լիբանանահայութեան վերականգնումին առնչուած է նաեւ ժողովուրդին կենցաղային կարիքներուն օգտակար ըլլալու մեր ճիգը: Երկրէն ներս ստեղծուած տնտեսական պայմաններուն հետեւանքով անցնող շաբաթներուն թէ՛ Կաթողիկոսարանը, թէ՛ Ազգ. Առաջնորդարանը եւ թէ՛ կազմակերպութիւնները գնահատելի աշխատանք տարին այս ուղղութեամբ: Պէտք է շարունակուին այս աշխատանքները: Այս ուղղութեամբ հարկ է յատուկ գնահատանքով անդրադառնալ ՏԵՐ եւ Տիկին Ալեքքօ եւ Անի Պեգիբեան ամուսին կողմէ մէկ միլիոն տոլարի համարժեք կատարուած օժանդակութեան՝ 3000 ընտանիքներու: Օժանդակութեան այս ծրագիրը արդէն իսկ սկսած է՝ իրենց անմիջական հսկողութեամբ եւ յատուկ մարմնի ճամբով:

Ամփոփելով իր խօսքը, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ ըսած ենք ու կը կրկնենք, թէ լիբանանահայութեան վերականգնումը համահայկական առաջնահերթ յանձնառութիւն է ու պէտք է զայն իրագործել

միասնաբար: Իւրաքանչիւր հայ, գաղութ, թեմ ու կազմակերպութիւն այս գծով ընելիք ունի՝ մասնակից դառնալով այս անյետաձգելի աշխատանքին:

ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՕՏԵՆ ԿԸ ՀԵՏԵԻ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄԻ ՄԱՐՄԻՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Հինգշաբթի, 17 Սեպտեմբերի առաւօտուն, Ազգային Միացեալ Վարժարանին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հանդիպում մը ունեցաւ Լիբանանահայութեան Վերականգնումի Մարմինին հետ:

Նախքան հանդիպումը, Վեհափառ Հայրապետը այցելեց վնասուած տուներու արձանագրութեան եւ օժանդակութեան լծուած երիտասարդ-երիտասարդուհիներու աշխատանքի վայրը, լսեց անոնց բացատրութիւնները եւ գրոյց ունեցաւ օժանդակութեան համար ներկայ մեր ժողովուրդի զաւակներուն հետ: Նորին Սրբութիւնը գնահատեց ծրագրուած ու հետեւողական կերպով կատարուող աշխատանքը, ինչպէս նաեւ կամաւոր կերպով աշխատող երիտասարդ-երիտասարդուհիներու նուիրումը: Ան նաեւ վստահեցուց ներկայ ընտանիքներուն, որ իր անմիջական հովանաւորութեան տակ օժանդակութիւնը պիտի շարունակուի՝ անխտիր բոլոր կարիքաւորներուն:

Հանդիպման աւարտին, Կաթողիկոսարանի Cilicia TV-ին ճամբով, Վեհափառ Հայրապետը մեր ժողովուրդի զաւակներուն փոխանցեց իր Հայրական խօսքն ու թելադրութիւնը, որ կը ներկայացնենք ստորեւ. -

Ես կ'ուզեմ այս առիթով կարեւորութեամբ հինգ կէտեր շեշտել.-

1) Կ'ուզեմ իմ բարձր գնահատանքս յայտնել Լիբանանահայութեան Վերականգնումի Մարմինին: Մարմինի անդամները իրենց գործերը, ընտանիքը, հաճոյքը եւ հանգիստը ձգած՝ եկած են այստեղ օգտակար ըլլալու մեր հաւաքական ընտանիքին, որ Լիբանանի հայութիւնն է: Անցնող շաբաթներու ընթացքին այս Մարմինը տիւ ու գիշեր աշխատեցաւ, ծրագրեց եւ ահաւասիկ հանգրուանային կերպով իր աշխատանքին ու ծրագրումին արդիւնքը կեանքի կը վերածէ: Ուրախութեամբ իմացայ, որ շուրջ 1500 տուներու վերաշինութեան օժանդակութիւն կատարած է, ինչ որ մեծապէս գնահատելի երեւոյթ է: Այս գործընթացը պէտք է շարունակուի: Առաջին իսկ օրը, ես որոշ թելադրութիւններ կատարած էի եւ այդ թելադրութիւնները Մարմինը որդեգրած է: Օժանդակութեան առաջնահերթութիւնները ճշդուած են, ինչպէս նաեւ հանգրուանները: Առաջին հանգրուանը՝ ժողովրդային տուներու վերանորոգումն է, երկրորդ հանգրուանը եկեղեցիները պէտք է ըլլան, ապա դպրոցները եւ համայնքային կեդրոնները ու այսպէս պէտք է շարունակուի: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը

լիբանանահայության վերականգնումին միշտ կը մնայ աջակից ու մասնակից:

2) Բարձր գնահատանք Հայաստանին, Արցախին, Ս. Էջմիածինին եւ այն բոլոր ազգայիններուն ու կառույցներուն, հեռաւոր թէ մօտաւոր, յայտնի կամ անյայտ, որոնք նոյնիսկ մէկ տոլարով մասնակից դարձան լիբանանահայության վերականգնումի այս սրբազան աշխատանքին: Կ'աղօթեմ առ Աստուած, որ ինչ որ տուին այս գաղութի վերականգնումին աւելիով ստանան:

3) Գաղութի մը կենսունակութեան աղբիւրը դպրոցն է: Մարմինին ուշադրութեան յանձնեցի, որ տուներու վերաշինութենէն ետք, պէտք է հայ դպրոցը իր կարելոր տեղը գրաւէ վերականգնումի աշխատանքին մէջ: Մեզի համար առաջնահերթութիւն է հայ դպրոցին զօրավիգ կանգնիլը: Ուրախ եմ, Ազգային Առաջնորդարանը եւ բոլոր հայ դպրոցներուն պատասխանատու մարմինները յառաջիկայ կրթական տարեշրջանին համար անվճար ուսման կարելիութիւնը յայտարարած են, այլ խօսքով՝ աջակերտները ոչ մէկ վճարում պիտի կատարեն: Սա երկու բան կը պարտադրէ մեզի.-

ա) Մեր ազգայինները ու բարերարները պարտաւոր են հայ դպրոցին զօրավիգ կանգնելու: Ինչ որ տուին շնորհակալ ենք, բայց պէտք է աւելիով տան, անոնք որ ցարդ չտուին հարկ է որ տան, որպէսզի գաղութին հիմքը կազմող հայ դպրոցը միշտ մնայ առողջ:

բ) Աջակերտութեան անվճար ընդունումը հայ դպրոցէն ներս կոչ մըն է ուղղուած մեր բոլոր ծնողներուն, կոչէն աւելի՝ պահանջք, որ իրենց զաւակները դրկեն հայ դպրոց: Ինչ-ինչ պատճառներով՝ նիւթականէն սկսեալ, մեր ծնողները հակամետ են իրենց զաւակները դրկելու օտար դպրոց: Սպասելի է, որ մեր բոլոր ընտանիքներուն զաւակները ուղղուին դէպի հայ դպրոց:



4) Մեր բոլորին նպատակը օժանդակել է, օգտակար ըլլալ է մեր ժողովուրդի սիրելի զաւակներուն: Մենք պիտի չուզենք երբեք, որ կարիքաւոր ընտանիք մը ըլլայ անկիւնը մնացած, տուն մը ըլլայ քանդուած եւ հեռու մեր աչքերէն ու մեր մտածումներէն: Այս Մարմինին նպատակն է օգտակար ըլլալ, կարելիութեան սահմաններէն ներս բնականաբար, օժանդակել լիբանանահայ բոլոր ընտանիքներուն: Ինչպէս գիտեք, անցնող ամիսներուն ազգայիններ ու կառոյցներ ուտեստեղէնի ճամբով օգտակար եղան: Հետեւաբար, կը կրկնեմ, ես պիտի չուզեմ, որ որեւէ ընտանիք անտեսուած ու դժգոհ ըլլայ: Մարմինը իր կարելին կատարեց եւ պիտի շարունակէ կատարել, կարելիութեան սահմաններէն ներս օժանդակելու մեր բոլոր ընտանիքներուն:

5) Երբ կը խօսինք լիբանանահայութեան մասին, կ'ըսենք՝ լիբանանահայութիւնը սփիւռքահայութեան առանցքը եղած է: Սա լիբանանահայութեան պատմութեան չի պատկանիր, այլ կը պատկանի ներկային: Լիբանանահայութիւնը, հակառակ այս դժուար պայմաններուն, տակաւին կը մնայ ողնասիւնը սփիւռքահայութեան՝ իր համահայկական դերակատարութեամբ: Լիբանանահայութիւնը Լիբանանի եօթը գլխաւոր համայնքներէն մէկն է: Այս երկրին մէջ մենք իրաւունքներ ունինք: Մեր պարտաւորութիւնները լիովին կատարած ենք եւ մեր իրաւունքներուն ամօրէն կառչած: Հետեւաբար, լիբանանահայութեան վերակազմակերպումը եւ վերակենսաւորումը համահայկական իմաստ ու նշանակութիւն ունի: Այս համապարփակ մօտեցումով մենք պետք է զօրավիզ կանգնինք լիբանանահայութեան: Հակառակ այս դժուար պայմաններուն, լիբանանահայութիւնը պիտի շարունակէ կառչած մնալ այս երկրին, որովհետեւ լիբանանահայութեան հզօրացումը ո՛չ միայն լիբանանահայութեան համար կենսական է, այլ՝ մեր հայրենիքին, Արցախին, մեր դատին համար:

Անգամ մը եւս իմ գնահատանքս կը յայտնեմ Մարմինին, ինչպէս նաեւ Լիբանանի մեր բոլոր կառոյցներուն ու բոլոր ընտանիքներուն եւ մեր բոլոր զաւակներուն եւ կոչ կ'ուղղեմ, միասնաբար, կ'ուզեմ բառը ընդգծել, միասնաբար լիբանանահայութեան վերականգնումին մասնակից դառնալու: Թող Աստուած օրինէ լիբանանահայութիւնը, մեր բոլոր գաղութները, մեր ազգն ու հայրենիքը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԸՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ
ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Մեծայարգ Տիար Արայիկ Յարութիւնեան
Արցախի Հանրապետութեան Նախագահ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավան-
քէն Հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով եւ
ազգային վառ ապրումներով կ'ողջունենք Ձեզ:

2 Սեպտեմբեր թուականը ողջ հայութեան համար ցնծութեան օր է:
Արդարեւ, 29 տարիներ առաջ Արցախի մեր սիրելի ժողովուրդը իմաս-
տութիւնը ու քաջութիւնը ունեցաւ իր պատմական հայրենիքին մաս
կազմող Արցախի հողին վրայ իր անկախութիւնը վերահաստատելու:
Արցախի անկախութեան հռչակումը մեր ժողովուրդի հաւաքական հա-
ւատքին ու ամուր վճռակամութեան շօշափելի արտայայտութիւնն էր:

Անցնող 29 տարիներուն Արցախը դարձաւ ոչ միայն Արցախի հա-
յութեան, այլ համայն հայութեան ուշադրութեան կիզակետը: Մեր ազ-
գի զաւակները մասնակից դարձան, Արցախի հայութեան կողքին, Ար-
ցախի հզօրացման ձգտող այլազան ու բազմազան ծրագիրներու իրա-
գործման:

Արցախի անկախութեան նշումը ուրախութեան ու հպարտութեան
կողքին նաեւ պետք է դառնայ յիշեցումի օր մեր ժողովուրդին համար:
Արդ, հայոց բանակին կողքին ըլլալը, Արցախի զարգացման գործօն
մասնակցութիւն բերելը, Արցախի իրաւաքաղաքական իրաւունքները
պաշտպանելը պետք է շարունակէ մնալ իւրաքանչիւր հայու սրբազան
պարտաւորութիւնը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ կը մնայ Արցախի
մեր ժողովուրդին ու պետութեան կողքին՝ վերանորոգ նուիրումով իր
ներդրումը կատարելով Արցախի հզօրացման աշխատանքներուն:

Այս առիթով, մեր Հայրական սերը ու Հայրապետական օրհնու-
թիւնը կը փոխանցենք Ձեզի, պարոն նախագահ, Ձեր գլխաւորած
կառավարութեան, Արցախի սահմանները տիւ ու գիշեր պաշտպանող
հայոց արի բանակին եւ մեր ժողովուրդի սիրելի զաւակներուն: Թող
Աստուած իր երկնային հովանիին ներքեւ պահէ, պահպանէ ու հզօ-
րացնէ Արցախի Հանրապետութիւնը:

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս, Լիբանան
2 Սեպտեմբեր 2020

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ
29-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Կիրակի, 20 Սեպտեմբերին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մեջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հանդիսապետեց Հայաստանի Հանրապետության վերանկախացման 29-ամեակին նուիրուած հանդիսաւոր Ս. Եւ Ամմահ Պատարագին եւ Հայաստանի Հանրապետության անկախութեան 100-ամեակի յուշակոթողին առջեւ կատարուած Հանրապետական Մաղթանքին:

Ս. Պատարագին ներկայ էին Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Վահագն Աթաբէկեան եւ դեսպանատան աշխատակազմը, ինչպէս նաեւ Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ, պատկան մարմիններու ներկայացուցիչներ ու հաւատացեալ ժողովուրդ:

Պատարագի աւարտին, Նորին Սրբութիւնը Հայրապետական թափօրով ուղղուեցաւ եկեղեցւոյ շրջափակին մէջ 2018 թուականին կառուցուած անկախութեան յուշակոթող, ուր տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 29-ամեակին առիթով Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն դրօշի օրհնութիւն՝ ձեռամբ Վեհափառ Հայրապետին:



Յայտնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերուն մէջ եւս տեղի ունեցաւ Հանրապետական Մաղթանք:

Վերանկախութեան 29-ամեակի առիթով, Երկուշաբթի, 21 Սեպտեմբերին, Արցախի Հանրապետութեան նախագահի կողքին, Վեհափառ Հայրապետը Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգսեանին եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանին յղեց ջերմ շնորհաւորական նամակներ, ուր վերահաստատեց, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ վերանորոգ յանձնառութեամբ մասնակից դառնալ Հայաստանի պետականութիւնը ամրացնող եւ զայն դէպի առաւել բարգաւաճում ու ծաղկում առաջնորդող ծրագիրներու ու աշխատանքներուն, իսկ իր դիմատետրի պաշտօնական էջին մէջ հետեւեալ գրառումը կատարեց. - *«Անկախութիւնը Աստուածատուր արժէք է եւ իրաւունք: Անհատի մը կամ ազգի մը անկախութեան իրաւունքը խլել մեղանչում է Աստուծոյ դէմ: Զրիստոս իր արիւնով ազատագրեց մարդը մեղքի ու չարի տիրապետութենէն: Անկախութիւնը որպէս երկնային պարգեւ հարկ է պահել անվթար ու անեղծ: Հայաստանի անկախութեան 29-րդ տարեդարձին նշումը իւրաքանչիւր հայու յիշեցում մըն է ու միաժամանակ հրաւեր հայրենիքի անկախութիւնը աւելի ամրապնդելու եւ գործնապէս մասնակից դառնալու Հայաստանի առաւել հզօրացման աշխատանքներուն»:*



**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԵՑ
ՔՈՒԷՅԹԻ ԻՇԽԱՆ ՇԷՅՆ ՍՈՒՊԱՅ ԱՅՍԱՏ ՃԱՊԵՐ ՍՈՒՊԱՅԻ
ՄԱՅՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ**

Քուէյթի երկար տարիներու ղեկավար Շէյխ Սուպահ Ահմատ Ճապեր Սուպահի մահուան առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հանգուցեալի ընտանիքին եւ Քուէյթի վարչապետին ուղղած ցաւակցական նամակով, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ անձնապէս, իր խորագգաց ցաւակցութիւնը յայտնեց:

Իր նամակին մէջ Վեհափառ Հայրապետը յիշեց Շէյխ Սուպահ Ահմատ Ճապեր Սուպահին ունեցած կարեւոր դերը որպէս արտաքին գործոց նախարար Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրե-



րուն՝ կողմերը հաշտեցնելու եւ լիբանանեան համակեցութիւնը ամուր պահելու գծով: Նորին Սրբութիւնը Շէյխ Սուլայահ Ահմատ ճապեր Սուլայահը նկատեց իբրեւ արաբական դատին ջերմ պաշտպանը, ինչպէս նաեւ ազգերու ու կրօններու երկխօսութեան ու գործակցութեան ջատագովը: Իր իշխանութեան օրով Քուէյթը նոր զարգացումներ արձանագրեց ներքին տնտեսական, մշակութային ու կրթական բնագաւառներէն ներս:

Վեհափառ Հայրապետը նաեւ կարելորութեամբ անդրադարձաւ Շէյխ Սուլայահ Ահմատ ճապեր Սուլայահին հայրական վերաբերմունքին Քուէյթի հայ համայնքին նկատմամբ: Ան ըսաւ, թէ իր հետ

ունեցած մեր հանդիպման ընթացքին այնքան դրական կերպով արտայայտուեցաւ հայ համայնքին մասին եւ կարգ մը խնդիրներուն ու ծրագիրներուն գծով անմիջական եւ օգտաշատ լուծումներ տալով: Վեհափառ Հայրապետը իր նամակը եզրակացուց՝ ըսելով, թէ Շէյխ Սուլայահ Ահմատ ճապեր Սուլայահը ոչ միայն Քուէյթի, այլ նաեւ արաբական աշխարհին մէջ պիտի մնայ եզակի ղեկավար՝ իր ազնուութեամբ, իմաստութեամբ ու դիւանագիտութեամբ:



ՏՕՆԱԿԱՆ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Ընդհանրապէս «Քորոնա» ժահրին ստեղծած կացութենէն, յատկապէս Լիբանանի մէջ տիրող ապահովական իրավիճակէն եւ մանաւանդ մեր ժողովուրդի զաւակներուն առողջութեան նկատմամբ ունեցած նախանձախրնդրութենէն մեկնելով, այս տարի Ս. Աստուածածնայ վերափոխման եւ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի ուխտի օրուան զոյգ տօները դժբախտաբար տեղի չունեցան ականդութիւն դարձած իրենց հանդիսաւոր տօնախմբութեամբ, ինչպէս՝ ուխտի շաբթուան նուիրուած քարոզախօսութիւններ եւ աղօթասացութիւններ, ուխտերթ, մատաղի պատրաստութիւն եւ Ս. Աստուածածին Վանքի բացօթեայ Ս. Խորանին վրայ մատուցուող Ս. եւ Անմահ Պատարագը:

Կիրակի, 16 Օգոստոսին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տա-



ճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Տաճարի լուսարարապետ՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան:

Իր քարոզին մէջ Սրբազանը նշեց, որ վերափոխման տօնը յաւիտենական կեանքի Աստուածային խոստումին հաստատումն է, որ յոյս կը ներշնչէ եւ սրտերն ու հոգիները մխիթարութեամբ կը պատէ: Ս. Կոյս Մարիամին մարմինով երկինք փոխադրութիւնը շօշափելիօրէն վաւերացումը դարձաւ մարմիններու յարութեան եւ փրկութեան գրաւականին, որ Քրիստոսի երկրորդ գալուստին տեղի պիտի ունենայ: Խօսելով Աստուածամօր յատկութիւններուն մասին՝ Սրբազանը ընդգծեց հաւատքով եւ վստահութեամբ Աստուծոյ խոստումին կառչելու հաւատքը, որուն համար Ս. Կոյսը արժանի դարձաւ Աստուածային խոստումին կատարումին: Հրաւիրելով հաւատացեալները հետեւելու եւ ընդօրինակելու Աստուածամօր նկարագիրը, սրբազան հայրը կեդրոնացաւ Աստուածածնի հանգամանքներէն երեքին. ան յայտնեց, որ Ս. Կոյսը կրեց եւ աշխարհին հայթայթեց քաղցրահամ Պտուղը, որմէ ճաշակելով մենք անմահացանք. ընդունեց կենսատու հացն ու մատակարարեց մեզի. եւ վերջապէս, բովանդակեց ու ճառագայթեց կեանքի Լոյսը:

Աւարտին, Սրբազանը աղօթք բարձրացուց եւ Աստուածամօր բարեխօսութիւնը հայցեց, որպէսզի իր օրինակով խոնարհինք Աստուծոյ առջեւ, փշրենք մեր «ես»ը եւ յանձնուինք Աստուծոյ կամքին:

Յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, ձեռամբ Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը, որ կը բովանդակէ արտին երախայրիքը Աստուծոյ ընծայման խորհուրդը:

Նշենք, որ Վեհափառ Հայրապետին փափաքով, այս տարի փոխան մատաղի պատրաստութեան, Ս. Աստուածածնի ուխտի օրուան առիթով կատարուած նուիրատուութիւնները ամբողջութեամբ փոխանցուեցան բարեսիրական հաստատութիւններու:

**ՀՈԳԵԻՈՐ ՀԱՄԵՐԳ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին նախօրէին, Շաբաթ, 15 Օգոստոսի երեկոյեան, Դպրեվանքի «Արմաշ» երգչախումբը Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ ունեցաւ տօնին նուիրուած առցանց համերգ մը՝ առանց ժողովուրդի ներկայութեան, որ սփռուեցաւ Cilicia TV դիմատետրի էջով եւ որուն ընթացքին Վանքին բացօթեայ խորանին առջեւէն հնչեցուց Տիրամօր նուիրուած ծաղկաքաղ մը՝ Հայ Եկեղեցոյ շարականներ, մեղեթիւներ, սրբասացութիւններ, տաղեր եւ աղօթասացութիւններ:

«Արմաշ»ին ընկերակցեցան տուտուկի վրայ՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուլթրեթանեան եւ Յակոբ Քէչիչեան, դաշնամուրի վրայ՝ Յասմիկ Գասպարեան, եւ քանոնի վրայ՝ Մարիա Եագուպեան:



*Բացման խօսքով հանդես եկաւ Հոգշ. Տ. Յակոբ Աբղ. Եագուպեան: Ան
յայտնեց, որ հայ ազգը Աստուածամօր հանդէպ ունեցած յարգանքը արտա-
յայտած է անոր համար շարականներ եւ աղօթքներ յօրինելով եւ անոր նը-
ւիրուած եկեղեցիներ շինելով՝ աւելցնելով, որ մայրութեան տիպարը, սըր-
բութեան օրինակը եւ կուսութեան հարազատ պատկերը ներկայացնող Աստ-
ուածամօր ընդմէջէն հայր փորձած է միշտ ձգտիլ յաւետենականին եւ ան-
հունին: Հայր Սուրբը խօսքը փակեց նշելով, որ ծանօթ պայմաններու բերու-
մով կարելի չեղաւ այս տարի Աստուածածնայ վանքի խորանին վրայ նշել
Տիրամօր տօնը, սակայն այս հոգեւոր համերգը նախաձեռնութիւն մըն է, որ
երջանիկ խորհուրդէն անմասն չի մնայ հաւատացեալ ժողովուրդը:*



ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻՆ...

Օրեր առաջ, 4 Օգոստոս 2020-ին Պէյրուսի նաւահանգիստի պայթումը ցնցեց համայն աշխարհը: Մարսուազդեցիկ լուրերուն հետեւող բոլոր սրտցաւ մարդոց պէս հոգեպէս աղէտահար եղայ նաեւ ես: Պատահարը աննկարագրելի էր: Համատարած քանդում ու աւեր՝ Լիբանանի սրտին մէջ: Մահ ու արիւն, սուգ ու կական, ողբ ու անյուսուածիւն եկան աւելնալու արդէն իսկ հիւժած, անգործութեան, սովի, թագաժառի ճիրաններուն մէջ գալարող եւ մարդկայնօրէն ապրելու անկարելիութեան մատնուած Լիբանանի ժողովուրդի աւօրեային վրայ: Ամբողջ երկիր մը տեսաւ գեհէն, մեծ թիւով քաղաքացիներ մնացին անտուն, հազարներ վիրաւորուեցան, հարիւրներ մահացան, լոյս իջնէ հոգիներուն...

Արիւնալի այս խորապատկերին մէջ, երբ օր մը ետք կարդացի Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ճառը, յոյսը վերստին բնակութիւն հաստատեց հոգւոյս մէջ. յոյսը՝ վերականգնումի, Լիբանանի վերաշինութեան, յոյսը՝ աղէտահար ժողովուրդին օգնութեան հասնելու եւ զայն իր ներկայ ծանրագոյն փորձութենէն խաղաղ ափ հանելու վճռականութեամբ թաթաւուն:

Օգոստոսեան հրաշափառ օրերու մէջ ենք, Սուրբ Աստուածածնայ Տօնը հեռու չէ. միտք, հոգի, զգացական աշխարհ, յուշեր՝ լիբանանահայու եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան անդամի, մտովին զիս հանեցին Պիքֆայա եւ աղօթքի կանգնեցուցին Ս. Աստուածածնայ մատուռին մէջ: Ու ես ծնրադրեցի Կոյսին մայրական անհուն գթասրտութեան առաջ, դառնօրէն ինդրելով Լիբանանի եւ անոր հերոսական ժողովուրդի փրկութեան համար Սրբուհիին երկնային միջնորդութիւնը:

Ու պահը թելադրեց արծարծուն հաւատքով քրքրել անցեալի յուշեր, վերապրիլ Աստուածածնայ Տօնին խորհուրդը Պիքֆայայի բարձունքին, ուր այս տարի ծանօթ պատճառներով ամայի պիտի ըլլայ թէեւ, բայց աւանդական տօնախմբութիւնը պիտի շարունակուի եկող տարիներուն. յառաջ Աստուած...

Ու շարժեցան մատներս համակարգիչիս ստեղնաշարին վրայ...

Ձայս կը ձօնեմ ծննդավայր Լիբանանին, որ մահէն կեանք անցնելու ծանրագոյն փորձութեան մէջ կը գտնուի...

Կը շրջանցեմ ահասարսուռ ներկան եւ կ'իյնամ մօտիկ անցեալին գիրկը: Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնը ուխտի օրն է Պիքֆայայի բարձունքին կանգնած համանուն վանքին: Մայրութեան բերրի եւ պողպալից անդաստանը՝ այս սուրբ վանքը, Կիլիկիոյ Հայրապետական Սուրբ Աթոռին հոգեւոր առաքելութեան աւիչ ներարկող կեդրոնն է: Քրիստոսի Մօր անուամբ

կնքուած վանքը, լոյսի փարոս ու յոյսի ներշնչարան է եւ Սփիւռքի հայու-
թեան հոգեւոր ապրումներուն անկորնչելի յիշատակարանն ու յոյգերուն վա-
ռարանը: Աստուածամօր հարսնարանին՝ սուրբ վանքին ուխտի օրը բիւրա-
ւոր հայեր, իրենց ձեռքն առած ուխտաւորի «ցուպը», կը բարձրանան վեր:

Ու կը բացուի ոգեշնչող տեսարանը: Իրօ՛ք որ հարսանիք է: Կը դիտեմ
չուրջս: Լիբանանեան համայնապատկերին վրայ գողտրիկ Պիքֆայան իր
կրծքին վրայ գրկած է Աստուածածնայ մատուռը, որ երկնասլաց իր կա-
ռուցուածքով կը բարձրանայ առ Աստուած, հետը բարձրացնելով նաեւ իրեն
դիմողները: Ուղղակի կապ մը՝ հոգեղէն աշխարհէն դէպի մերինը: Աստուա-
ծածինը՝ միջնորդն ու կապը: Կը տեսնեմ, թէ ինչպիսի փութով փոխադրա-
կաւքերը կը յաջորդեն իրարու ամբողջ շաբթուան տեւողութեան: Տիրամօր
բազմապատկուած կերպարանքները ըլլան կարծես. հայուհիներ՝ ամէն տա-
րիքի, շարան-շարան ուխտի կու գան իրենց հոգիներու Թագուհիին:

Հարսանի՛ք է, Պիքֆայայի հայկական շրջափակը՝ կառոյցներուն մէջը եւ
դուրսը, բացօթեայ միջավայրին մէջ, Յեղասպանութեան յուշակոթողին
չուրջ, Աստուածածնայ մատուռի միւլոնաբոյր պատերուն ներքոյ տօնական
եռուզեռ կը տիրէ: Բազմահարիւր կիներու ներկայութիւնը շէնչող եռանդով
մը կը բռնկեցնէ բոլորին սրտերը: Անոնք Լիբանանի զանազան քաղաքներէն
ու գիւղերէն՝ կ'արտորան դէպի Պիքֆայա, աղօթական պահերու ներկայ ըլ-
լալու տենչանքով եւ ամբողջ շաբաթ մը Հարսը կը գովերգեն, ծնրադիր կ'ա-
ղօթեն, շնորհակալութիւն կը յայտնեն, եւ անձնական, ընտանեկան, համայ-
նական խնդրանքներով կը դիմեն Տիրամօր, իրենց ուխտը կը կատարեն բա-
րեպաշտ հաւատացեալի խորին երկիւղածութեամբ, հոգեւոր ցնծութեան լոյ-
սը սփռելով ո՛չ միայն Պիքֆայայի բլուրին, այլեւ ամբողջ Լիբանանի վրայ:

Հոգեւոր ուխտագնացութեան համակեցութեան վայր է Լիբանանը: Գրե-
թէ ամէն գիւղ ունի իր ուխտավայրն ու ուխտագնացութեան օրերը: Բոլորը
գիտեն նաեւ Պիքֆայայի Սուրբ Աստուածածնայ մատրան զօրութեան մասին:
Քովի երկիրներէն, թէ ովկիանոսներէն անդին զբօսաշրջիկներ յատուկ այս
տօնին համար նաեւ Լիբանան կ'այցելեն, որովհետեւ կը գիտակցին, որ Աստ-
ուածամօր հոգեւոր ու բարոյական ներկայութեան խորհուրդով ապրիլը երկ-
նատուր պարգեւ մըն է, զի «մարմնաւոր քերովբէ» յայտարարուած Սրբուհին՝
սէր ու գթութիւն կը բուրէ, մայրութիւն ու սրբութիւն կը ճառագայթէ:

Ամբօրէն բռնուած եմ յիշողութեանս ոսկեփայլ թելերէն, մինչ միտքս կը
խորանայ պատմութեան բաւիղներուն մէջ: Ուրբաթ օրուան աղօթական
պահէն ետք տեղի կ'ունենայ աղօրհնէքի արարողութիւն: Ուխտաւորներուն
նուիրաբերած բազմատասնեակ ոչխարները օրհնուած աղը կ'ընդունին եւ
ապա կը գենուին՝ ի պատրաստութիւն ժողովրդային մեծ տօնախմբութեան,
մինչ բարեպաշտներուն առիթ կ'ընծայուի բարձրանալու Վեհարան եւ ստա-
նալու Վեհափառ Հօր հայրապետական օրհնութիւնը:

Վայրը կը լեցուի մշտնջենական խորհուրդով, որ մեր պապերուն, նախ-
նիներու օրերուն կը կապէ մեզ, կարծես Արեւմտեան Հայաստանի ոստաննե-
րէն մէկուն մէջ ըլլայինք այդ պահուն, կամ կիլիկեան դարաշրջանը վերա-
դառնայինք յետադարձ ոստումով մը: Չէ՞ որ հին ազգ ենք, Երկիր մոլորա-

կին վրայ մեր դրոշմը թողած ենք յատկապէս Միջին Արեւելեան տարածքային լայն պաստառին վրայ՝ հայրենի հողի բացակայութեան: Ազգ ու եկեղեցի միասնաբար՝ ծաղկեցուցեր ենք մեր ազգային մշակոյթը, ժողովրդային մեր հաւատալիքներուն ընծայեր ենք մեծ կարեւորութիւն, ապրեր ենք փիլիսոփայօրէն, մեր արեան մէջ ամբարներ ենք դարաւոր յիշողութիւն, ուր իր անքննելի տեղը ունի Սուրբ Տիրամայրը:

Միտքս անմիջապէս կ'արձագանգէ, թէ տարուան ընթացքին եօթը աւիթներով տօնուող ու յիշատակուող Մարիամին, մեր սուրբ հայրապետներուն կողմէ տրուած են հարիւրաւոր ստորոգելիներ ու կոչումներ: Հայոց եռամեծ վարդապետներն ու հոգեգմայլ տաղապարհները, իրենց հանձարի բոցէն ցոլացող լաւագոյն ստեղծագործութիւնները ընծայած են երկնաւոր վարդապետի անդրանիկ առաքեալին՝ Աստուածամօր. այն կնոջ՝ որ իր արգանդին մէջ կրեց մարդացեալ Աստուածը, հանդիսանալով խեփոր՝ տիեզերական մարգարիտին:

«Օրհնեա՛լ ես Դու ի կանայս»...

Լիբանանի տխուր լուրերուն իբրեւ հակադրութիւն, կը զգամ, որ բոլորիս Մայրը կ'այցելէ նաեւ զիս, եւ իր ներկայութենէն մխիթարուած՝ փորձ կ'ընեմ մերժելու անմերժելի ցաւատանջ ներկան ու անասելի ուժով մը Պիքֆայայի այս մշտադալար բարձունքին: Ես իմ մէջս կը հաստատեմ, որ հակառակ բոլոր տեսակի պատմաքաղաքական անկումներու եւ հողային, ունեցուածքի, այլեւ մարդկային կորուստներու, ահա՛ եւ մեր ժողովուրդը կանգուն է, աղօթքի մէջ արմատացած, Տիրամօր ի պատիւ կը նուիրէ իր լաւագոյնը, անվեհեր ու կորովի կը տօնախմբուի իր էութեան հարազատ Աստուածածնայ պատուանդանին շուրջ:

Կ'ոգեւորուիմ, կը մանկանամ, խինդ ու ծիծաղ ինձմէ կը վանեն ամէն տեսակի սուգ ու աւեր ու կը տեսնեմ Աստուածամայրը՝ կանչող: Քաղաքներէն, գիւղերէն, ներքին ճամբաներէն ալիք-ալիք երիտասարդներ կը հասնին մատուռ: Կը հնչէ զուռնան, կը շողկապուին երիտասարդ ձեռքերը եւ թափ կ'առնէ ժողովրդային տօնախմբութիւնը: Լայնատարած շուրջպարը կը դիւթէ բոլորը, հայ երգը կը լսուի մինչեւ հեռաւոր անկիւնները, Տիրամայրը ժպիտ կը բաշխէ հոգիներուն, մարդկային արիւնը կ'եռայ նոր խինդով: Նուիրական այդ պահուն, ամէն ոք կարծես կ'ողջագուրուի իր երկնային Մօր հետ նաեւ պարո՛վ, հոգիի ու մարմնի գեղեցկագոյն ընդելուզմամբ:

Թովչական այս մթնոլորտին յանձնուած կը շարունակեմ վերապրիլ Աստուածածնայ Վերափոխման Տօնը: Օրը Շաբաթ է: Մարդկային պանծալի հեղեղ մը ներկայ կ'ըլլայ բացօթեայ Սուրբ Պատարագին: Հինգ հազարէ աւելի աթոռները չեն բաւեր բոլորին: Երիտասարդներու մեծ բանակ մը կը մագլցի բլրան աջ ու ահեակ կողմերը, վեհացած պաշտամունքով մը կը հետեւի արարողութեան: Վարէն՝ առ Աստուած կը բարձրանայ բազմահազար հաւատացեալներու նոյնակշռոյթ հոգեւոր երգեցողութիւնը՝ միախառնուելով վերիններու «Սուրբ, Սուրբ»ին: Պահը կը լնու երկնային անպատմելի փառքով. երեկոն կը խորանայ, հաւատքը լուսեղէն մարմին կը ստանայ...

Աւելի բարձրները կը սաւառնիմ մտովին, կը տեսնեմ անտեսանելին.

վեհապանձ տեսարան, փշաքաղող՝ Երկինք ու Երկիր կը գիրկընդխառնուին: Ո՛հ, ինչպիսի պերճանք: Սուրբ պատարագին ներկայ բոլոր սրտերը հրաշքի մը հանգոյն կը վերանորոգուին, խոր հաւատքով ահանջ կու տան Վեհին պատգամին, ահանատես կը դառնան հարիսայի եւ խաղողի օրհնութեան եւ կը ճաշակեն Սուրբ Հաղորդութիւնը:

Պիքֆայան կը տարածուի շուրջս, աւելի ուժգին կը մերժէ ներկան, կ'ընդվզի Լիբանանը պատուհասած կործանիչ պայթումին դէմ ու կ'ըլլայ աշխարհ մը սուրբ, անեղծ, բարի՛ եւ արբշիռ խնդութեամբ հաւատացեալները «կը վերափոխէ» Աստուածամօր հետ դէպի երկինք՝ առագաստը Յիսուս Քրիստոսի, ծննդավայրը՝ Լոյսի՛ն:

...Լոյսէն յանկարծ ցոլք մը կը ցաթի Կանայի վրայ: Ու մինչ կը պատրաստուի միտքերս ամփոփել, Սուրբ Մարիամ իր Որդիէն կը խնդրէ Կանայի հարսանիքին գինի «ապահովել», զի հիւրերը շատ են, տանտիրոջ գինին՝ սպառած...

Ու կը կատարուի Քրիստոսի առաջին հրաշքը՝ բիբլիական Լիբանանի Կանա քաղաքին մէջ: Հարսնեւորները կը լիանան աւելի՛ քաղցրահամ, հրաշագո՛րծ գինիով, որ կը վարարի առատութեամբ, կը յորդի աստուածային ուրախութեամբ...

* * *

Այս տողերը գրելու պահուն, կը հաւատամ, որ ամբողջ Լիբանանը իր գթասրտութեան կիզակէտը դարձուցած Սուրբ Աստուածածինը Պիքֆայայի բարձունքէն կը դիմէ իր բոլոր զաւակներուն, մեզի՛, ապրողներո՛ւս, մայրական աղերսանքով մը, որուն հնչիւնները կը լսենք մեր խղճին մէջ՝ օգնելու աղէտահար Լիբանանին, անոր որդեկորոյս մայրերուն, արիւնաքամ վիրաւորներուն, անօթի ու սոված, բայց վերականգնումի անվեհեր ու միասնական ճիգով ճամբայ ու շէնք, փողոց ու քաղաք մաքրող քաջարի երիտասարդներուն, անտուն մնացած սարսափահար քաղաքացիներուն, անկարներուն, ծերերուն, սիրտ ճմլող որբուկներուն, անդունդի եզրին կանգնած համայն Լիբանանի ամբողջ ժողովուրդին:

Հասնի՛նք օգնութեան՝ մեր անսակարկ նուիրատուութեամբ, բարոյական զօրակցութեամբ, դրամական յատկացումներով եւ Աստուածածնայ Վերափոխման Տօնը իւրայատուկ հարսանիքի վերածենք՝ բոլոր մակարդակներու վրայ մեր եղբայրական զգացումները դրսեւորելով յանուն վաղուան կանգուն, առոյգ, վերածաղկած Լիբանանին եւ մահաբեր որոգայթներու դէմ ապրելու դրօշ պարզած հերոսապանձ որդիներուն, մի՛շտ հաւատալով, որ «Լիբանան պտղաբեր արտի պիտի դառնայ» (Ես 29.17):

ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ՏՕՆՈՅԵԱՆ
Առաջնորդական փոխանորդ
Ա.Մ.Ն. Արեւմտեան թեմի

ՎԵՐԱՑՄԱՆ Ս. ԽԱԶԻ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Կիրակի, 13 Սեպտեմբերին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Վերացման Ս. Խաչի տօնին առիթով մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ: Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Կաթողիկոսարանի մատենադարանապետ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Պատարագիչ Սրբազանը իր քարոզին որպէս բնաբան ընտրած էր «Քեզմէ ակնածողներուն դրօշ մը տուիր, որպէսզի ազատին մահացու աղեղէն» (Սղ 60.4) համարը: Ան մատնանչեց, թէ դրօշը՝ Խաչը Տէրը Ինքն է, եւ երբ Ան ներկայ է մեր կեանքին մէջ, ուրեմն թշնամիին բոլոր յարձակումները պարտութեան կը մատնուին: Սրբազանը աւելցուց, որ խաչը անձեռագործ դրօշն է Երկինքի Արքայութեան, եւ անոնք, որոնք նայեցան խաչին փրկուեցան: Խօսելով խաչին մասին՝ Սրբազանը յիշեցուց, թէ «Խաչ դրօշը» Աստուածաշունչին մէջ «Դրախտին մէջ անմահութեան Կենաց Ծառը» կը ներկայացնէ եւ «Աբրահամ հաւատքի հօր որդիին՝ Իսահակի զոհաբերման ուսին դրուած փայտերը» ու «Մովսէսի ձեռքին Աստուծոյ գաւազանը, որով բացաւ Կարմիր ծովը, ու ժայռէն ջուր բխեցուց եւ անոր բարձրացումով յաղթեցին Ամաղեկացիներուն»:

Աւարտին, ան աղօթք վերառաքեց առ Աստուած եւ խնդրեց Ամենակալէն, որ պահէ ու պահպանէ Լիբանանը, Սուրիան եւ մեր Հայրենիքը՝ Իր Ս. Խաչին նշանով:

Յայտնենք, որ Ս. Պատարագէն անմիջապէս ետք, Վեհարանին մէջ Վեհափառ Հայրապետը Cilicia TV-ին ճամբով փոխանցեց իր Հայրապետական պատգամը:



90-ԱՄԵԱԿ ԴՊՐԵՎԱՆՔԻ

**ԴՊՐԵՎԱՆՔԸ ՎԵՐԱՆՈՐՈԳ ՆՈՒԻՐՈՒՄՈՎ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ**

Երկուշաբթի, 7 Սեպտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը այցելեց Դպրեվանք եւ իր հայրական խօսքը ուղղեց Դպրեվանքի աշակերտութեան:

Առաջին հերթին, Նորին Սրբութիւնը վերաշեշտեց Դպրեվանքի առաքելութիւնը, որ ուսումէն ու գիտութենէն անդին Աստուծոյ ու ազգին նուիրուելու կոչուած մարդու կազմաւորում է: Վեհափառ Հայրապետը նշեց, որ «Դպրեվանքին մէջ ջամբուած ուսումը իր այլազան լեզուներու ու գիտութիւններու ճամբով լայն գիւրութիւններ կ'ընծայէ աշակերտին իր համալսարանական ուսումը շարունակելու, ինչպէս նաեւ անձր լաւապէս կը զինէ իր առաքելութիւնը ազդու կերպով կատարելու մեր եկեղեցւոյ ու ժողովուրդի կեանքին մէջ»:

Ապա, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ «Աստուծոյ օրհնութեամբ Դպրեվանքը միշտ հեռու մնաց համաճարակի ու տնտեսական տագնապի ստեղծած դժուարութիւններէն: Անցնող ամիսներուն, դասընթացները կանոնաւոր կերպով կատարուեցան, համաճարակի քննութիւնը եղաւ եւ սպառնով կերպով Դպրեվանքը շարունակեց իր կրթական կեանքը: Հոկտեմբեր ամսուան սկիզբը Դպրեվանքը պիտի սկսի իր 2020-2021 կրթական տարեշրջանին եւ սպասելի է, որ յառաջիկայ շաբաթներու ընթացքին Սփիւռքի գաղութներէն աշակերտներ դիմեն Դպրեվանք»:

Նորին Սրբութիւնը իր գնահատանքը յայտնեց նախկին տեսչութեան անդամներուն՝ Հոգչ. Տ. Պօղոս Վրդ. Թինքճեանին (Տեսուչ), Հոգչ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեանին (Հսկիչ), Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանին (Հսկիչ) եւ Հոգչ. Տ. Օշին Վրդ. Զուլալերթանեանին (Հսկիչ), որոնք անցեալ շրջանին նուիրումով ծառայեցին Դպրեվանքին ներս: Ան նաեւ ողջունեց Գերշ. Տ. Մեղրիկ Եպս. Բարիքեանը, որ, վստահաբար, որպէս տեսուչ նոյն նուիրումով պիտի ծառայէ Դպրեվանքին, իր հետ ունենալով երկու հսկիչներ՝ Հոգչ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեան եւ Հոգչ. Տ. Յակոբ Աբղ. Եագուպեան:

Իր եզրափակիչ խօսքին մէջ Նորին Սրբութիւնը ըսաւ, որ «Դպրեվանքը մեր եկեղեցւոյ կեանքին ու մեր ժողովուրդի սրտին մէջ յատուկ տեղ ունի: Մեմբ բոլորս դպրեվանքի եղած ենք եւ Դպրեվանքի ճամբով մեր ծառայութիւնը կատարած ենք ազգին, հայրենիքին ու եկեղեցիին: Վստահ ենք, որ այս նախանձախնդրութեամբ Դպրեվանքը պիտի շարունակէ իր հոգեմտաւոր առաքելութեան»:

1930-ը յատկանշական թուական մըն է իւրաքանչիւր Դպրեվանեցիի համար, որովհետեւ անիկա տարին է բոլորին հոգեհարազատ Դպրեվանքի հիմնադրութեան: Հոգեմտաւոր, հայակերտ ու մշակութապահպան իր նկարագիրով ու առաքելութեամբ՝ Դպրեվանքը 90 տարիներէ ի վեր կը գործէ ի փառս Աստուծոյ եւ ի հզօրացումն ազգիս հայոց:

Այս տարի Դպրեվանքի հիմնադրութեան 90-ամեակն է. սակայն, պայմաններու բերումով, չկարողացանք մեր ժողովուրդի զաւակներուն հետ վայելուչ կերպով նշել զայն:

Յայտնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Բերիոյ եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմերէն ներս, տարւոյս սկիզբը, ժողովրդական հաւաքներով զանազան շրջաններու մէջ տօնախմբուեցաւ Դպրեվանքի 90-ամեակը: Յառաջիկային, եթէ պայմանները ներեն, այլ թեմերու մէջ եւս պիտի նշուի Դպրեվանքի 90-ամեակը:

Վստահ ենք, որ իւրաքանչիւր հայ կը գիտակցի, թէ Սփիւռքի տարածքին, մանաւանդ Հայոց Յեղասպանութենէն ետք, մարդուժի պատրաստութեան մէջ որքան վճռական դեր ունեցած է Դպրեվանքը: Նոյն այս գիտակցութեամբ ու ոգիով, ան կը շարունակէ մարդու պատրաստութեան սրբազան առաքելութիւնը:

«Հասկ»ի էջերուն վրայ յաջորդաբար լոյս պիտի տեսնեն Դպրեվանքի 90-ամեակին նուիրուած յօդուածներ:

ՏԵՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Այսպիսի վերնագիր մը կրնայ անմիջապէս շփոթի մատնել ընթերցողը, զարմանք մը յառաջացնելով, թէ ի՞նչ ըսել է տեսողական հաղորդութիւն: Հասկնալու համար, պէտք է պատմական կարգ մը տեղեկութիւններու դիմել, յստակ իմանալու, թէ հաղորդութեան ականատեսութիւնը կամ «ocular communion» կոչուած եզրը ինչպէս պէտք է հասկնալ եւ ըմբռնել:

Եկեղեցին ունի իր խորհուրդները, որոնք Փիզիքական արտայայտութիւններն են՝ Քրիստոսի կողմէ կատարուած կամ թելադրուած Տնօրինական արարքներու: Եկեղեցին իր հարուստ ծիսական արարողակարգով աստուածային խորհուրդները կը հրամցնէ հաւատացեալներուն, որպէսզի անոնց միջոցաւ Ս. Հոգւոյն շնորհները իջնեն խորհուրդը ստացողին վրայ. օրինակ՝ մկրտուող ու Ս. Միւռոնով դրոշմուող երեխայ մը կամ ձեռնադրութիւն ստացող եկեղեցւոյ պաշտօնեայ մը:

Քրիստոսի երկրաւոր կեանքին վերջին օրերուն, երբ Ան վերջին ընթրիքը կ' ունենար իր առաքեալներուն հետ, հաց եւ գինի կը բաժնեկցէր, ըսելով՝ «ասիկա կատարեցէք իմ յիշատակիս համար» (Ղկ 22:19): Ահա այս հասկացողութիւնը հիմքը դարձաւ Ս. Հաղորդութեան խորհուրդին եւ դարերէ ի վեր կը կատարուի նոյն նշանակութեամբ ու նպատակով՝ «ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»: Բնականաբար, երբ պատմութեան մէջ խորանանք, կը տեսնենք թէ հացին եւ գինիին իսկական էութիւն կամ ներկայութիւն հասկացողութեան մասին տարբեր կարծիքներ յայտնուեցան, իւրաքանչիւրը իրեն յարգարժան պատճառներով եւ հիմքերով: Հացն ու գինին էապէս կը գոյացափոխուին թէ կը գոյացափոխուին, այսինքն խորհրդանշականօրէն կը ներկայացնեն Քրիստոսի մարմինն ու արիւնը, թէ՛ իսկապէս կը վերածուին միսի ու արեան՝ մեր նիւթէն շեղում համարելով չենք խորանար այդ Աստուածաբանական-եկեղեցաբանական խոր հարցին մէջ:

Ժողովուրդի տարեց անդամներուն մօտ տարածուած պարզ եւ յստակ հասկացողութիւն էր, թէ նախապէս տարին մէկ անգամ հաղորդուելու սովորութիւն կար, որ յետագային հինգ տաղաւար տօներուն հաղորդուելու եւ ապա ամէն Կիրակի հաղորդուելու սովորութեան վերածուած է:

Ընդհանրական եկեղեցւոյ ուսումնասէր-աստուածաբաններ դիտել տուած են, թէ հաւատացեալներ երկու պատճառներով չէին հաղորդուէր՝ Ա) որովհետեւ Ս. Հաղորդութեան լրջութեամբ կը մօտենային եւ միայն մեղաւորներ կը ստանային զայն յետմկրտութեան գործուած ներելի մեղքերու քաւութեան համար կամ Բ) տեսողական հաղորդութիւնը բաւարար կը համարէին, Ս. Հաղորդութեան բարձր արժէքին գիտակից մնալով եւ իրենք զիրենք անարժան նկատելով:

Ս. Պատարագի ընթացքին, քահանայագործող պատարագիչը հացը, ապա գինին վեր բարձրացնելով «արէ՛ք, կերէ՛ք... արբէ՛ք ի սմանէ» կը բարձրաձայնէ, տեսողական յագեցում տալու ժողովուրդին: Տեսողական հաղորդութիւնը պարտադրուած չէ որեւէ ժամանակ, սակայն պատմութեան ընթացքին ի յայտ եկած է, որ հաւատացեալներ բաւարարուած են լսատեսողական բաժնով եւ անպայման չեն պնդած Փիզիքապէս հաղորդուել, մանաւանդ եթէ նկատի ունէին լրջութիւնը հաղորդուելուն, այսինքն՝ յետհաղորդուելու գիտակից եւ Աստուածահաճոյ կեանք մը ապրելու անհրաժեշտութիւնը, առանց մեղանչելու եւ կրկին նոյն մեղքերը անհոգութեամբ գործելու:

Լսատեսողական զգայարանքները կարեւոր դերակատարութիւն ունին եկեղեցւոյ մէջ, մանաւանդ Ս. Պատարագի ընթացքին: Առ այդ, միջնադարու հաւատացեալները կը բաւարարուէին Քրիստոսի մարմինը տեսնելով եւ Անոր բառերուն կրկնութիւնը լսելով՝ հաւատալով որ հաղորդակից են արդէն, նոյնիսկ առանց Փիզիքական Հաղորդութիւն ստանալու:

Ահաւասիկ այս է նշանակութիւնը տեսողական հաղորդութեան, որ ջերմեռանդութիւն մը կ' արթնցնէ հաւատացեալներուն մօտ, աւելի երկիւղած հոգիով մասնակից դառնալու Քրիստոսի ընծայաբերման եւ աւելի գիտա-

կից մօտենալու Անոր Մարմինն ու Արեան ճաշակման, որ դեղ է ամէն տեսակ հիւանդութեանց, քաւութիւն՝ ճշմարիտ ապաշխարողաց, դարման՝ զղջացողաց եւ խաղաղութիւն՝ հոգւոց:

Համաճարակի ճգնաժամային եւ ինքնամեկուսացմամբ զգուշաւորութեան մէջ մնալու այդ դժուար օրերուն, Քրիստոնեայ աշխարհի բոլոր հաւատացեալները զրկուեցան եկեղեցական արարողութեանց Ֆիզիքապէս ներկայ գտնուելու ցնծալից առիթէն, ինչպէս նաեւ հաղորդուելով ու ճշմարիտ զղջմամբ ներում ստանալու շնորհքէն: Սակայն, շնորհիւ 21-րդ դարու լայնածիր արդիական արուեստագիտութեան բարիքներուն, հաւատացեալներ կարողացան իրենց տուներէն հետեւիլ եկեղեցական արարողութեանց եւ աւամայ փորձառութիւնը ունեցան տեսողական հաղորդութեան:

Սակայն պէտք չէ անտեսել ու մոռնալ Աստուծոյ տունը յաճախելու հոգեկերտ բարիքը:

Թէկուզ մտածենք, թէ Քրիստոս Ինք ըսաւ, թէ նոյնիսկ եթէ երկու-երեք հաւատացեալներ մէկտեղուին Իր անունով՝ Քրիստոսի ներկայութիւնը ապահովող ու ընդունելի աղօթափայրի վերածող բաւարար ազդակ է այդ (Մտ 18:20), եւ տունէն աղօթելը պարզ ու ընդունելի մտավիճակի վերածենք ներկայ պայմաններուն բերումով, սակայն տակաւին եկեղեցին կը մնայ Աստուծոյ բնակութեան եւ հոգեւոր ապրումներու մշտանորոգ հրաշագեղ տաճարը: Եկեղեցւոյ մէջ է որ աշխարհի բոլոր աղմուկներէն խլացած, հաւատացեալը կրնայ վերանալ ու հոգեւոր մթնոլորտի ամպերուն վրայ թեթեւօրէն սաւառնիլ՝ առանց երկրաւոր մտահոգութեանց բեռին:

Այսօրուան պայմանները կը ստիպեն մեզ տուն մնալ, սակայն աւօրեայ զբաղումներն ու մտահոգութիւնները իր պատերուն մէջ պարփակող անձնական բնակարանները չեն կրնար ու պէտք չէ՞ որ փոխարինեն եկեղեցիները:

Յաճախենք Աստուծոյ տունը եւ Քրիստոսի մարմինն ու արեան մասնակից դառնանք՝ գոհացած սրտով իբրեւ նոր անձ դուրս գալու եւ վերանորոգ յոյսով նոր կեանքին սկիզբ մը դնելու:

ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԹԻՆՔՃԵԱՆ



ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԲԱԲԱԵՈՒՆ ՍԻՐՏԸ

«75 տարիներ շարունակ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը եղաւ լոյսի ու յոյսի փարոս եւ մարդակերտումի դարբնոց՝ ի սպաս մեր եկեղեցւոյ եւ մեր ազգին»:

(Արամ Ա. Կաթողիկոս):

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը այն կառոյցն է, ուր կու գան Հայ պատանիներն ու երիտասարդները եւ կը դառնան եկեղեցւոյ ու ազգին սպասաւորներ:

Դպրեվանքը սակայն, միայն եկեղեցականներ չի պատրաստեր, այլեւ՝ ազգային մշակներ եւ առաջնորդ ղեկավարներ, ինչպէս նաեւ հոգի, միտք եւ արժանիք ունեցող մարդիկ:

Վստահաբար գիտենք, որ 90 տարիէ ի վեր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը հաստատուած է Պէյրութի Անթիլիաս արուարձանին մէջ: 1930-ին, երբ տարագիր Կաթողիկոսութիւնը հաստատուեցաւ Անթիլիաս, Դպրեվանքը հոն հիմնուեցաւ, ապա փոխադրուեցաւ Պիքֆայա: Այնուհետեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սիրտը հանդիսացող Դպրեվանքը իր առաքելութիւնը կը շարունակէ հայ ժողովուրդին կեանքէն ներս՝ ծառայութիւնը ունենալով իբրեւ մեկնակէտ: Բայց, արդեօք պահ մը չ'ա՞րժեր անդրադառնալ, թէ ի՞նչ է Դպրեվանքը:

Ինչպէս վերեւ յիշեցինք, Դպրեվանքը հիմնուած է 1930-ին, գործակցութեամբ երրորդութեան մը, որ կը բաղկանար Սահակ Բ. Կաթողիկոսէ, Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսէ եւ առաջին վերատեսուչ Շահէ Ծ.Վրդ. Գասպարեանէ: Անոնց նպատակն էր Անթիլիասի աւագոտ ափին վրայ կառուցել շէնք մը, որ պիտի շնչաւորուէր դպրեվանեցի կոչուած երիտասարդներով, որոնք պիտի ձգտէին լիովին նուիրուիլ եկեղեցւոյ ու ազգին:

Անոնք կրցան սրբացնել այդ միջավայրը՝ անոր մէջ դնելով իրենց միտքը, հոգին ու սիրտը, որոնց շնորհիւ Դպրեվանքը դարձաւ մարդակերտումի դարբնոց:

Դպրեվանքը այսօր եւս կը յառաջանայ իր հիմնադիրներուն գծած ուղիէն: Ան հաւատարիմ է անոնց առաքելութեան շաւիղին:

Դպրեվանքը ո՛չ միայն կուսակրօն կամ ամուսնացեալ քահանաներ կը պատրաստէ, այլեւ, բառին վաւերական իմաստով՝ գիտակից եւ յանձնառու հայ մարդը:

Դպրեվանեցին կը սորվի եկեղեցւոյ ու ազգին ծառայելու գաղտնիքը եւ ձեռք կը ձգէ հոգեւոր ծառայութեան եւ ընկերային կեանքի համար առողջ դատում:

Այս իմաստով Դպրեվանքը միշտ եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողի-

կոսուլթեան բաբախուն սիրտը. այսինքն՝ ամենակարեւոր հաստատութիւնը: Վեհափառի Հայրապետին բառերով. «Դպրեվանքը մարդ կը պատրաստէ, բայց ո՛չ սովորական մարդ: Դպրեվանքի պատրաստած մարդը գլխագիր մարդն է. այսինքն տիպար հոգեւորականը եւ ճշմարիտ ազգային գործիչը»:

Դպրեվանքը առանձին աշխարհ մըն է, որուն մէջ հայ ժողովուրդի հզօրացման ի խնդիր նուիրեալներ կը պատրաստուին: Ուստի, ան մարդակերտումի եւ հայակերտումի օճախ է, եւ ոչ թէ սովորական դպրոց մը: Հոն աշակերտին միայն ուսում չի ջամբուիր, այլեւ՝ հայկական ոգի, ազգային նկարագիր ու ճշմարիտ հաւատքի զօրութիւն: Դպրեվանքը միշտ յիշեցնողն է, թէ ինք պատրաստ է նուիրեալ ու ծառայող երիտասարդներ պատրաստելու, որպէսզի անոնք ժողովուրդին հետ ու ժողովուրդին համար տազնապին: Զարեհ Ա. Կաթողիկոս Կ՝ըսէր. «Միրեցէք հայ ժողովուրդը իր բոլոր այեկօծութիւններով ու իր բոլոր տարակարծութիւններով»: Ա՛յս է դպրեվանեցիին կեանքը լեցնող աւօրեայ մտածումը: Այսպէս էր նաեւ անցեալին: Հայ գիրի ստեղծման առաջին օրերէն, մեր դպրեվանքերը եղան՝ Ա.Բ.Գ.ի դպրոց, Սիւնեաց ու Տաթեւի պայծառ դպրանոց, Գլաճորի չքեղ համալսարան, ուր մեզի նման անոնք ալ, իրենց կարգին, ուխտեցին ամէն բան մոռնալ ու անձնուիրութեամբ ծառայել՝ ի խնդիր հայ ժողովուրդին ու հայ արժէքին: Մենք՝ դպրեվանեցիներս, ժողովուրդէն Դպրեվանք կու գանք, որպէսզի լիցքաւորուինք իմացական, հոգեւոր եւ բարոյական արժէքներով: Աւարտելէ ետք Դպրեվանքի ուսումնական ծրագիրը, մեզմէ կը սպասուի, որ կամաւորաբար եւ կատարեալ գիտակցութեամբ ծառայենք Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին:

Դպրեվանքը այսօր կ'ընդունի այն պատանին, որ ապագային տարբեր մարզերու մէջ պիտի ծառայէ, իր եկեղեցւոյ ու ազգին պանծացման համար: Ան կոչուած է հայ պատանին լիցքաւորելու եկեղեցական ու ազգային առողջ շունչով:

Կրօնական առաքելութեան կողքին, Դպրեվանքը ամբողջութեամբ մասնակից է ազգային կեանքէն ներս տեղի ունեցող բոլոր հոլովոյթներուն եւ, բանիւ ու գործով, զօրակից է ու աջակից ազգային պահանջատիրութեան բոլոր ճիգերուն եւ ուղեկից հայապահպանման ու հայրենաշինութեան համայնական երթին: Ահաւասիկ կը տեսնենք, թէ ինչպիսի պատասխանատու առաքեալներ պատրաստող կաճառ մըն է Դպրեվանքը: Ան ո՛չ լիճ եւ ոչ ալ կղզի մըն է, այլ՝ հանրածանօթ սրբավայր մը: Ան Սփիւռքի հոգին է եւ Կաթողիկոսութեան սրտին մայր երակը: Դպրեվանքին առանցքը կը կազմեն կուսակրօն սարկաւակները, որոնք պարզ նիւթերու եւ գիտութեան կողքին կը հմտանան աստուածաբանական, փիլիսոփայական, մեկնողական եւ հայագիտական նիւթերու մէջ: Եւ անոնցմով գինուած՝ կը լծուին առաքելութեան ու ծառայութեան:

Վերջապէս, Դպրեվանքը մեր ազգին հարազատ տունն է: Զայն լաւագոյնս ճանչնալու եւ գիտնալու համար, հարկ է, որ այցելէք Դպրեվանքը, որովհետեւ որքանով փորձենք խօսիլ Դպրեվանքին եւ անոր առաքելութեան մասին, պիտի չկարողանանք ամբողջական եւ կատարեալ կերպով պատկերել

զայն ձեր աչքերուն առջեւ: Արդ, այցելեցէ՛ք եւ տեսէք, թէ որքանով գործունեայ է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը: Նաեւ կոչ կ'ուղղենք բոլոր անոնց, որոնք կոչումը կը զգան կամ կը մղուին յիշեալ առաքելութեան ճամբով ծառայելու մեր ազգին եւ եկեղեցւոյ:

Կ'ըսենք «յաճախեցէք Դպրեվանք, ուր պիտի ուռճանաք, թրծուիք ու հարստանաք հայկական, ազգային, եկեղեցական ու հոգեւոր արժէքներով, գանձերով եւ նոր ոգիով ու շունչով այլափոխուած ու վերակենդանացած՝ պիտի նետուիք ծառայական ասպարէզ»:

Խօսքս կ'ուզեմ ակարտել բանաստեղծին բառերով, որ գեղեցկօրէն կը պատշաճի Դպրեվանքին. «Տաճար հրաշագործ, վսեմ ձուլարան ուր կապարն ոսկի եւ նիւթն հոգի դառնան»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ՍԱՂՏԸՃԵԱՆ
Առաջնորդական Փոխանորդ
Յունաստանի Հայոց Թեմին



ՄԵՐ ՀՈԳԵՌՈՐ ԾՆՆՂԱՎԱՅՐԻՆ՝ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ

Դպրեվանքեան առաջին իսկ տարիներուս, յստակօրէն կը յիշեմ, բոլոր ծանօթներուս արտայայտութիւնները, որոնք կ'ունենային իմ մասիս, ըսելով «շատ փոխուած ես»: Բնաւ չէի անդրադառնար, սակայն կեանքիս մէջ փոփոխութիւնները այնքան զգալիօրէն աճած էին, որ մարդիկ կ'ուզէին արտայայտուիլ: Երբ հօրս մահուան սուգը մեր ընտանեկան երգիքը կը ծանրացնէր՝ դժուար պայմաններու տակ Ազգ. Աբգարեան վարժարանի նախակրթարանը ակարտեցի, ապա որոշեցի դիմել Դպրեվանք՝ ուսումս շարունակելու համար: Թէեւ Կիրակնօրեան սիրող եւ յաճախող մնայուն աշակերտ էի, սակայն երբեք չէի փափաքած Ս. Խորանին վրայ ծառայել եւ կամ եկեղեցական շապիկ հագուիլ: Նոյնիսկ, կրակին հանդէպ ցնցում ունենալու պատճառով, կը սարսափէի մոմ բռնելէն: Շատ լսած էի Դպրեվանքի մասին, սակայն ո՛չ Դպրեվանք այցելած էի, եւ ո՛չ իսկ նկարով տեսած էի այդ վայրը: Չէի գիտեր, թէ ուր կ'երթամ. անկեղծօրէն, եկեղեցական ըլլալու պատկերացումն անգամ չունէի: Քանի մը առիթներով, նախակրթարանի տարբեր ուսուցիչներ ակնարկած էին, որ եկեղեցականի ձայն ունիմ, եւ կամ եկեղեցական պէտք է ըլլամ, սակայն երբեք կարեւորութիւն չէի տուած:

Անադօտ պատկերով կը յիշեմ, այն պահը, երբ եղբայրս ինքնաշարժը պատրաստեց, մօրս հետ զիս ճամբելու Դպրեվանք: Հագուստներու պայու-

սակներուս հետ, ունէի նաեւ տարբեր անձերէ եկած պայուսակ մը մտքեր, խօսքեր եւ արտայայտութիւններ, որոնք շարկած Դպրեվանք կը հանէի: Այդ բոլոր պայուսակներուն հետ, հասայ այն գեղեցիկ վայրը, ուր տունս պիտի կոչէի եւ սրտիս մէջ ջերմօրէն պիտի ընկալէի:

Կանաչազարդ նոճիներուն տակ, քարին վրայ նստած, լուռ կը դիտէի բա- կը գնդակով խաղացող տղոց շարժումները, թէեւ, մտքիս մէջ, չէի պատկե- րացուցած, թէ տարիքի տարբերութիւն ունեցող տղաք կրնան իրար հետ խաղալ: Գնդակը եկաւ իմ կողմս: «Ամանո՛ւ, նետէ գնդակը», ըսին: Անակըն- կալի եկայ: Նորէն. «Ամանո՛ւ, նետէ գնդակը» կրկնեցին: Առաջին զարմանքս էր, թէ անունս յանկարծ փոխուած էր «Ամանոս» (Ծնած ու ապրած հայա- հոծ մեր թաղամասին անունն է), իսկ երկրորդ զարմանքս, որ ինձմէ տարի- քով մեծ երիտասարդ մը, ինծի հետ կը կատակէր, նման փորձառութիւն չէի ունեցած: Բաւական ժամանակ, անունս տարածուեցաւ եւ մնաց «Ամանոս», մինչեւ որ սորվեցան, թէ անունս Յարութ էր:

Երկու եղբայրներուս եւ իմ միջեւ տարիքի եօթ-ութ տարուան տարբե- րութիւն մը կայ: Այդ պատճառով, տան մէջ ստիպուած էի առանձին խաղալ եւ իմ աշխարհս կառուցել: Տունէն Դպրեվանք տուն փոխադրուելի եւ շրջա- պատուելի բազմաթիւ մեծ ու փոքր եղբայրներով կեանքիս մէջ բնականաբար մեծ փոփոխութիւն մը եղաւ: Այս բոլորով հանդերձ կեանքս առաւել կարգա- պահութեան ծիրին մէջ մտաւ՝ անկողինս շտկելով, ամէն տեսակ ճաշ ուտե- լով եւ մանաւանդ գիրք կարդալու սէրը մէջս աճեցնելով: Դպրեվանքը, իր շունչով, կեանքիս կազմաւորումը ձեւաւորեց ու կարգաւորեց եւ մինչեւ օրս կը վայելեմ այդ բարիքներուն պտուղները: Եկեղեցւոյ հանդէպ սէրս, ընթեր- ցելու, սորվելու, ապագայիս տեսլականը ունենալու շնորհքներով լեցուց, որ այդ փոքր տարիքէն ես ինքզինքս ծառայութեան կ'ուզէի նետել: Իսկ աւե- լի'ն, այն հաւատքն ու ոգին, որ ուժն ու ինքնավստահութիւն կու տայ՝ ան- կարելին կարելի ընելու, մանաւանդ ի խնդիր մեր եկեղեցւոյ եւ մեր ազգին, անխափան հիմեր դրին էութեանս մէջ: Յաճախ, Արամ Ա. Վեհափառ Հայրա- պետը կը շեշտէ այս իրականութիւնը, սակայն մէկը կրնայ միայն աւելին հասկնալ, երբ իրականութեան գետնի վրայ գտնուի եւ ապրի: Երբ Նորին Սրբութիւնը, անարժանս առաքեց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս ծառայելու եւ ուսումնա շարունակելու Միացեալ Նահանգներուն մէջ, ինքզինքս տեսայ այն բառերուն մէջ, որ Վեհափառ Հայրապետը մեր սրտերուն մէջ այդ հաւատքը արթնցուցած էր եւ Դպրեվանքը մեզ կերտած էր: Այն ինչ որ կրցայ յաջողեցնել իբրեւ փոքր երիտասարդ, հոգեւոր հովիւ եւ ուսանող, կը պարտիմ Աստուծոյ շնորհքին, Դպրեվանքին եւ Վեհափառ Հայրապետին ներշնչող վստահութեան եւ սկզբունքներուն: Ուր որ գացի, ինչ որ ըրի, ինչ որ եղայ, չէի կրնար սրտիս մէջ զսպել Դպրեվանքեան շունչը, եւ չբաժնեկցիլ մեր ժողովուրդի զաւակներուն հետ: Ամէն անգամ, երբ Դպ- րեվանքեան յուշերս ու կիլիկիոյ կաթողիկոսութեան հաւատացած սկզբ- բունքները սեղան կը դնէի ծխականներուս հետ, անոնք յոյսով եւ աշխա- տելու նուիրումով կը ներշնչուէին: Անուրանալի իրականութիւն է ինծի համար, որ Դպրեվանքը զիս իմ ոչինչէս վեր բարձրացուց, Աստուծոյ շնորհ-

քով սնուցանեց, պատրաստեց ու կերտեց, որպէսզի Աստուծոյ փառքն ու շնորհքը տարածեմ՝ ծառայելով:

Մինչեւ այսօր, կարօտով կը յիշենք, այն անմոռանալի օրերը, որ երբեմն զուարճանալով, եւ երբեմն ալ դժգոհութեամբ անցուցած ենք Դպրեվանքի անդաստանէն ներս: Ամէն առիթի, երբ օծակիցներով կամ միաբանակից եղբայրներով վերապրինք դպրեվանքեան օրերը, նոր կեանքի շունչ մը կու գայ մեր վրայ, որովհետեւ եղբայրութեամբ ապրած եւ յուշեր հիւսած ենք մէկ տան մէջ: Յաճախ, տարբեր սերունդներու միաբանակից հոգեւորականներ, քով-քովի կու գանք, կը գրուցենք, եղբայրական ու ջերմ կապ մը կը զգանք, այնպէս թուելով, թէ իրար հետ երկար տարիներու կեանք բաժնած ենք:

Դպրեվանքի շունչը այնքան ամուր տեղ գտած է մեր հոգիներուն մէջ, որ մեզ կը կամրջէ աներեւելի եղբայրական սիրով, հակառակ տարիներու մեծ տարբերութեան: Կեանք ու մարդ կերտող, կերպարանափոխող եւ մեզ եկեղեցւոյ ու ազգի սպասաւորներ դարձնող այս գեղեցիկ դարբնոցին կը նայինք, որ արդէն 90 ոսկեայ տարիներ շնորհած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հայ ազգին, հպարտանքով եւ երախտագիտութեամբ կը լեցուինք: Կը խոնարհինք այն հիմնադիր առաքեալներուն՝ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսին, Բաբգէն Ա. Կիլիկիական Աթոռակից Կաթողիկոսին եւ Շահէ Արք. Գասպարեանին, որոնք անհաղորդ չմնացին Հայոց Յեղասպանութեան արհաւիրքին տանջալից ցաւէն: Անոնք մոխրացած իրականութեան դարձեալ մարմին տուին, աւագէն՝ Դպրեվանքը վերակենդանացուցին եւ ունեցան Հայ Եկեղեցւոյ ապագայի տեսլականը: Շնորհիւ այս խոնարհ մեծերուն, որոնք Հայոց Յեղասպանութեան հարուածին դիմաց, իրենց վրէժը Անթիլիասի հողին վրայ Դպրեվանքի եւ Կաթողիկոսութեան փարոսները բարձրացնելով առին, որ մինչեւ օրս կը գործէ եւ կը պահպանէ Հայ ազգի զաւակները ի Սփիւռս աշխարհի: Թող աստուածային լոյսը առաւել շողացնէ անոնց հոգիները, եւ իրենց իսկ ձեռքերով վերակենդանացած հոգեւորականներու այս դարբնոցի սերունդները տեսնելով, հրճուին երկինքի Արքայութեան մէջ: Խուսկ եւ մոմ անոնց անմար յիշատակին:

Ի վերջոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մեր սիրելի հոգեւոր ծննդավայրին եւ տան՝ Դպրեվանքին 90 ամեակին առիթով, անհուն երախտագիտութեան զգացումներուս կողքին, սրտանց կ'աղօթեմ, որ այս երկնասլաց հոգեւոր փարոսը անխախտ եւ անսասան մնայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ, որպէսզի շարունակէ հոգեւոր եւ ազգային սպասաւորներու սերունդներ պարգեւել մեր Հայ ազգին եւ եկեղեցիին: Թող Դպրեվանքեան սերունդները խտանան ու բազմանան, որպէսզի Ս. Գրիգոր Լուսաւորիչի Կանթեղը շարունակէ ջերմացնէ հայու ոգին եւ սիրտը:

Շնորհաւոր 90 տարիներդ: Պողալից ըլլան գալիք բոլոր տարիներդ, մեր սիրելի հոգեւոր եւ հայակերտ դարբնոց՝ Դպրեվանք:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԵՐՆԷԶԵԱՆ
Տեսուչ՝ «Կիլիկիա Թանգարան»ի

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՈՂՁՈՒՆԵՑ
ՍԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐՈՒ
ԽՈՐՀՈՒՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ**

Ուրբաթ, 18 Սեպտեմբերին, Պքերքէի մէջ տեղի ունեցաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) Գործադիր Վարչութեան ժողովը: Յայտնենք, որ «քորոնա» ժահրին պատճառով, փոխան Խորհուրդի համաժողովին՝ տեղի ունեցաւ Գործադիր Վարչութեան ժողովը: Վարչութիւնը քըննարկելէ ու արժեւորելէ ետք Մ.Ա.Ե.Խ.ին անցնող շրջանի աշխատանքը, յառաջիկայ չորս տարիներուն համար Խորհուրդի ընդհանուր քարտուղար ընտրեց դոկտ. Միշել Ապսը:

Դոկտ. Միշել Ապսը յոյն ուղղափառ եկեղեցւոյ անդամ է, Սէն Ժողէֆ համալսարանի մէջ ընկերաբանութեան դասախօս եւ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց մէջ լայն փորձառութիւն ունի եւ մօտէն ծանօթ է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Շաբաթ, 19 Սեպտեմբերին, Դոկտ. Ապսը հեռաձայնային խորհրդակցութիւն մը ունեցաւ Վեհափառ Հայրապետին հետ՝ վստահեցնելով, որ ներկայ դժուար պայմաններուն մէջ նուիրումով պիտի կատարէ իրեն վստահուած առաքելութիւնը:

Յայտնենք նաեւ, որ Գործադիր Վարչութեան ժողովին որպէս լիիրաւ անդամներ առցանց կերպով ժողովին մասնակցեցան՝ Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանը եւ Սէն Ժողէֆ համալսարանի դասախօս դոկտ. Ժան Սալմանեանը: Սրբազան Հայրը հեռաձայնով տեղեակ պահեց Նորին Սրբութիւնը Վարչութեան ժողովին աշխատանքներուն ու որոշումներուն մասին:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 7 Օգոստոսին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Լիբանանի Ռամկավար Ազատական կուսակցութեան նորանշանակ վարչութեան՝ գլխաւորութեամբ Տոքթ. Ալետիս Տաքետեանի: Վարչութիւնը Վեհափառ Հայրապետին փոխանցեց կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ամբողջական զօրակցութիւնը Լիբանանի հայութեան վերականգնումին գծով Նորին Սրբութեան նախաձեռնութեան ու հայրապետական կոչին: Ապա, ան պարզեց կուսակցութեան դիմագրաւած ներքին դժուարութիւնները, վերջին շրջանին իրենց առած կարգ մը որոշումները եւ ապագայի հեռանկարները:

Առաջին հերթին, Վեհափառ Հայրապետը գնահատեց կուսակցութեան պատրաստակամութիւնը գործնապէս մասնակցելու Լիբանանի հայութեան վերականգնումի աշխատանքներուն՝ շեշտելով, որ Լիբանանի հայութեան վերականգնումը համազգային նշանակութիւն ունի եւ անհրաժեշտ է, որ համազգային ճիգով կատարուի: Ապա, ան ընդգծեց Ռամկավար կուսակցութեան կարեւոր դերը ընդհանրապէս հայ ժողովուրդի ու յատկապէս Սփիւռքի հայութեան կեանքէն ներս: «Կուսակցութիւնը կարեւոր ներդրում ունեցած է հայ կեանքի պահան-

ջատիրական, մշակութային, կրթական եւ այլ բնագաւառներէն ներս: Հետեւաբար, մեր ջերմ թելադրութիւնն է ձեզի, որ վերակազմակերպուիք, որպէսզի վերանորոգ կենսունակութեամբ շարունակէք ձեր համազգային առաքելութիւնը», ըսաւ Վեհափառ Հայրապետը: Ան նաեւ յայտնեց, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, միւս կուսակցութիւններու կարգին, միշտ նեցուկ կը կանգնի նաեւ Ռամկավար Ազատական կուսակցութեան ազգանուէր ու հայրենակերտ առաքելութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիրակի, 9 Օգոստոսին, Ս. Եւ Ամմահ Պատարագէն ետք, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Հայաստանի Հանրապետութիւնը ներկայացնող պատուիրակութեան: Պատուիրակութեան մաս կը կազմէին՝ Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբէկեան, Հայաստանի Խորհրդարանի Լիբանան-Հայաստան բարեկամութեան յանձնախումբի ատենապետ Հրաչեայ Յակոբեան, Հայաստան-Սփիւռք հարցերու գլխաւոր յանձնակատար Զարեհ Սինանեան եւ Նոյն բաժանմունքի տնօրէնուհի Սառա Անճարկոյեան, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տնօրէն Հայկակ Արշամեան եւ

փոխ-վարչապետի գրասենեակի օգնական Սերժ Վարազ Սիսեռեան:

Պատուիրակությունը Վեհափառ Հայրապետին ներկայացուց իր առաքելութեան նպատակը եւ յատկապես Լիբանանի հայութեան կատարուելիք օժանդակութեան գանազան երեսները:

Նորին Սրբութիւնը իր գնահատանքը յայտնեց Հայաստանի պետութեան, թէ՛ Լիբանանի եւ թէ՛ հայ համայնքին իրենց կատարելիք օժանդակութեանց համար: Միաժամանակ ան յիշեցուց, որ Լիբանանի հայութեան վերականգնումին գծով կատարուելիք նիւթական օժանդակութիւնը պետք է ըլլայ միասնական ճիգով եւ կազմակերպուած կերպով: Հետեւաբար, փոխանակ մասնակի հանգանակութիւններ ու նուիրատուութիւններ կատարելու կամ կազմակերպելու, այդ աշխատանքները պետք է կատարուին Կաթողիկոսարանի եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին կողմէ հաստատուած յատուկ հաշիւներու ճամբով:

Նոյն օրը, հեռաձայնային խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ Նորին Սրբութեան եւ վսեմաշուք վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի միջեւ, որու ընթացքին վերջինս մօտէն հետաքրքրուեցաւ ընդհանրապէս պայթումէն ետք Լիբանանի պարզած ներկայ կացութեան ու յատկապէս Լիբանանի հայութեան դիմագրաւած դժուարութիւններուն զրծով, ինչպէս նաեւ անդրադարձաւ Լիբանանի պետութեան եւ հայ համայնքին՝ Հայաստանի Հանրապետութեան կողմէ կատարուելիք օժանդակութեանց:

Վեհափառ Հայրապետը վարչապետին փոխանցեց ընդհանուր տեղեկութիւններ Լիբանանի հայ համայնքին կրած վնասներուն շուրջ եւ իր գնահատանքը յայտնեց Հայաստանին ցուցաբերած գործնական զօրակցութեան նկատմամբ:

Վարչապետը յայտնեց, թէ Վեհափառ Հայրապետին հետ անհրաժեշտ է որ խորհրդակցութիւնները շարունակուին, որպէսզի Հայաստանի կողմէ կատարուելիք օժանդակութիւնները ըլլան օգտաշատ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄՕՏԵՆ ԿԸ
ՀԵՏԵԻ ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԵՆ ՆԵՐՍ
ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՍՏԵՂԾԱԾ ԿԱՅՈՒԹԵԱՆ**

Անցեալ ամիս Հալէպի մէջ «Զորոնա» ժահրը լայն տարածում ունեցաւ եւ բնականաբար հասաւ նաեւ Հալէպի մեր հայ գաղութին: Այս իմաստով, Վեհափառ Հայրապետը մօտէն հետեւեցաւ ստեղծուած կացութեան եւ բազմիցս խորհրդակցութիւններ ունեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մասիս Եպս. Չօպուեանին եւ համայնքին պատասխանատուներուն հետ:

Նկատի ունենալով համայնքին կարիքները, Վեհափառ Հայրապետը անմիջապէս որոշ գումար մը փոխանցեց իրենց՝ գործածուելու համար դեղորայքի եւ առողջապահական կարիքներու, ինչպէս նաեւ Հայ Օգնութեան Միութեան (Հ.Օ.Մ) կարգադրութեամբ անհրաժեշտ դեղորայքը ղրկուեցաւ Հալէպ:

Այս առիթով, սրբազանը իր շնորհակալութիւնը յայտնեց վերջին շրջանին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ սուրիահայութեան կատարուած օժանդակութեան համար, իսկ Վեհափառ Հայրապետը իր կարգին, անգամ մը եւս յիշեցուց, թէ մեր Ս. Աթոռը միշտ պատրաստ է իր աջակցութիւնը ընծայելու բոլոր շըրջաններէն ներս հաստատուած Սուրիոյ հայ համայնքի գաւակներուն:

Իր խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը անգամ մը եւս կոչ ուղղեց մեր ժողովուրդի գաւակներուն, բոլոր գա-

ղութներն ու շրջաններն ներս, որ բարձրագոյն աստիճանի զգուշաւորութիւն ցոյց տան համաճարակի գծով՝ հեռու մնալով, հաւաքներէ, խճողուած վայրերէ, միշտ դիմակ գործածելով եւ հետեւելով տեղւոյն իշխանութեան ցուցմունքներուն:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԵՔԵՏԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆԻ ԴԻՒԱՆԻՆ

Շաբաթ, 15 Օգոստոսին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Թէքէեան Մշակութային Միութեան հիմնադիրներու մարմինի դիւանին այցելութիւնը՝ գըլխաւորութեամբ ատենապետ Յակոբ Գասարճեանի, որուն կ'ընկերանային Անի Լաջինեան-Մակարեան եւ Տոքթ. Յովիկ Վարդանեան:

Այցելութիւնը առիթ մը հանդիսացաւ անդրադարձ կատարելու Թէքէեան Մշակութային Միութեան աշխատանքներուն եւ յառաջիկայ ծրագիրներուն, ինչպէս նաեւ Լիբանանի հայութեան դիմագրաւած մտահոգութիւններուն: Այս ծիրէն ներս անոնք յայտնեցին, թէ միութեան կեդրոնը եւ Թէքէեան Վարժարանը լուրջ վնասներու ենթարկուած են Պէյրութի մէջ պատահած պայթումին հետեւանքով:

Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ կարեւորութեամբ շեշտեց միասնական ու հաւաքական ոգիով եւ կարելի փութով Լիբանանի հայութեան վերականգնումին հրամայականը, որովհետեւ, ինչպէս անցեալին, նոյնպէս այսօր, համահայկական իր դերակատարութեամբ առանցքային տեղ կը գրաւէ Լիբանանի գաղութը Սփիւռքի հայութեան կեանքին մէջ:

ՌՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԵՏ ՔԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Երկուշաբթի, 17 Օգոստոսին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Ռուս Եկեղեցւոյ Հոգեւոր Պետ Քիրիլ պատրիարքին ներկայացուցիչը: Ան Նորին Սրբութեան փոխանցեց պատրիարքին եղբայրական ողջոյնները, ինչպէս նաեւ անոր անձնական նամակը՝ ուղղուած Վեհափառ Հայրապետին:

Յիշեալ նամակին մէջ Քիրիլ պատրիարք իր ցաւը կը յայտնէր շաբաթ մը առաջ Պէյրութի Նաւահանգիստին մէջ պատահած պայթումին հետեւանքով զոհուած հայերուն, վիրաւորներուն եւ պայթումին պատճառած վնասներուն գծով: Ան նաեւ իր զօրակցութիւնը կը յայտնէր Նորին Սրբութեան ճամբով Լիբանանի հայութեան:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը եւ Քիրիլ պատրիարքը շուրջ 40 տարիներ միասին գործակցած են Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդէն ներս:

Յիշենք, որ նոյն օրը Նորին Սըրբութիւնը նման նամակ մը ստացաւ նաեւ Յունաստանի ուղղափառ եկեղեցւոյ հոգեւոր պետէն:

Հանդիպումին ներկայ էր Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական յարաբերութեանց վարիչ՝ Հոգշ. Տ. Հրանդ Վրդ. Թահանեան:

ԱՆԹԻԼԻԱՍԻ ԶԵՌԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՏԻՊՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՄԵՉ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական տնօրինումով ըստանձնելէ ետք Մատենադարանի ընդ-

հանուր պատասխանատուությունը, Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան կը տանի յիշեալ բաժանմունքին վերադասաւորման աշխատանքը՝ առաջնահերթ կարելորդութիւն տալով ձեռագրատան եւ հնատիպներու բաժանմունքներուն:

Վեհափառ Հայրապետը այցելեց յիշեալ բաժանմունքներու կեդրոնը, որպէսզի մօտէն իրազեկ դառնայ կատարուող աշխատանքներուն: Ան գնահատելով Սրբազանին ցուցաբերած նախանձախնդրութիւնը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր ու մշակութային հարստութիւնը ներկայացնող ձեռագիրներուն ու հնատիպներուն նկատմամբ, շեշտեց հետեւողական կերպով ու բժախնդիր մօտեցումով ձեռագիրներու ու հնատիպներու վերադասաւորումը շուտով իր լրումին հասցնելու անհրաժեշտութիւնը՝ իր անմիջական հսկողութեան տակ:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ

Վեհափառ Հայրապետը Թռչնոց Բոյն իր անակնկալ այցելութեամբ ուրախացուց փոքրիկները, որոնք Հայրապետին շուրջ հաւաքուելով պատմեցին իրենց առօրեային մասին, մըտերմիկ գրոյցներ ունեցան անոր հետ եւ շնորհակալութեամբ ստացան անոր բերած նուէրները:

Նորին Սրբութիւնը նաեւ շրջեցաւ որբանոցը եւ մօտէն տեղեկացաւ շինարարական աշխատանքներուն, սընընթամթերքի ապահովութեան, ինչպէս նաեւ փոքրիկներուն կազմաւորման համար տեղի ունեցող զանազան ծրագիրներուն մասին:

ՄԱՍԼՈՅ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄԵՆՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ուրբաթ, 21 Օգոստոսին, Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Միջին Արեւելեան տարածաշրջանի առցանց առաջին ժողովին մասնակցած խմբագիրներու այցելութիւնը:

Այցելութեան նպատակն էր Վեհափառ Հայրապետը իրազեկ դարձնել ժողովին արծարծուած միտքերուն ու առաջարկներուն եւ զեկուցել յետագայ աշխատանքներուն մասին:

Խմբագիրները զեկուցեցին, որ Անթիլիասի Մայրավանքին մէջ կայացած մամլոյ համահայկական համագումարէն ետք, համակարգող խորհուրդը թէ՛ լիագումար եւ թէ առցանց նիստերով կ'աշխատի իրականացնել համախմբումի տարբեր ձեւաչափերով նիստեր եւ քննարկումներ:

Այդ ծրագիրներէն բխած եւ ներկայ պայմանները նկատի ունենալով, որոշուած էր գումարել տարածաշրջանային առցանց նիստեր, որոնցմէ առաջինը Միջին Արեւելեան մակարդակով տեղի ունեցած է արդէն:

Շուտով կը կայանայ նաեւ Եւրոպայի մէջ գործող հայկական լրատուամիջոցներու խմբագիրներու նիստը: Այս բոլոր աշխատանքներուն նպատակը լրագրողական ցանցը աշխոյժ պահելն է եւ համախմբուածութեան կանոնաւոր կշռոյթներ ապահովելը:

Նորին Սրբութիւնը բարձր գնահատեց մամլոյ ոլորտին մէջ տարուող աշխատանքները, որոնք հետեւողականութիւն կը ցուցաբերեն եւ կ'աշխատին միշտ արծարծ պահել անփոխարինելի դերակատարութիւն ունեցող հայ մամուլի առաքելութիւնը:

Իր կարգին, Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտա-

կարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբէկեան, կարեւոր նկատելով մամուլը համախմբելու եւ կառուցակարգուած ձեւով աշխատելու իրողութիւնը՝ յայտնեց, որ պետութիւնը միշտ պատրաստ է սատար կանգնելու Հայրենիք-Սփիւռք ուղղութեան վրայ մամուլը ներկայացնող գործիչներու համախումբ աշխատանքներուն:

Խմբագիրները անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնեցին Հայրապետին իր ցուցաբերած նիւթաբարոյական աջակցութեան՝ մամուլի պահպանման ու զարգացման եւ առաքելութեան անշեղ երթին համար:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒԼԵՑ ՎԱՏԻԿԱՆԻ ՍՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ

Հինգշաբթի, 27 Օգոստոսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Վատիկանի մօտ Լիբանանի դեսպան՝ Դոկտ. Ֆարիտ Ալ-Խազէնը:

Վեհափառ Հայրապետին եւ դեսպանին խօսակցութեան առանցքը դարձաւ Լիբանանէն ներս ստեղծուած տնտեսական, մարդասիրական ու քաղաքական կացութիւնը եւ այդ գծով Վատիկանի մօտեցումն ու դերակատարութիւնը:

Նորին Սրբութիւնը իր մտածումներն ու սպասումները յայտնեց դեսպանին, առաջարկելով որ դեսպանը իր կարգին զանոնք փոխանցէ վատիկանի պատասխանատուներուն:

ՍԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱԻԱՔ Ս. ԱՍՏՈՒԿԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻՆ ՍԷՋ

Ուրբաթ, 28 Օգոստոսին, Պիքֆայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, տեղի ունեցաւ միաբանական հաւաք, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ

Ա. Կաթողիկոսին եւ մասնակցութեամբ 22 վանաբնակ միաբաններուն: Յայտնենք, որ շուրջ երկու ամիսներ առաջ միաբանական համագումար տեղի պիտի ունենար Անթիլիասի Մայրավանքին մէջ, սակայն ստեղծուած անբնական պայմաններու հետեւանքով յետաձգուեցաւ:

Ողջունելով միաբան հայրերու միատեղ ներկայութիւնը՝ Վեհափառ Հայրապետը իր խոր գոհունակութիւնըն ու բարձր գնահատանքը յայտնեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութիւնը թէ՛ Մայրավանքէն եւ թէ՛ թեմերէն ներս նուիրումով կը կատարէ իր ծառայութիւնը: Ան յիշեցուց, թէ միաբանութիւնը մէկ ամբողջութիւն է: Միաբան հայրերը ո՛ր որ ծառայեն եւ ի՛նչ հանգամանքով, անոնք ամբողջական մասը կը կազմեն միաբանութեան:

Ապա, Հայրապետը անդրադարձաւ հետեւեալ կետերուն.-

1) Ներկայ անբնական պայմաններուն մէջ անհրաժեշտ է մեր ծառայութիւնը դարձնել աւելի կազմակերպ ու հետեւողական՝ առաւելագոյն չափով նոր ծաւալ ու մղում տալով դէպի ժողովուրդ ուղղուած մեր եկեղեցւոյ ծառայութեան, յատկապէս թեմական ու ծխային մակարդակներու վրայ:

2) «Քորոնա» ժահրը առաւելագոյն չափով մեր կեանքէն հեռու պահելու գծով անհրաժեշտ է մէկ կողմէն յիշեցընել մեր ժողովուրդի գաւակներուն զգոյշ ըլլալու եւ կանխարգելիչ միջոցներու դիմելու հրամայականը, եւ միւս կողմէն մեր կենցաղակերպով օրինակ դառնալու անոնց:

3) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ մեր թեմերը թէ՛ կարիքաւոր ընտանիքներու նպաստաբաշխումի ճամբով, թէ՛ դեղորայք հայթայթելով եւ թէ՛ բարերարներ ապահովելով կը շարունակեն օգտակար ըլլալ մեր ազգի գաւակներուն: «Այս առիթով

Մեր ջերմ գնահատանքը անգամ մը եւս կ'ուզենք յայտնել մեր եկեղեցւոյ եւ մեր կազմակերպութիւններուն ճամբով իրենց նիւթական սատարը բերող մեր բոլոր ազգայիններուն», ըսաւ Նորին Սրբութիւնը:

4) Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ Դպրեվանքի տեսուչ Նշանակած Է Գերշ. Ս. Մեղրիկ Եպս. Բարիքեանը ու տեսչութեան մաս պիտի կազմեն, որպէս հսկիչներ Հոգշ. Ս. Գեւորգ Աբղ. Գարակէօզեանը եւ Հոգշ. Ս. Յակոբ Աբղ. Եագուպեանը: Նախկին տեսուչ Հոգշ. Ս. Պօղոս Վրդ. Թինքճեանը թեմական ծառայութեան պիտի մեկնի: «Թռչնոց Բոյն»ի տեսուչ Նշանակուեցաւ Հոգշ. Ս. Տաճատ Վրդ. Աշրգեանը: Կաթողիկոսարանի երգչախումբերու ղեկավարի պաշտօնին առընթեր, Վեհափառ Հայրապետին գաւազանակիր Նշանակուեցաւ Հոգշ. Ս. Չաւեն Վրդ. Նաճարեանը: Մատենադարանապետի եւ Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի տնօրէններու օգնական Նշանակուեցաւ Հոգշ. Ս. Արտաւազդ Վրդ. Շարոյեանը: Նորին Սրբութիւնը յայտնեց, որ յառաջիկայ ամիսներուն թեմական ծառայութեան մէջ գտնուող կարգ մը միաբան հայրեր պիտի վերադառնան եւ ուրիշներ պիտի մեկնին:

5) Նորին Սրբութիւնը լայնօրէն անդրադարձաւ Լիբանանահայութեան վերականգնումի հրամայականին: Ան ըսաւ, որ «Լիբանանի հայ գաղութը առանցքային դեր ու տեղ ունի մեր ժողովուրդի կեանքէն ներս: Հետեւաբար, որպէս համահայկական առաջնահերթութիւն, մենք բոլորս յանձնառու պէտք է ըլլանք այս գաղութի վերականգնումի աշխատանքներուն: Հանգանակութիւնը սկսած է, ինչպէս նաեւ վերականգնումի աշխատանքները: Մենք մօտէն պիտի հետեւինք այս յոյժ կարեւոր գործընթացին: Մեր սպասումն է, որ բոլոր գաղութները եւ ազգա-

յինները իրենց աջակցութիւնը ուղղեն մէկ հասցէի ու մէկ նպատակի՝ լիբանանահայութեան վերականգնում»:

6) Վեհափառ Հայրապետը նաեւ հակիրճ կերպով անդրադարձաւ, հակառակ ստեղծուած դժուար պայմաններուն, Կաթողիկոսարանի կողմէ կատարուող աշխատանքներուն՝ դաստիարակչական, հրատարակչական, միջեկեղեցական եւ այլ մարզերէն ներս:

7) Որպէս եզրակացութիւն, Նորին Սրբութիւնը յայտնեց, որ յառաջիկայ օրերուն թեմական ծառայութեան մէջ գտնուող միաբան հայրերուն հետ առանձնաբար առցանց կապ պիտի պահէ՝ մօտէն իմանալու անոնց կատարած աշխատանքներուն ու դիմագրաւած դժուարութիւններուն մասին: Նոյնպէս, Վեհափառ Հայրապետը առցանց եւ առանձնաբար աշխատանքային գոյց պիտի ունենայ թեմակալ առաջնորդներու եւ Ազգային Վարչութեանց ատենապետներուն հետ, որպէսզի անելի ամբողջական կերպով տեղեակ դառնայ վերջին ամիսներու թեմական աշխատանքներուն, ինչպէս նաեւ լիբանանահայութեան օժանդակութեան գծով տարուող աշխատանքներուն:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐԶԱՆԻԿ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ Ի. ՀՈԳԵՒՈՐ ՏԵՐԸ

Երեքշաբթի, 15 Սեպտեմբերին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Վեհափառ Հայրապետը ընդունեց Գրիգոր Պետրոս Ի. Հոգեւոր Տէրը՝ ընկերակցութեամբ Պէյրութի հայ կաթողիկէ թեմի օգնական եպիսկոպոս՝ Գեորգ Ասատուրեանի: Հանդիպման նաեւ ներկայ էին Շահան Արք. Սարգիսեանն ու Մակար Եպս. Ազգարեանը:

Շուրջ ժամ մը տեւած հանդիպման առանցքը դարձաւ Լիբանանի հայու-

թեան վերականգնումի աշխատանքները եւ միջ-համայնքային գործակցութեան կենսական կարեւորութիւնը:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՂՊՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ**

Երկուշաբթի, 21 Սեպտեմբերին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ ղպտի համայնքի առաջնորդ՝ Հայր Թիմոնը:

Հանդիպման ընթացքին առաջնորդ Հայր Սուրբը ղպտի եկեղեցւոյ պետ Ն.Ս. Թաուատրոս Պապին եղբայրական ողջոյնները փոխանցեց Վեհափառ Հայրապետին: Այս առիթով, ան նաեւ բացատրութիւններ ու տեղեկութիւններ տուաւ Նորին Սրբութեան Լիբանանի մէջ ղպտի համայնքին մասին: Վեհափառ Հայրապետը, իր կարգին, իր եղբայրական ողջոյնները փոխանցեց Թաուատրոս Պապին եւ Հայր Սուրբին յաջողութիւն մաղթեց իր նոր առաքելութեան մէջ:

Հանդիպման աւարտին, առաջնորդ Հայր Սուրբը Թաուատրոս Պապին կողմէ յուշանուէր մը յանձնեց Վեհափառ Հայրապետին, իսկ Նորին Սըրբութիւնը՝ հայկական խաչ:

Յայտնենք, որ նոր առաջնորդը ծանօթ է միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին մէջ լայն գործունեութիւն ունեցած է:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՀԱՅՈՑ
ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐՈՒ «ԱՐԱՍ
ՊԷԶԻՔԵԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆ**

Տարուան ընթացքին, Վեհափառ Հայրապետը յաճախակի առիթներով կ'այցելէ Հայոց Ցեղասպանութեան

որբերու «Արամ Պեզիքեան» թանգարանը եւ մօտէն կը հետաքրքրուի թանգարանին աշխատանքներով: Այս իմաստով, 23 Սեպտեմբերին, Նորին Սրբութիւնը դարձեալ այցելեց թանգարանը, շրջեցաւ թանգարանի բաժանմունքները եւ գոհունակութեամբ իմացաւ, որ հակառակ համաճարակին ստեղծած դժուար պայմաններուն, թանգարանը կը շարունակէ հայ թէ՛ օտար այցելուներ ունենալ:

Այս առիթով, Վեհափառ Հայրապետը թանգարանի յուշամատենին մէջ արձանագրեց. *«Այն հայը, որ կ'այցելէ այս թանգարանը, արցունքոտ աչքերով, սակայն իր պահանջատիրական կամքը վերանորոգած դուրս կու գայ: Իսկ օտարը, որ կ'այցելէ՝ իր զօրակցութիւնը կը յայտնէ հայ ժողովուրդի արդար դատին»:*

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԹԵՄԵՐԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊ ԵՆ ՈՒ ԿԵՆՍՈՒՆԱԿ՝
ՀԱԿԱՌԱԿ ՆԵՐԿԱՅ ԴԺՈՒՄԸ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ**

Սեպտեմբեր ամսուան ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իւրաքանչիւր թեմին հետ առանձնաբար աւելի քան ժամ մը առցանց խորհրդակցութիւն ունեցաւ՝ թեմակալ առաջնորդին ու Ազգային Վարչութեան ատենապետին հետ միատեղ:

Խորհրդակցութեան ընթացքին նախ թեմի պատասխանատուները զեկուցեցին կատարուած աշխատանքներուն ու յառաջիկայ ծրագիրներուն մասին, ապա Վեհափառ Հայրապետին փոխանցեցին թեմին դիմագրուած մարտահրաւերներն ու դժուարութիւնները: Այս ծիրէն ներս յատուկ տեղ գրաւեցին լիբանանահայութեան

օժանդակութեան հարցը, «Քորոնա» ժահրի ստեղծած կացութիւնը եւ այդ գծով կատարուած աշխատանքները ու կարիքաւոր ընտանիքներու օժանդակութիւնը: Հայրապետը լսելէ ետք թեմերուն զեկոյցները ու դիմագրուած դժուարութիւնները, իր Հայրական գնահատանքը յայտնեց թեմի կազմակերպ ու կենսունակ կեանքին, ինչպէս նաեւ դէպի ժողովուրդ ուղղուած անոր ծառայութիւններուն նկատմամբ ու բնականաբար անհրաժեշտ թելադրութիւնները կատարեց:

«Բնականաբար թեմերը կ'ապրին տարբեր պայմաններու մէջ, ներքին տարբեր դրուածքներ ունին, որոշ չափով տեղական տարբեր մտահոգութիւններ, սակայն նաեւ ունին հասարակաց եւ ընդհանրական բնոյթ ունեցող մարտահրաւերներ ու առաջնահերթութիւններ: Անհրաժեշտ է նկատի ունենալ տեղական պայմաններուն առընչուած տարբերութիւնները եւ շեշտել ընդհանրական եւ համահայկական բնոյթ ունեցող խնդիրները, երեւոյթները ու ծրագիրները», ըսաւ Նո-

րին Սրբութիւնը:

Արամ Ա. Կաթողիկոս անգամ մը եւս շեշտեց Սփիւռքի կազմակերպչական հզօրութիւն տալու, անոր մարդկային ներուժը համադրելու, համահայկական ծրագիրներու եւ ազգային պահանջատիրութեան գծով կատարուող աշխատանքները ներդաշնակելու եւ Հայաստանի ու Արցախի պետութեանց առաւել հզօրացման նպաստելու անոր հաւաքական յանձնառութիւնը ամրացնելու անյետաձգելի հրամայականը: Հայրապետը խորապէս կը հաւատայ, թէ «Անհրաժեշտ է գաղութները իրենց ներամփոփ ու ինքնակեդրոն վիճակներէն դուրս բերել եւ համախմբել համահայկական շրջագծին մէջ՝ ի խնդիր համազգային առաջնահերթութիւններու իրագործման: Այս յոյժ կարեւոր աշխատանքը կ'ենթադրէ Սփիւռքի վերակազմակերպումը եւ այս գծով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, երեք կուսակցութիւններուն եւ քոյր կազմակերպութիւններուն դերին ներդաշնակումը աւելի քան երբեք կը մնայ վճռական»:



ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 2 ՕԳՈՍՏՈՍ 2020: Գ. ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Զարեհ Վրդ. Սարգիսեան:

ԿԻՐԱԿԻ, 9 ՕԳՈՍՏՈՍ 2020: Դ. ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգչ. Տ. Աւետիք Աբղ. Տէր Կարապետեան: Սուրբ Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս փոխանցեց իր Հայրապետական պատգամը:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Օշին Վրդ. Զուլալերթանեան:

ԿԻՐԱԿԻ, 16 ՕԳՈՍՏՈՍ 2020: ՎԵՐԱՓՈՒՄՆԻՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Անդրանիկ Աբղ. Քիւրիւմեան:

ԿԻՐԱԿԻ, 23 ՕԳՈՍՏՈՍ 2020: Ը. ՕՐ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Յակոբ Աբղ. Եագուպեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեան:

ԿԻՐԱԿԻ, 30 ՕԳՈՍՏՈՍ 2020: Գ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ: ՏՕՆ ԳԻՒՏԻ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ.Վրդ Վարդանեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեան:

ԿԻՐԱԿԻ, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020: Դ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Հրանդ Վրդ. Թահանեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Վաղինակ Ծ.Վրդ Մելոյեան:

ԿԻՐԱԿԻ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020: ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Շնորհք Վրդ. Աշրգեան:

ԿԻՐԱԿԻ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020: Բ. ԶԿՆԻ ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Պօղոս Վրդ. Թինքճեան:

ԿԻՐԱԿԻ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020: Գ. ԶԿՆԻ ԽԱԶԻ: ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան: